


Բարսիլ

ՅՈՒՆԻՍԿՈ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1.- * * *	Յովհաննէս Շիրազ
2.- ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	«Բիրլիական»
3.- Յ. ՅՈՎՆԱԹԱՆ	Բանաստեղծը մտորում է բանաստեղծութեան մասին (Յովհ. Շիրազը պատասխանում է «Գարուն»ի քղբակցի հարցերին)
14.- Վ. ԹԵՔԵԱՆ	Աս էրկիւլի
24.- Մ. ՀԱՃՅԵԱՆ	Քաղաքացի
31.- ԱՐՄԱՆՏ	Գոյնե՛ր, օ՛, գոյնե՛ր
»	Համը կեանքին
»	Ձեռքերիս հետ
»	Վերքն այն խորունկ
»	Փակում եմ աչքերս
»	Սէր
»	Մի Մատնայի
34.- Յ. ՕՇԱԿԱՆ	Սահակ Պարգեւեան
47.- Ս. Պ.-ՏԱՏՈՅԵԱՆ	Շահաձ Ռ. Պերպէրեան Արուեստի էութեան համայնապաշտական տեսութիւնը
55.- Յ. Պ.	Փիքքը Պալազեան
56.- Փ. ՊԱՆԱԳԵԱՆ	Բանաստեղծութիւններ (Թարգմ.՝ Յ. Պերպէրեան)
59.- Ճ. ԿՐԵՓՓԻՆ	Հայկական կուէ
60.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Սամիր էլ-Սայէզ կը պեզէ «տառերու ոգին»
64.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Է. Սարահեանի «Յայզաթիթեռ»ը
65.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Պ. Գուրեղեանի «Պայթում լուծ թեղանօթներու»ն
67.- * * *	Նշմարներ
78.-	Մշակութային լուրեր



Բարձր

ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ և ԱՐՈՒԵՍԻ

Ի Չ. ՅԵՐԵՎ. ԳՆՆԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1984 ԳԼԵԳՐԱԿ

Երբայի ման ախան խոր զայ մեր ժողովուրդը, որքան տեղ գրասան էր ան էր սրտին, լայն տեղ մը, յատկապէս հիանալին հոգի:

Գուցէ զարմանալի թուի, երբ ըսնէք, որ մինչ հայրենի մեր բոլոր գրողներուն համար Համար-նախար 20րդ համազումարին յաջորդող յարաբերական ազատութեան շրջանը ստեղծագործական առումով աւելի բեղուն եղաւ, Երբայի համար, ընդհակառակն, անիկա զարմաւ ինքնակրկնութեան շրջան մը: Ստալինեան մտային փարսաման կեանքով Երբայ անմիջապէս ձեռք բաշխեց լայն ու խոր ընդգրկումներն եւ էր կեանքին վերջին բառորդ զարդ ամբողջութեամբ նուիրեց մէկ լարի՝ ազգային կրօնաստեղծութեան ու վերջին: Այսինքն՝ բանաստեղծի անխառն ձայնը զարդրեցաւ զինք սղելիչէն ու կամաւ զարմաւ հայութեան ազգային արժէքներուն ու բաղադրական բարձունքներուն մտնեալով, լեցնելով էր էջերը Մասիսի, Անիի, Կարսի, Վանայ, Սիփանայ, Ղարաբաղի եւ որբ-բացած միւս վայրերուն հրապարակներով, կանչելով, կարտներով:

Տարբեր, այլ ամենուն ծանօթ պատճառներով, հան թէ հոս մենք մեզմէն պարզուելու վտանգի մը տակ կը գտնուէինք ու մեր գրողներէն ոմանք, եւ անոնց մէջ ամէնէն աւելի Երբայ, լիզրան դիմանալ մեզի պարտադրաւոր ջանքն, անոր յանձնարարներով բոլորեցին իրենց սիրտը եւ զայտաշման սպանալիչը հակակրկելու անդիմադրելի տենեղ մը ստանձնեցին ծառայութեան նոր մեք, ծառայութեան կանչելով նոյնիսկ իրենց արուեստը: Սրտառու է այս միտումը, պիտի ըսէինք՝ զահարելութիւնը, որ ախան խոր տեղ-րազարձ ունեցաւ զանդուաններուն վրայ:

Երբայ կրնար համարուիլ զբազան քանի մը անկրկնելի արժէք եւս զուտարի: Երբ տաղանդաւոր գործերուն վրայ, բայց այդ հաստակա-



նութեան թելադրանքով արդար պիտի ըլլար թերագնահատելի էր գահարելութիւնը, որ մեր պարագային որով է դարձեալ, եղաւ որակ, էր անհնչելի վիշտը, մշտաբարբոջ կարտներուն ու տեսիլներուն ձգողականութիւնը բերք ընդրոց արտերուն պայթեցուցած ըլլալու փաստով:

Յատրդող էջերուն կու տանք էր անխառն ընդարձակութեան մէկը՝ ճիշդիսկանքը, եւ անոր մասին շարք մը յատկանշական վկայութիւններ: Զերմապէս կը յանձնարարենք կարգաւ նաեւ անի տեղին տրուած եւ Երբայի բանաստեղծական ըմբռումները ըստ ամենայնի յուսաւորող հարցադրոյցը:

«Բ Ի Բ Լ Ի Ա Կ Ա Ն»

Յաւը տուեց սարեբին՝
Սարերը շտարան...

Յաւը տուեց մարդուն՝
Մարդը տարաւ:

Մօրս խօսքերից

Երբ անյայտ ոգին՝ աշխարհն արարող,
Որ Աստուած կռուեց դարեր ու դարեր,
Ստեղծեց երկինք, արեւ, ծով ու հող,
Ստեղծեց հաւայն տիեզերքը մեր,
Եւ աշխարհ բերեց բիրտ հողից մարդուն,
Բաժանեց բոլոր իր բարիքն ամեռն: —
Լաշի հրճումներ տուեց երկնքին,
Կապոյտ ծիծաղը ծովին ծառայեց:
Հերձակ ծղիտը սկսեց ձիւներին,
Վեհալքեան խիմար լեռներին տուեց:
Դաշտերին՝ կանաչ ծղիտը զարճան,
Դաշտայր տուեց հաւք ու հովերին:
Հողին՝ բերկրամբր տուեց մայրութեան,
Սիրոյ խայտամբր տուեց ամէնքին,
Ու բոլոր վարդերն իր ուրախութեան
Շաղ տուեց այսպէս ճորատեղծ երկրին:
Բայց վշտի փաշը իրեն մօտ բազեց՝
Ո՛վ չէր իմանում ո՛ւմ բաժին հանէր,
Ո՛վ ունէր մի սիրտ՝ այնքան լայն ու մեծ,
Որ վշտի խայթը անխռով տանէր:
Ու խորեց խորին արարողը մեծ
Եւ անտեսօրէն երկրում բափտեց.
Տեսաւ ցնծում է սիրտը հաւքերի,
Խենթ հասրտրում են գազաններն իրար,
Ու ցրանց տուեց խայթը ցաւերի՝
Տրեւով ցրանց խիմար խելագար:
Եւ իսկայն աշնան տրեւներին պէս
Ցաւից սզացին հաւք ու ծաղիկներ,
Եւ կակաչների սիրտը սեւացաւ, —
Այն օրից իրեց լեզուն կորցրին
Ու դեռ մետում են կազկանով անբառ
Գազաններն իրեց անէծքը լուսնին:
Եւ գրաց ցրանց արարողն, ասես,
Նաշիւով երկրի խրոխտ լեռներին, —
Լեռները, ասաց, հօգք են ու վէս,
Գռռոզ է նրանց կեցուածքն իմ աչքին, —

ԿԱՐՄԻՔՆԵՐ
ՅՈՎԷ. ԵՒՐԱԶԻ
ՄԱՍԻՆ

Կլասիկ կրակներով լեռն է
Յոյ՛՛ն. Երբայք պոզիտիս Ո՛չ
ժխտի Հայաստանի, այլեւ Սո-
վետական Միութեան ամենասա-
ղանկաւոր. Հիանալի պոետներից
մէկն է ես:

Ն. ՏԻՆՈՆՈՎ
(Ռուս բանաստեղծ)

«Սիւմանք»-ու ինչեզարեան
հանճարեղ պատանու անդրանիկ
պոետն է: Ու սպասում եմ արե-
զակին, երբ այս համալիրաբնա-
յին բանաստեղծի բոլոր գործե-
րը կը թարգմանուեն արարելիք,
ինչպէս որ թարգմանուել են աշ-
խարհի կենդանի լեզուներից շա-
տերով:

ՆԻԶԱՄ ԽԱՆԻՍ
(Արաբ բանաստեղծ)

Նախկին անազատան, այժմ
մեծ պոետ է Յոյ՛՛ն. Երբայք՝ Հա-
յաստանի ամենամարտաշունչ
ամենաժողովրդակաւը:

ԼՈՒԻ ԱՐԱՅՈՆ
(Ֆրանսացի բանաստեղծ)



Յովն. Մերազի «Բիրիկական»
 պոեմի մէջ վերածնունդ, չեղա-
 նում է նայ ժողովրդի հանճա-
 րը իր ամբողջական անհղիքա-
 կան զօրութեամբ, իր հոգեկան
 լուսաւորումով, հոգին շքաւոր-
 ւում է, նշմարում եւ յայտնը-
 ւում է երգի ընթացքի ուղի թի-
 ւը, որը «Բիրիկական» պոեմը
 միացնում է Վիկտոր Հիւկոյի
 «Անդիսիկամ» մտերմ պոեմին եւ
 Պի.Մալարտի «Աւարեցիական»,
 մեծ խորհրդագրականներին,
 զմտածում էլի այդ նշանաւոր
 պոեմի յունական վերիստիտու-
 կան արժէքը:

Փիլի ԳԱՄՆԺ
 (Յարեառի զննադատ)



Յովն. Մերազի «Բիրիկական»
 նայ ժողովրդի հոգու հիշ է,
 մտածել, ժողովուրդ, որ արբի-
 ներ շարունակ անարգարացի տա-
 ուղի է զայր ու յանդարձ
 ստորերի հիւանդերում, հիշ է
 մի ժողովրդի, որը 1600 տարի ա-
 ուաջ ստեղծում եւ ցայտուն յա-
 րատեան իր գրեթով ստեղծել
 է զիր, զբանկանութիւն, բարձր
 ճակատի:

ԱՆՄԻՏ ՇԱՄՆՈՒՆ
 (Պարսիկ զննադատ)

Թող էի խոնարհուեմ ու խորհեմ ինձ պէս:
 Ասաց ու վիշտը տուեց լեռներին:
 Եւ հառաչեցին լեռները ցաւից,
 Անէծք ժայթփեցին երաբոխներով,
 Յաւից լանջերին խոցեր բացուեցին՝
 Դարձան անդունդներ ու խորանալով
 Այն սէգ լեռների տանջամբը լացին:
 Եւ արցունքները գետերի փոխում՝
 Իրրու լեռների լեզուն փոփրած՝
 Խոցում լեռների անէծքն են լայիս,
 Իսկ գագաթներին ձիւնն յաւերժացած
 Ասում արցունքն է, որ ցած չի գալիս:
 Քթաց լեռներին արարողն ու մեծ
 Յում առաւ՝ անհոգ դաշտերին տուեց,
 Վերհեր բացուեցին դաշտերի կրծքին,
 Եւ հառաչեցին դաշտերը դարձր...
 Ու դեռ մնում են ճրամց վերհերից
 Անապատները, որպէս սպիներ:
 Քթաց դաշտերին արարողն մեծ՝
 Մոռայ նայելով ծովի ծիծաղին,
 Ասաւ վշտի շանքն ու ծովը մտնոց,
 Ու ծովն անդնդից ելաւ կատաղի,
 Մինչեւ աստղերը ծառս եղաւ ցաւից,
 Այնպէս ծառս եղաւ, որ կռակներին
 Մասները կարծես աստղերն էանցին՝
 Որպէս երկնքի աչքերը անգութ,
 Որ նայեպէս լացին...
 Այնպէս ծառս եղաւ, որ յատակներից
 Բարոցած արցունք՝ աւազն երեսաց,
 Դարեր մոլեգնեց ու հետքը ցաւի
 Այիքների մառ կնճիւր մնաց՝
 Եզծելով չքնազ երեսը ծովի:
 Ծովին էլ գթաց արարողը լուս,
 Յում առաւ ծովից՝ երկնքին տուեց:
 Անպերով գառաց երկինքը գարեուր,
 Յաւից անձրեւը կարկուտի փոխումը,
 Անէծք կայծակեց ու լացեց անյոյս,
 Ու մնաց լուսինն աչքում երկնքի,
 Որպէս մի շիթը սառած արցունքի:
 Իսկ յաւերժական ցաւից հալածում
 Աստղերն այն օրից սառալներ դարձան
 Թումն ու մեռան իրար գրկի մէջ,
 Եւ դարեր ցաւը երկնքում մնաց՝
 Տրեց աստղերի դաշնութիւնը սերն:
 Ու ցաւն տանելով արարողն էլի
 Խորհում էր՝ ո՞ւմ սար, որ գէթ մի գիշեր
 Անխում տաներ պարգեւն տեալի,
 Որ, աւա՛ղ, ինքն էլ չէր կարող տանել:
 Սակաց, քէ ցաւը կը մնայ իրեն...
 Սակաց, քէ ցաւը կը մնայ իրեն...

Ո՞ւր տար աչս անգամ՝ խորհում էր, նայում,
 երբ տեսաւ մօտիկ հովտում՝ տարօրէն
 ժպտում էր մարդը՝ վագրի ճանկերում,—
 Մարդ, որ դեռ վագր էր վայրի փարայրում...
 Տեսաւ, խաղաղուեց խռովեալ ոգին,
 Եւ ասաց՝ լոկ սա կարող է տանել,
 Ու մարդուն տուեց վիշտը երկրային
 Եւ ինքը թեթեւ սլացաւ եթեր...
 Եւ ծնուեց մարդու դեռ վայրի սրտին
 Ցաւի զգացումն ու անը մահուան,
 Եւ մարդն այսուհետ յէջ նայեց վագրին՝
 Արելով աչքը ծանիֆի նման։—
 Այդ ցուն էր մարդու աչքերը բացեց,
 Եւ մերկ ուղեղը զգեցած անով՝
 Ջգաց, որ մահն է վիշտն ամենամեծ
 Եւ կռուի ելաւ մահուան դէմ մահով,—
 Գերեզմանի դէմ դնելով մանկան
 Ոսկի օրօցէր՝ իր յոյսն օրօքեց,
 Իր մահը դարձրեց գոյի հալածում՝
 Ու սերնդաշար ապրեց վերստին՝
 Տանելով դժնի վիշտը մօր մահուան,
 Դիմացաւ արդոց անհետ կորստին,
 Տարաւ դառնանալ տուգանքը սիրոյ,
 Տոկաց բնութեան իօլ աղէտներին,
 Ու լցուած կեանքի ծագաւտաւ սիրով՝
 Դիմացաւ այրող վերքերի ցաւին։
 Բայց իր թռչնի հետ վիշտն էլ մեղր ունի՝
 Եւ առաջատը քացեց մտածման
 Վիշտը՝ մեծ դայեակն իր մանուկ մտքի,
 Վիշտը, որ դարձաւ յոյսի օքելում...
 Ու երբ նորախոն մարդը մի վայրկեան
 Առաջին վշտերն յոյսի մէջ խեղդեց,
 Ոգին հիացեալ յայտնուեց անմայն՝
 Գոյութեան կռուի ցաւերն էլ տուեց։
 Բայց մարդը կրակ պակեց ժայռերից
 Լոյսի ծնունդով ցաւերը մեռցրեց,
 Ու կենաց պտուղն համապագօրեայ
 Իր տառապանքի անտառում գտաւ,—
 Ու ոգորանքով յարթեց այն վշտին,
 Որից իօլական մամուսը կորաւ...
 Եւ դարեր ծիսաց սիրտը մարդկային,
 Լցրեց տիեզերքն իր վշտի ծխով,
 Բայց չկորցրեց իր յոյսն աստղային
 Եւ իմաստութեամբ իր նորարարօջ
 Գարբեր գուպարեց իր նմանի դէմ,
 Որ լուծ էր դարձել իր բիւր ուսերին,—
 Մարդը մարդուն գալլ որկորով դժխեմ...
 Բայց անագորայն ոգին նորից նար՝



*Միայն մեծ վշտից յառնուած
 ազգի գաւառը կարող էր երկնել
 ճիշդ իրանկանքը։ Պոեմի սրանչեւի
 երեսը համամարդկային խաճն է,
 աստուած՝ խորունկ ազգային ցաւ-
 ւէր։*

Բ. ԿԾՄՊԱՐՍԿԻ
 (184 պրսպ)



*Յովհ. Շիրազը ժամանակակից
 անգուզական բանաստեղծ է, ար-
 քան է համաշխարհային մրցանա-
 կի արժանի (Քերթովական ար-
 լեստի կալուածքին մէջ)։ Նրա-
 նով կը ճանչնան հայութիւնը,
 հայ թուրքին, հայ մարդին ու հա-
 յոց հանճարին։*

Ս. ԳԱԼՍԵԺ
 (Ապանայի Թարգմանիչ)

Անկէ զան շորս աստեանակ
ժամանակակից հայ բանաստեղ-
տութեան համաստեղութեան մէջ
որպէս յանբնական աստղ է
լուսնուս Յովն. Երբայք աս-
ղանքը:

Նա տեղիքիւն է պոեզիայի աշ-
խարհում: Ինքնատիպ ու իւր-
բնակ, մեծ ու խոր՝ ինչպէս
ժարդկային ներաշխարհը, պար-
ծառ ու բնորոշ՝ ինչպէս աստեան-
դաւոր հայ ժողովրդի ներկան ու
վաղուայ օրը, ներքնուրք լիբի-
կայն ու բազմախորհուրդ ժառե-
րի յոխուան հաղորդումով, որ
փոխարկւում է մեղեդու, երա-
ժանուած երանգների անզուգու-
հան զուեւուորմամբ:

Նա պոետ է իր ոչ չէն Լուսնամբ,
միջին ուղն ու ծուծը: Գրիք մի
լարժումով բանաստեղծորէն լըն-
յաւորում է աստղան ու երե-
ւոյթը, շիրմացնում, մարդկայ-
նորէն հասկանալի զարմուած ա-
նըմունքի ու աննկատելին:

Ամէն ինչում իւրօրինակ է, չի-
բազանան:

Գիտէ սիրել մեծ, անզարկակ
սիրով: Նրա յորդարտի զեարե
լարերը — Ան-Մասիս բար-
ձունքներից կամար են կապում
հայրենի երկրի վրայ:

ՄԾՐԻՄ ՓՈՅՆԻՇՎԻԹ
(Վրացի բանաստեղծ)

Մարդու մէջ քամեց գետերով պզտոր
Իր տիեզերքի ցաւերը բուր,
Եւ հրամայեց ազա մայր հողին,
Որ մարդու ազնւի բարիք չփռէ,
Եւ անապատի փոխուեց տխրագին
Մարդու աչքի դէմ դաշտը գմբուխէ,
Այնպէս տաշտուեց եւ հողն աշխարհիք,
Որ անապատում օճն էլ իր ձագի
Աչքի արցունքը ծարաւից խմեց...
Այնպէս, որ ծովն էլ շոգից կարկամեց:
Բայց ինչքան շատ է մարդն իմաստանում՝
Իր ցաւերն այնքան հեշտ է դարձանում:
Ու մարդը խորեց եւ մառ դաշտերից
Փախած գետերը ձորերից կանց՝
Եւ անապատում դաշտերում սփռեց՝
Եւ գինի քամեց դաժան դաշտերից,
Եւ մեղրագետեր քրտինքով քամեց:
Եւ դժնեւտելի հագետերով ելաւ
Պեղեց ծովերը, լեռները պեղեց,
Աստույ թափցրած գանձերը գտաւ
Ու մտի՛ն ձեռքը աստղերին մեկնեց՝
Եւ լուսնի վրայ մահեր նշարեց...
Եւ կեանք նշարեց աստղերի վրայ,
Եւ մահուան անից իմաստանալով՝
Գտաւ հիւլէի հողովումն անմահ,
Եարժմունքն անընդմէջ ու դարեր խորեց,
Զգաց, որ երկու անգամ չի կարող
Անցնել նոյն զրով նոյն գետի՝ անցնող:
Զգաց, որ մահը ե՛լ կայ, ե՛ւ չկայ,
Որ նիւթն, ինքնագոյ, շարժում ինքն իրեն,
Մեղմում, եւ հրաշք՝ ծնւում է նորէն:
Որ ոչ թէ Աստուած ստեղծեց մարդուն,
Այլ մարդն իր անից ստեղծեց Աստուան-
Գարբի մթնում իր խարխափանքի,
Նիւթին անգիտակ՝ նա երկնեց ոգի-
Եւ կայր խնկարկեց պարսմանքն իր ունայն,—
Մարդը, որ ծնուեց ծովափնայ տիզմից
Ու դարձաւ միակ խոնր բնութեան, —
Կռահեց, որ հողն է անիւնն արեւի
Եւ եղի է, կայ, անստեղծելի,
Ու անեղծելի, ու դարեր խորեց,
Եւ իմաստութեամբ իր լուսարարութեան՝
Իր արցունքի պէս սրբելով թնկնեց
Իր ցաւերի հետ ցաւերն ընկերաց:
Եւ կործանելով իր մէջ գազանին՝
Նա իր մէջ գզաց երազներ վտնմ,
Լայր զարձակելով իր սպիտակին՝
Անցաւ ցաւերի ճամբէքը դժիւն, —

Նայն ծաղկից քէ՛ քայն, քէ՛ մեզը ճաղից,
 Եւ Աստուաց հզօր՝ ինքն էլ արարեց
 Ձեզած երաշքներ աշխարհի վրայ,—
 Իր արարչութեամ խնդութեամբ խեղճեց
 Մարդը քիւր դարեր քիւր ցաւերն իրա։—
 Մարեց կրակով իր ստեղծագործ՝
 Ցաւերի ծովը իր սի բաւ սրտում,
 Եւ տիեզերքում լոկ մարդը՝ անեղծ
 Վշտին յաղթելով՝ դարձաւ իմաստան։—
 Այդ աշխատանքն էր, որ ինչպէս դարբին
 Կտեց ու կափեց հոգւերի սպին
 Բիրտ անբռնից մարդ ու մարդուց Աստուած՝
 Գազանի ցանկից մինչ սաստիկն հասած...
 Եւ վերջին անգամ ոգին յայտնուեց՝
 — Գու, տեսց, մարդուն, վշտին յաղթեցիր,
 ժառանգիր անա տիեզերքն իմ մեծ —
 Գու մտի բազով իր արժան դարձիր։
 Վշտին յաղթողը իշխանն է խիճդի,
 Իշխիր գաղտնալից տիեզերքն համայն,
 Ինքն ստեղծիր հազը դրախտի
 Եւ սնիր, որ յար վայելես նրան,
 Որ վշտի գետերն էլ չծովանան։
 Իշխիր ծովերի մտայլ յատանում,
 Իշխիր ինքն էնդ ու վագրին իշխիր,
 Իշխիր դու երկրում, իշխիր երկնքում,
 Մրցիւմից մինչեւ սաստիկին իշխիր,
 Եւ ինչ որ քա դէմ գազանիք թռչեցի՝
 Պեզիր տիեզերքն՝ յայտնութիւն դարձրու,
 Դու՛ հրաշքներես հրաշքն իմաստուն,
 Թող վիշտ ու խիճդ տնքածան լինեն՝
 Ինչպէս կակայի կարմիրն ու սուր —
 Եւ թող յախտեան ախոյեան՝ բախտեն
 Վիշտն ու խիճդը քա՛ քա մանն ու սէրը...
 Եւ թող յայտերս էնդ ապուհինն,
 Եւ քէ արտասուես՝ թող քա արցունքից
 Գոնար խաղաղի ռոկայցներ ծնունն,
 Թող նար հրաշքներ ծնունն քա ձեռքից...
 Եւ իմաստնացած կը գնա ալգուէս,
 Դարերի անտես սանդուղքով կ'ելնես
 Դէպի կատարը կատարելութեան,
 Որ միգօրէի արեւի հման
 Փարստես մաւրը ոգուդ յարութեան,
 Եւ ազանմաս քա նմանի դէմ,—
 Որ քա նմանի վիշտն էլ նաշակես
 Ու նոր լինես մարդ ու ծաղկես որպէս
 Ազնի խոսցուածքն անեղ բնութեան՝
 Հասնելով ոգու ներդաշնակութեան։
 Իսկ ծաղկներից՝ շունչն անմահութեան,

7

Շիրազի «Բիրլիադան» պոեմը
 Հայ գրականութեան մէջ անու-
 մոր երեւոյթ է, փիլիսոփայական
 իմաստով շարժանց խորը. նա
 միտածանակ ունի բարձր գե-
 յարուհետական գրականի բոլոր
 արժանիքները՝ Շիրազի բնորոշ
 դասակերպիչ թարմութիւնը եւ
 սրբիխալութիւնը պարզանում
 են այս պոեմում, այդպիսի գու-
 զակցում են նաեւ համեմատու-
 թիւններին, անպատեհի հակա-
 դրութիւններին հետ։ Շիրազը մեր
 ուրախ է խօսում, ինչքան ազա-
 յին, այնքան համաժողովին է
 նա՛ «Բիրլիադանից» եւ զեղբո-
 ւեսական մեծ հանրա ստացայ։

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

■

Շիրազի «Բիրլիադան» պոեմը
 բացառիկ գործ է ոչ միայն միա-
 թեանական, այլեւ համաշխարհու-
 յին գրականութեան մէջ։

Մ. ՇԱՀԻՆՅԱՆ

■

Համալիրաբանական գրական գու-
 րամանք է՞ կարգադրանք, ես ճան-
 արեմ սեղ հը սուրբ շեղադրանք-
 առջև, թիրիխականքն եւ այլ
 բանաստեղծութիւններէ՛ թիր-
 իտիանաջը համակարգի սուրբը
 ունի, փրկիտփայլական ճան սու-
 ղանդի գործ է: Խորիմաս թիր-
 իտիանայի, ծաղկաբոյր շեղի-
 գարնէն եւ ժրու պոստներէ հ-
 իտաք շեղիանիւ Հոկտեմբերիան
 ստեղծածն Հայ լիբիկն է:

Յովհ. Երեւոյ Հայ Ժողովուրդի
 վշտի զարաւար ժողովուրդից Ծա-
 ղան սուրբն է. (Շեք շեղան
 ստաղ էիր մասնաւորում երա-
 գի) թիրիխական պոստը զՇԵ-
 րան է վայրի ստաղիսով:

ԱՂ. ԻՍԱՀԱՆԵԱՆ

■

Թիրիխականում իրոք Համա-
 ժողովուրդի Հարց է լուսնուում:
 Եթէ Հարց լինի ժի քանի իտաքով
 մեակերդիլու պոստի յայտումը:
 սուր կարող ենք սանջ՝ մարդու
 բանականութան զովք, մարդու
 կային ունի, անպարտիխա-
 թեան, ստեղծադրանական ան-
 սահման կարողութիւններ պոս-
 տական ուղիւնում փաստաբ-
 անում:

Ս. ՍՈՂՍՄԱՆԵԱՆ

Որպէս նոր գիմի, իցի դու գտնես,
 Ըմպես, որ շիջնես ձորը ծերութեան,
 Որ կեանքով լցուես ու մարից ելնես
 Կանաչ սարերը քաղաքանաւորեան,
 Որ տիեզերքում լոկ ինքն լինես
 Յաւերժ տիրակալն յաւերժ բնութեան...»:

Եւ լուց յաւես ու մարդու սրտի
 Հովիտներն իջաւ, ընկնող աստղի պէս,
 Մարդուն թողնելով սանդուղքն աստղերի,
 Որ մարդն հասկացաւ անբարբառ լեզուն
 Մեծ իմաստութեան ու տիեզերքի:

Ու ողբ բնութիւնն ապշեց մարդու դէմ,
 Մովերն աչք դարձան մարդու դէմ ապշած,
 Եւ դարեր անա մնացեր են բաց:
 Երկնակամարն էլ յօնքն է՝ վեր քաշուած՝
 Յախտեան ապշած մայր տիեզերքի
 Արեգակնաբիր կապուտակ աչքի...
 Բայց իմաստնացած մի պարմանի պէս՝
 Մարդն էլ իրենով հիացաւ կարծես,
 Ու մեծ տենչանքի ու կրքի ճամբով
 Ելաւ փնտռելու իր ստեղծողին,
 Տիեզերախոյզ մտնով քափառեց,
 Հիւլէից հարցրեց, հասաւ աստղերին,
 Հազար մի շեղած հրաշքներ երկնաց
 Ու ձգտեց հասնել իր ստեղծողին —
 Չափուել նրա հետ,
 Գտնել Աստղուն՝
 Պեղելով նրա անդժուածը մեծ...
 Կասկածեց, յուսաց ու դարեր փնտռեց,
 Ու աչքն աստղերից ուղղեց արեւին՝
 Ի՛նչպի լուսեղէն հրաշքը ձգտեց՝
 (Իր վայրի քարայրն յախտեան թողած
 Այն վաղեմական խաւարի հովտում
 Անբան գազանին՝ լեզուն կորցրած)...
 Իսկ բարձունքներում լայնքով լցուեց
 Դեռ վշտի սափար սիրտը մարդկային
 Արեւի ծամբին, ուր դարեր փնտռեց,
 Ու երբ չգտաւ՝
 Այն Թիրիխական
 Յարդաւազն արած իր մտքի ճախրան —
 Ու երբ չգտաւ՝ Ելաւ նարայտեմ՝
 Էլ չապաւինեց նա ոչ մի աստժոյ
 Ու ոչ մի ոգու, որ իբր տնի
 Տեսիլն էր անգոյ՝ այս տիեզերքում —

Այնինչ՝ միրտում է Աստուած՝ իր հոգում:

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՄՏՈՐՈՒՄ Է ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ՅՈՎ.Ն. ՇԻՐԱԶԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է
'ԳԱՐՈՒՆ'Ի ՔՂՔԱԿՑԻ ՀԱՐՑԵՐԻՆ)

— Սիրելի Յովհաննէս Շիրազ, Ձեր կարծիքով ի՞նչ է բանաստեղծութիւնը:

— Ինչ որ կարօտն է՝ կարօտ մօրը, կարօտ հայրենիքին, նայած մարդու հասակին, կարօտ սիրոյ, սիրածի: Բանաստեղծութիւնն այն է, ինչ որ սոխակն է թռչուններին մէջ: Սոխակի այն պահը, երբ հառաչում է ինչ-որ մէկի կարօտից: Ան ինչպէս որ անթարգմանելի է սոխակի երգը (այսինքն՝ աղանձին եւ անգղը շէն կարող նոյնութեամբ կրկնել սոխակի երգին քաղցրութիւնը), այնպէս էլ անբացատրելի է բանաստեղծութիւնը: Ի հարկէ հեշտ է ասել, որ նա պէտք է ունենայ արտաքին յանգեք, ներքին վանկեր, պատկերներ, համեմատութիւններ, բայց դա քիչ կը լինի: Էլի ծարաւ կը մնայ լըսողը, թէ ինչ է բանաստեղծութիւնը:

— Եթէ կարելի է, աւելի պարզեցրէ՛ք Ձեր միտքը:

— Աւելին այսպէս է երևի՝ ասենք մեր առջև կանգնած է մի 18-րդ դարի գեղեցիկ անգլիացի արձանագրուի, կը գրկե՞ս նրան՝ մենակ որ հանդիպես մութի մէջ:

— Ի հարկէ ոչ:

— Այդ զօրէի մէջ է դադանիքը, թունի որ այդ նոյն անգլիացի կենդանութեանը եթէ հանդիպէիր, չէի՞ր ուղի գրկել: Անպայման: Ի՞նչ է պատճառը: Կենդանութիւնը, արեան սրբազան զաղանիքը, արին, որ շուրթերը փոխարկել է ամբաստանող կեռասի, արին, որ աչքերի միջով յոյզ ու զղացմունք է ցայտեցնում: Անսայտ է բանաստեղծութիւնը իմ կար-

ծիքով: Այն, որ քաշում է մազնիսի պէս, կանչում է պատանի աղջկայ աչքերով:

— Այդ բոլորը դասակամի՞ մէջ է:

— Անշուշտ:

— Իսկ ի՞նչ կ'աւելիք բանաստեղծութեան հմի եւ մորի մասին:

— Ես մի բանաստեղծութիւն ունեմ, որը վերջանում է հետեւեալ տողերով՝

Դեռ ինչ աշխարհ էլ այս աշխարհը գայ,
Քառնասի համար հին ու մոր չկայ:

Այսինքն՝ հազար տարի առաջ բացուած վարդը նոյն բուրմունքն է արձակել, ինչ որ այսօրուայ վարդը: Հազար տարի առաջ շուշանը ճերմակ էր, այսօր էլ ըսպիտակ է: Հազար տարի առաջ էլ մեղուն մեղր է քամել ծաղիկներից, ինչպէս այսօր էլ... Հազար տարի առաջ էլ աղբիւրներն իրենց անցած ճանապարհների հանքաբայրերով են օժուել... Եւ այսօր էլ այդպէս է, յաւիտեան էլ այդպէս կը լինի: Միշտ անձրեւը երկնքից պիտի գայ, ծիւն էլ հողից ելնի: Իրա համար էլ բանաստեղծին դարերով աստուածատուր են ասել:

— Իսկ մորաբարութիւնը մտնում է դրա մէջ:

— Միայն խոհերով աւելցուն տողերը բանաստեղծութիւն չեն կարող կոչուել, ինչպիսի խոր մտքեր էլ որ տողաշարես, դարձեալ հաշմանդամ է այն իբրև բանաստեղծութիւն:

Արիստոտելն ասում է, որ բանաստեղծութիւնը պիտի լինի այնպիսի, որ բանաստեղծը իր կարծիքով ինչ-որ մէկին կ'աւելիք բանաստեղծութիւն:



տեղծութիւնը միտք է, բայց միտքը բանաստեղծութիւն չէ, ինչքան էլ որ նշանի ու տքնի խորացնել... Ես էլ մէկ ուրիշ համեմատութեամբ ասեմ. եթէ այդեպանք խնձորները ճեղքի եւ բոլոր կտերը (սերմերը) հաւաքի մի պարկի մէջ, տանի շուկայ եւ կանչի՝ խնձոր, խնձոր, լաւ խնձոր, ո՞վ կ'աննի: Տեսնելով միայն խնձորի կուտը մարդիկ չե՞ն ծիծաղի: Այսինքն՝ ինչպէս որ խնձորն իր կորիզներով, իր կարմիր կամ վարդապոյն հոտուէտ մաշկով, որ քեզ կանչում է պատանի աղջկայ աչտերի նման, իր քաղցր մրսեղէնով է խնձոր՝ լիբ, լիբ, անթերի, աստուածային, այդպէս էլ պիտի լինի իսկական բանաստեղծութիւնը: Կորիզը, որ միջքն է բանաստեղծութեան, պիտի լինի թաքնուած խորքում, ոչ թէ կոպտորէն ցցուի ու վաճառքի հանուի... Եթէ միայն միտքը բանաստեղծութիւն լինէր, Արիստոտելը ամենամեծ բանաստեղծը կը լինէր, ինչպէս ինքն է ասում:

Մարդիկ արմատը միտքն է, որը որպէս ծաղիկ չես հոտոտի, այլ ծաղիկն եւ սեղմում կրծքիդ: Բանաստեղծութիւնը

ծաղիկն է, որը իր մէջ է թաքցնում արմատը՝ միտքը:

Նորարարական գործածքները շատ բան են կորցնում. նախ՝ պարզութիւնը, եթէ խորութիւնը կայ եւ պարզութեան բացակայութեամբ, ապա այդ խորութիւնը շատ քիչ է խնկելի: Իմ կարծիքով պէտք է լինի ինչքան պարզ, այնքան խորը, ինչքան խորն է, այնքան պարզ: Այսինքն՝ ոչ միաշախի: Մի ծնոտով չես կարող մարմինդ ապրեցնել: Բայց չժողոված նաեւ մողեսնի մեծ կորուստներէց մէկը՝ բանաստեղծութեան երաժշտականութիւնը, որը՝ ինքնին արդէն բանաստեղծութեան թագուհին է:

Իմ կտրծիքով նորարարների զլխի բաժակը ինչքան լցւում է խոհերով, այնքան դատարկում է սրտի բաժակը զգացմունքներից, շորանում է երգը:

- Արեւն, դուք նորարար չէ՞ք:
- Ե՛ւ եմ, ե՛ւ չեմ: Իմ ստեղծագործութիւնները խոր պրպտողը իցի. թէ հաստատի այս միտքս: Բնութիւնն այնքան յանրաժան է իր բազմահազար մեների մէջ, որ կարծես նորարարութիւնն

ուժից պակաս մարդկանց յորինածն է՝ որպէս պաշտպանութեան զէնք։ Նորարարութիւնը գիտութեան մէջ երեւաց։ Մարդը հասաւ լուսին։ Բայց Պառնասոսը չըկայ ոչ մի բնարուի բանաստեղծ, որ հընադարեան բանաստեղծներից էութեան մէջ շատ բանով տարբերուի։

— Գրաբնագատներից շտաբ ասում են, քէ այս կամ այն գրողի լեզուն է մեր բնդեանուր լեզուն։ Ի՞նչ կ'առե՛իք այս մասին։

— Այդ մասին ես գրողների համագումարներից մէկում կըլլի՞ ունենալիս տասրէ հետեւեալը։ Ոչ մի գրող չի կարող իր մէջ ամբարեւ ամբողջ ազգի հարատւութիւնը։ Մեր հայոց լեզուն ոչ թուամենեանինն է միայն, ոչ Իսահակեանինը, ոչ Տէրեանինը, ոչ Դանիէլ Վարուժանինը, ոչ Սայաթ-Նոյայինը, ոչ Պեարոս Գուրեանինը եւ ոչ էլ նոյնիսկ մեծահասակ Երանդակցունը, այլ այս բոլորի լեզուափունջն է հայոց լեզուն։ Այնպէս, ինչպէս մի խումբ պատանիներ զաշտերից վերադառնալիս ծաղկեփնջեր են բերում՝ մէկի մէջ վարդն ու սուսամբարն է շատ լինում, միւսի փնջի մէջ բացակայում են լինում։ Մի օրիչ մանուկի փնջի մէջ նուազաքանակ ու նարդիքն են առատ բուրում։ Մէկ օրիչի փնջում իշխում են ծեթոտներ, զինարքը։ Այնպէս որ, մեր լեզուն մեր ազգի բոլոր գրողների բառապաշարի միասնութիւնն է։

Ամէն մի մեծ գրող մի յորդառատ դեպի է նման եւ բոլորը միասին տարբեր լեռնաբարձունքներից գալով՝ ստեղծում են ծով-մայրենին։ Ինչո՞ւ այս կամ այն բանաստեղծին ինկարկելու համար աղբատացնենք մայրենին։ Այստեղ ես յիշեցի աշխարհահռչակ օտարազգի հայագէտների Անտուան Մէյլին, Իսիֆ Մարկի-Վարտին, Գուլմիդարին, Լանդուային, օրոնք հաստատել են, որ աշխարհէ 2700 մայր լեզուների մէջ հայոց լեզուն իր բառապաշարի հարստութեամբ, հնչողութեամբ, նրբութեամբ եւ պատկերաւորութեամբ հինգ լուսագոյններից մէկն է։

— Ազգայինի եւ համամարդկայինի մէջ ի՞նչ տարբերութիւն էլ գտնում։

— Գրեթէ ոչ մի տարբերութիւն։

Հայ մարդու որդին երբ մահանում է, ծնողները չեն ողբակոծում, ինչպէս վերացու որդին մահանալիս՝ նրա ծնողները։ Երբ ծնւում է Փրանսիացի մանկիկը, ծնողներն այնպէս չեն ծափահարում որտէ մէջ, ինչպէս հայ ծնողները հայ մանուկ ծնելիս։ Ազգերը ինչքան որ տարբերում են իրարից մեւերով, այնքան էլ միանման են՝ թէ նայես համամարդու խորքը։ Ակայ մի ազգ, որի արիւնը կապտազոյն է, միւսինը՝ դեղին։ Եւ քանի որ բանաստեղծութիւնը յոյժ անկեղծութիւն է եւ յոյժ զգացմունք, ապա հայոց բանաստեղծութիւնը կարող է յուզել նաեւ Փրանսիացուն։ Վերջինիս բանաստեղծութեամբ ես էլ եմ յուզում։ Գէօթէի «Վարդանով ո՞ր հայ մարդը չի հմայում։

— Իրաւ, այժմ ես յիշեցի Ձեր պանծներից մէկի մասին Փրանսիացի ակադեմիկոս գրաբնագատ Պիեռ Պարտիի խօսքը։ «Յ. Երրագի «Աստուայ գրու-գործոցը պոեմը շնչում է հիւզոյական համաստեղծութեամբ, հեղինակն իր քարով կապում, նոյնացնում է Հայաստանի քարերգութիւնը տիգրբակունին (համամարդկայինին)»։ Այս կարծիքը հաստատում է Ձեր միտքը։

— Ի հարկէ, եթէ ամէն մի ազգային ստեղծագործութիւն համամարդկային չլինէր, ինձ ու քեզ չէր յուզի Ծիբղուսին, Փրանսիացիներին չէին յուզի Նարեկացին ու Քույակը։ Բայց, այնուամենայնիւ, եթէ ամէն մի ազգ իր ինքնուրոյնը չլինէր բանաստեղծութեան մէջ, նա դիմազուրկ, հոգեզուրկ կը լինէր։ Նոյնիսկ Հայաստանի եւ մեր հարեւան Վրաստանի խաղողների զոյների ու համի մէջ տարբերութիւն կայ։ Երկու զեռակ նոյնանըման լին կարկաշում։ Էլ ուր մնաց երկու ազգի երգերը, արուեստը։

— Ձեր կարծիքը ռեպիզմի եւ սոցիալիզմի մասին։

— Եթէ որեւէ ստեղծագործութիւն յուզում է մարդուն, այն իր մէջ կրում է երկունն էլ։ Զգացմունքից զուրկ ստեղծագործութիւնը փայտակերտ է, թղթէ վարդ։ Ո՞ր գանգն է հնչում Առանց լեզուակի գանգը չի հնչում։ Հարկաւոր է հարւած ու հարուած՝ զգացմունք եւ դարձ-

եալ զգացմունք, ինչպէս որ զանգի լեզ-
 ւակն է որտի պէս խփուելով զանգի կըրծ-
 քին հանում զօղանջ կամ հառաչ, շը-
 շունջ կամ ժռունչ, այդպէս է լինելու ար-
 ևեստի ինքնաբերական գործը: Ի հարկէ, ի-
 րականը սովորաբար շարաւորով է ընդու-
 նելի: Եթէ զանգի լեզուակը ոչաւիզմն է,
 ապա զանգը սովորաբար է:

— Ձեր գործերն արդեօք ճշգրիտ են
 հասկացուել եւ գնահատուել:

— Թոյլ տուր տոանց որեւէ կեղծ հա-
 մաստեօթեան տակ, որ իմ պատանեկու-
 թիւնից մինչև հիմա, այսինքն՝ տակի
 քան իմ գրական 45 տարուայ մէջ հիւ-
 սասեմ ծիւղանի մէջ կամ երկու զոյնն են
 միայն գտեսել: Եւ տակ: Մասնաւորա-
 օքէս, քննադատները չեն խորանում միւս
 զոյններս մէջ: Այն, որ ես ո՛չ միայն Մա-
 սիս եւ Արագած եմ երգում, ո՛չ միայն
 Անի ու Վանայ ծով եմ հառաչում, այլև
 «Աստուծոյ գլխի-գործոց» պոեմն եմ գը-
 րել: Նոյնը պիտի տեսնէ ընթերցանք հա-
 մասարդիպիան պոեմի մասին:

— Դժուար է հասկանալ Ձեր դժգո-
 հաւքիւնը. չէ՞ որ սեր գրքերը, նոյնիսկ
 հարիւր հազար տպագրուածով երատա-
 րաւորւիլիս, ամբիջալիս սպաւուսմ են,
 ինչպէս սովի մասնատկուայ մասնատ-
 րը: Մի՞թէ սա լուսիւն է:

— Ի հարկէ ոչ: Ես գրաքննադատնե-
 րի լուսեօթեան եմ ակնարկում: Իմ կար-
 ծիւղով, ի հարկէ, նրանց մէջ կան նաեւ
 այնպիսիք, որ լուսն են ընթերցող ծովի
 ձայնը: Մի ուրիշ ախուր օրինակ եւս.
 Խաղաղութեան մասին ամէնից առաջ ես
 եմ գրել ոչ միայն բանաստեղծութիւն-
 ներ, այլևս պոեմ: Նկատի ունեմ շեղու
 խաղաղութեան պոեմը, որը կըրում է 14
 էջի վրայ տակի քան 360 սող: Ոչ մի
 քննադատի գրչի բերանից մի շնուկ էլ
 դուրս չթուաւ:

Միակ արդարութեան ոսկէ կշեռքը
 ժողովուրդն է: Քննադատը մի անց է,
 ժողովուրդը՝ վիթխարի մաղ, երկնամաղ:
 ... Բնութեան մէջ էլ է այդպէս. սարի
 այս կողմի լանջը ծաղիկապարդի բազմա-
 զոյն թղթէ ծաղիկներով, միւս լանջին
 լինեն իսկական բնական ծաղիկներ եւ
 տես, թէ ինչ կ'անի մեղունների բնազդը,

— Իմաստուն մեղունների պարսերը հեռ-
 ւից զաւով պարկում անցնում են թղթէ
 վարդերի գլխով, իջնելով միւս լանջի վը-
 րայ, ըմպելով նեկատարը: Այդպէս էլ ժո-
 ղովրդի մաղի անմշակն անցնան է, որը
 երբեք չի սխալուսմ, նա յաճախ թողնե-
 րով Շիրազներին, կըրում է Նարեկացիե-
 րի, Շէջթալիներին, Ֆիրդուսիներ բար-
 ձունքները:

— Որքան մեզ յայտնի է, Ձեր «Բեր-
 լիական»ը, «Աստուծոյ գլխի-գործոցը»,
 «Հայոց Գանձականքը», «Քնար Հայաս-
 տանին», «Յուշարձան մայրիկիս», «Սխա-
 մանթօ եւ Յիշգրէս»ն քարգնամուել են
 ո՛չ միայն ասուերէն, այլև՝ ֆրանսերէն,
 արաբերէն, պարսկերէն, անգլերէն, չե-
 խերէն, չիմարէն, վրացերէն, էրպերէն եւ
 քաղմաթիս այլ լեզուներով: Ինչպէ՞ս են
 քարգնամուսմ:

— Երանի բազում լեզուներ գիտենա-
 լի, որ գոնէ զո այս հարցի բաժակը լեզ-
 ւեցուն լցնէի: Եսա եմ ցաւում, որ բազ-
 մալեզուապէս չեմ: Սակայն երբ իմ գրա-
 կան հանդիպումը կատարուեց Սրեւանի
 օտար լեզուների ինտիտուսում, մի
 իւրեք ուսանողուհիներ արաստանեցին
 թարգմանուած բանաստեղծութիւնների-
 ցոս եւ հաստատներ պոեմներից: Եւ պի-
 տի տեսմ, որ ականջերիս շտա դուր ե-
 կան, գրեթէ բոլորն էլ դուր եկան: Կար-
 ծես լուսն էի նրբին երաժշտութիւններ
 տարբեր գործիքների վրայ (նկատի ու-
 նեմ տարբեր լեզուները): Մինչև օրս ա-
 կանջիս մէջ են կարծես իսպաներէն,
 արաբերէն, պարսկերէն, ֆրանսերէն
 թարգմանուածներ յանգ ու վանկերի ե-
 լակշիւրը: Այս իմ ստացած ապաւորու-
 թիւնների վկայութիւններն են նախ
 թարգմանութիւնների մասին հայրենիքից
 դուրս եղած կարծիքները, որոնք զոյն
 ինչ նպաստուսը են:

— Իսկ դուք քարգնամուսթիւններ
 չէ՞ք անուս:

— Ինչպէս չէ, բանաստեղծ մարդ ես,
 չե՞ս կարողացել իմ գրքերը, «Հատուսիր»
 գրքիս մէջ Լեւոնտուսի «Երայշնիկովի
 երգը» ո՛վ է թարգմանել կամ Վիկտոր
 Հիւսօյի «Երայշնիկովի փախուստը Մոս-
 կուսից» ուսերէնից ո՛վ է գոխադրել

Հայերէնի: Թարգմանել եմ նաև Պուշկինի մի երկու կտոր:

— Ձեր քանաստեղծական ակումբներին մասին կարելի՞ է իմամալ: Որտեղի՞ն էք սկսում արդեօք:

— Իմ սկիզբը մայրիկիս ստիւքներն են, Հայրիկիս Համբոյրներով, վասնզի ինչ որ ցանես, այն կը հնձես:

Ինչպէս կաղնի ծառը սկսում է հողից, այնպէս էլ պոեզիան սկսում է Հայրենի խրճիթից: Բանաստեղծութեան մայր սկունքը մայրենի հողն է, մայրենի լեզուն է, նրա պաշտպանութիւնը, ազդի ողնալարը, ազգի ճշտատեսութեան մեծ խորհուրդը: Սրանց աւելացրած Համամարզկային շփեանող զգացմունքները: Այս մասին աւելի խոր կարելի է զգալ ՀԻՆՏԵՐԳԱՆԷ համամարդկային պոեմիս մէջ:

— Ուրախաբան՞, քե՞ տխրութեան պահերին էք գրում:

— Երբ սիրտն արտասում է, աչքերը շին կարող ծիծաղել, այնտեղ մի փնտռէք բանաստեղծութիւն: Երբ մշուշը, ծանր մառախուղը զողարկում է Մասիսի դեղեկութիւնը, անհամբեր են գտնում աչքերը եւ ծնունդ է աղաչանքը՝ բացուի՛ր, Մասիս, բացուի՛ր... զոցուի՛ր, իմ վիշտ, զոցուի՛ր... Եթէ նոյնիսկ սարսիտութիւնը կարող է բանաստեղծութիւն գտնուել, էլի նրան Հարկաւոր է վատի շիթ, ինչ-որ արցունքի ցօղ, որ միանալով խայտանքի շողի հետ, կարող է ծնել ծիածան, բայց այդ բանաստեղծութիւնն էլ ծիածանի պէս թէկուզ լինի գեղեցիկ, ծիածանի պէս անցողիկ էլ կը լինի:

— Ինչպէ՞ս էք յիշում ձեր մանկութիւնը:

— Թափառելիս մեր բոստանի, ձորերի ափերում եւ դետափի կախից մանկատի քանդակներ անելով եւ շատ սիրելով շիճկներ: Բայց այս ամէնը ջուրն ընկան բոստանի Հայրիկիս նահատակութեամբ:

— Եթէ հրաշք լինէր, Ձեր տխուր մանկութիւնը կը փոխէի՞ք ուրախ մանկութեամբ:

— Ե՛ւ այո, ե՛ւ ոչ: Երկուսն էլ պէտք են: Բայց այնպիսի հարց ես տալիս, որ

բերանս կողպւում է: Թող Հիմա մահկանայի, կատուի ձաղի պէս դուռն ընկած լինէի, միայն թէ կեանքը դեռ առջեւ լինէր: Թող լինէր ջուր ծախողի կուտ, միայն թէ չլի՛նէի, որ եղեռն է եղել եւ յուշարձանը Միծեռնակաբերդում է՝ զբրանիտէ քարացած արցունքով:

— Բաղը ձեզ համար ի՞նչ արժէք ունի:

— Ինչ որ յենտփայտը կաղ մարդուն: Ինչ որ վարարած գետի վրայ կամուրջը, Ինչ որ շիկացած երկաթի վրայ իջող կռանը, որը կերտում է ե՛ւ խոփ, ե՛ւ սուր: Աւելի՛ն. ինչ որ կոյր մարդուն ուղեկցող մանուկը: Ինչ որ այն գնդիւղը, որ որձ ծառի սղին տանում է էջ ծառի ծաղկի վրայ (փոշոտում), ատանց որի ոչ մի ծառ չի կարող պաղաւտել: Ամենահասարակ թուացող բանն էլ հրաշք է, երբ տեղին զործածես:

— Ովքե՞ր եմ Ձեր եղբայրները:

— Իմ հոգեկիցը իմ ժողովուրդն է:

— Խօսքս գրողների մասին է:

— Սիրում եմ նարեկացուն եւ ողբում եմ, որ ինձ շատ ուշ բախտ վիճակուց նրան կարգալ: Բայց Հիմա ե՛ւ Միլտոշ Երանեանի, ե՛ւ Վազգէն Գէորգեանի թարգմանութիւններն աչքիս առջեւ են միշտ, եւ դանում եմ, որ աշխարհի ամենամեծ բանաստեղծն է, թէեւ նարեկացուն գրեթէ հաւասար պաշտում եմ Նէյթսպիլլին:

— Մի հարց եւս, ի՞նչ կ'աւելիք քանաստեղծական մտք անունների մասին, կարգում էք նրանց:

— Ինչպէս չէ: Աբարատեան դաշտ ելնողը, Մասիոն ընդգրկելով իր սրտի աչքերի մէջ, մի՞թէ մտանում է բրթակները: Նոյնիսկ հոգեւին ձգտում է խորտալ ձորերում, որոնք գրեթէ տակաւին անտեսանելի են, Ի հարկէ, Հայաստանը լիքն է շնորհներով: 1957 թուականին, գրողների Համագումարում, որը յաջորդեց մեծ Խահակեանի մահուան օրերին, Գ. Մահարին իր ելոյթի մէջ ասաց, թէ Խահակեանի մահով փակուեց ակունքը Հմայթի, քնքոյլ քնարերգութեան: Ես

պատասխանեցի նրան, որ ոչ թէպէտ Մասիսը Հանգած Հրաբուխ է կոչուած, բայց Հայ Ժողովրդի սուրբ արգանդը յաւիտեան գործողութեան մէջ է եւ կը ժայթքեն նորանոր Իսահակեաններ: Նոյն իսկ կարող է կրկնուել բիրիական նարեկը: Միայն թէ մեծամտութիւնը չխաթարէր մեր գրական նորամանկների ոգին, շեղծէր բնութեան պարզեւած շնորհները: Չէ՞ որ աղբիւրները, ջրերը, երբ բարձր լեռներից են իջնում, առաւել վճիտ են, մաքուր, ջիւղ, ըմպելի: Եւ երբ նրանք իջնում են գոտոգամութեան ցածրունքները, պղտորում են եւ դառնում են տնրմայելի: Այդպէս էլ մարդն է, մա՛նաւանդ մարդ բանաստեղծը: Թէպէտ ասում են, որ Օլիմպոսի վրայ որդիները թաղել են կամենում Հայրերին, բայց ես կարծում եմ, որ իսկուհուն, բնածին նորեկները երբեք չեն անգունի, չեն անտեսի իրենցից առաջ ծնուած Հսկաներին: Միայն փոքրիկ, գրեթէ աննշան շնորհներով օժտուածներն են ճշնում ու տքնում անցեալի վրայ գիշերասեւ վարազոյր քաշել, բայց կարծես չգիտեն, որ երբ ելնում է արեւը, գունատում են ասպեբը: Այնուամենայնիւ բնութիւնից իմաստուն ծնուած փոքրիկ թռչնակները անշուշտ կ'արծուանան, քանզի գետեւ նրանց ծընունդից առաջ էլ բարի բնութիւնը նրանց բոյները Հիւսել է լեռների բարձունքներում: Մտում է, որ եղնավիզ անբութեամբ բախտի եւ յոյսի խոպանների միջով քաշեն քնարի գութանը:

— Ինչպէս որ Իսահակեանը, Շիրվանզադէն, Ջաբեղը, Ալազանն են ցերբախոտով հետաքրքրուել, դուք նոյնը կատարում էք ներկայ ծիլերի Ակատամար: — Անշուշտ: Ծատերն են գալիս մօտըս, շատերն են իրենց երախարիքները

ուղարկում ինձ նամակներով, եւ ովքեր որ ուշիմ են, ներհուն եւ ոչ թէ ներհուն, կարծեմ լսում են ինձ եւ նկատելիօրէն ճլարձակում: Բայց ինչ տսեմ, երբ մարդ բարութիւն է անում եւ ինքը յիշում է, ապա իր հոգու մէջ էլ բարութիւնը կորդրնում է իր արժէքը: Եւ նոյնիսկ ինքը օնմտութեամբ գոտոգամում է, որ ինչոր օրահեղձի է փրկել կամ վաղուայ ծաղկի աշտարայ ծիլն է ջրել: Բայց եւ այնպէս տեղին է այստեղ յիշել յոյների իմաստուն մի խօսքը՝ լաւութիւններն անպատիժ չեն մնում:

Կարծեմ դու էլ յոգնեցիր, խօսքս վերջացնեմ Հետեւեալով. ամէն մի ազգի գրականութիւն ոչ մարդու մեղքի ծնած, այլ բնածին վայրի անտառի է նման: Մեծ ու փոքր ազգերը պիտի ծաղկեն իրենց մայրենիներով ու մշակոյթով, ինչպէս ծաղկում են անտառում ե՛ւ փոքրիկ մառնուկակը, ե՛ւ Հսկայ կաղնին, ե՛ւ մառբենու թփուտը, ե՛ւ բարձր բարդին: Ոչ մէկն աւելորդ չէ եւ բոլորն իրար Հուսասար են՝ ինչպէս աչքս աչքիս: Ես անասուն այդ ամէնի փնթով է անտառ եւ բազմաբուրանէս: Այդպէս էլ ոչ մի ճշմարտագրող աւելորդ չէ Հայոց պատնասում:

Ո՞, ինչ Հրաշք է բնութեան օրէնքը. անեղծելի, անպղծելի, անբակեւի, աննուանելի, անայպանելի, անզոգվելի, անփոփոխելի եւ, աւա՛ղ, անմահունելի: Տես ծիածանը, եօթը գոյներն ինչպէս են իրար Հետ, ոչ Հեռանում են մէկ մէկուց, ոչ մէկ մէկու կլանում: Եւ բազմաբոյսի, ազմածեւի եւ բազմաբոյսի իրենց մշակոյթներով ժողովուրդներն յաւերժական յիածան են օտեղծում երկնքով մէկ գեղեցիկ ու Հրաշահրաշ:

Հարցազրոյցը վարեց
բախտաւոր
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱԹԱՆԸ

Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

Աստ Երկիւղի

Մ Ո Ւ Տ Ք

Մարմնիս համը քարին մէջ
 Թաղանթիս վրայ աղը կակուղ
 կարմիր ցուլեր թաքնամոռնչ
 Եւ պատերը որ անընտել տոկացին
 Մտան մատներ քարին ներզոյ դողին մէջ
 Եւ դողերը հեշտախռով կանգնեցան
 դողը մտաւ ձեռքի անսկիւլք շարժման մէջ
 դողը դարձաւ զիծ ու երանգ
 Անասելի պատում է սա
 ուր յունական թատրոն չկայ
 Համակերպում սարսափի հետ
 անգիտակցում ժամանակի
 այս պատերը չփլան

Ասք լուսեան

Եւ մեծ հովը որ չլոեց արձագանգով որոտաբեր
 ու խոյանքով սահմանազանց
 Յարամոռնչ ժամանակը ծերուկ-ծերուկ հալաց արդէն
 ու մոխրագոյն անձրեւի զաւազանով տկտկացուց
 լեռնալանջի դռները փակ
 Եւ արեւը՝ նարնջագոյն հեղուկ լեցուած
 թմրած ուղեղ
 ծովու արծաթ շեղբերուն վրայ վիրահատում
 Երկար պոչով կիսատ պոչով ինքնաշարժներ
 ձուկերու երամի նման փախած լոյսէն
 ուղղուած մութին
 անժամանակ նախատիպեան ապասպասող
 Եւ կիշէներ որոշ ժամեր բացուող փակուող
 թրծաշաղախ դուռի համար
 բանալիներ ներահասնող
 համ-արձակել հռնդինը այս քարացած հյօրներուն

Ու մութին մէջ համրաքայլով
որսորդները որոնք չյոզնեցան բնաւ
եւ որսորդները քարձր եկան աղեղնաբեր
ծռան մէկ-մէկ մտան եւ արեւէն հեռու
մութը գծագրեցին ոսկորներով արնոտ
եւ քերծեցին պատը խորհրդաբուռ յոյզով
վախի եւ յաղթութեան տենդով արբեհայող
թերեւս երգեր կային ձայներ կային մեծցող
որսորդները թիկնեղ անդող աղեղներով
սարսափի եւ մահուան շունչը դրին պատին

Ե՞րբ շինեցին նետեր որսորդներն անժաման
եւ առաջին անգամ արձակեցին դողով
ու երբ տեսան յանկարծ կասեցումը շարժման
վախցա՞ն արդեօք յետոյ այդ նետերը ինկա՞ն

բայց ինչո՞ւ պէտք է իյնան նետերը

Նետերը մեռած ձայներ կէտադրեցին
տափաստաններու անշարժացումէն առաջ

Մահուան քոյրերը եւան
լռութեան մէջ մթապատ
պոյզ մը նետեր շինեցին
ու թմրասաց քաներով
եւ տողերով ինքնահատ
երկու նետերը մահուան
դաստակներուս կապեցին
միջնեմատիղ ծայրին աճած ծառը կենաց
չչորնալու
այս նետերը պէտք է ըսին պարելով
եւ քոյրերը եօթնոտան
երկարատոյր ճիչերով
ծերով հովուն մէջ մտան

Եւ արնախում ցուլեր իջան յարձակելու
եկան տասնեակներով եւ վոհմակներ դարձան
դարձան լեղի աչքեր վերջին ճոց աղի
որ օրէնքը կեանքի ի՞ր մահուան մէջ ապրի
եւ ցաւը՝ բազմակերպ ու բազմամատ եղջիւր
արմատախլուած խորշերէն իր խոր
ակնաբիբին հասնող
նկարի պէս թրթռաց

Այս անասունը որ կը նայի քեզի
 սպաննելու համար
 ի՛նչ պէտք ունէի՞ր կատաղութիւնդ աչքերուն մէջ ի՞ր
 տեղաւորելու
 ինք պիտի մնայ փորը լեցուած է մահուան հեշտանքով
 արարման թոյնն է փորը ապրիլ կ'ուզէ
 նեղանցք
 մահուան ստուերը այնքան լուսաւոր է
 յաջորդական մահերով է որ
 այս յաւիտենութիւնը շինուեցաւ

Մահուան քոյրերը նստան
 նաւուն վրայ եռակայմ
 ու շոյելով պիտերը
 մէկմէկու ապրեցան
 ժայռին վրայ աղեհամ
 երկարախոյս հեւքերով
 մահուան շուքերը փլան
 հովը կարդաց վայնասուն
 եւ պատմիչները հերթով
 հովուն ցաւը հերքեցին

Միայնասէր հովուն սիրտը մարմնիս մէջ
 բաբախումը երկնողներու
 շնչակոտոր սարսռանցում
 Հովուն շրթներուն դրի շրթներս
 եւ ըսի՝ ցոյց տուր պատկերներդ հին
 հով որ ժամանակ ու տարածք չունիս
 որ առեղծուած ես յամի տեառն այս թուականի
 հով ջնջէ սրբէ այս ժամանակը
 որ մտածումս թափանցէ մորթէդ դառնայ աչք ցուլի
 ոնգեղջիւրի ձայն եղնիկի ծարաւ
 վերյուշի ռիթմով
 փորձեմ մօտենալ հնազոյն եսիս
 յիշեցուր ինձի
 թէ երբ դուրս եկայ քարանձաւներէն
 ամբողջացուցի՞ արարումը այս
 ինչո՞ւ ետ դարձայ մութին եւ քեզի
 եւ ինչպէս հե՛տդ ձեռքեցի մութը

Եւ հովը սառած ձեռքերս բռնեց
 եւ հովը շոյեց գլուխս յոգնած
 ու մենք միասին
 պիրար տենչացող սիրողներու պէս
 մտանք քարանձաւ

Քարին համը մարմնիս մէջ

ԱԿՆԱԲԱԽՈՒՄ

Քայքայումը կը սկսի աչքերով
 ակնթարթը կը սկսի լոյսով
 Ակնթարթը
 նախապատմութեան եւ յետպատմութեան միջեւ գծիկ
 որուն իւրաքանչիւր կէտին վրայ
 քառսը կ'ապրի
 մութը քնորոշող գծիկ

Քայքայումը կը դադրի մութին մէջ
 մութին մէջ կը տիրէ գաղափարը
 նախատիպը յետստիպը
 անխուսափելի'ն

Կոր քաղաքակրթութիւնը կը վերածէ
 կանաչ հիւանդութեան
 եւ դարմանումը կը շինէ
 բանալիի ծակին հանդարտօրէն նստած փոշի

Բնածայրի կնքամոմերը բեկել
 յետոյ ուռիլ հռնդիւնով անադմուկ
 շարունակել ժամանակը

Այս նետերը քնարներ չեն երգեցին բայց
 անցան անոնք Սահարայէն Թասիլիէն Լէպէլիէն Սպանիայէն
 վրձիներ չեն բայց գծեցին երկընտրանքով ու հաստատմամբ
 բառ կամ ձայն չեն բայց խօսեցան ակնածանքով ու հաստատմամբ
 իրենց խօսքը նայուածքիս մէջ

Ասք արարման

Առեղծանեմ վերեղծանեմ
 յետակոչեմ ծածկագիրն այս
 այբուբենը այլադասան եւ նոյնակերտ
 Համակերպում սարսափի հետ
 եւ գթութեան հանդէպ պայքար
 անզիտակցում ժամանակի
 յանկարծահոս ապատագրում
 անկախացում եւ գերաճում
 անկախացում եւ գերաճում
 անկաբախման այս փոքրածաւալ ակնթարթին

Տեսողութեան հպումը այնքան զօրաւոր է
 յաջորդական աչքերով է որ
 յախտենութիւնը կը շինուի

Քարէ հաստաշէղ ցօղուններ
 կախուած պատէն
 պտկաքարեր հնձուած արդէն
 ժամանակներ խաւերու մէջ մեքենագիր ազդատմամբ
 երոսի անուշահոտի շիշը
 չէ բացուած այստեղ
 Լոյսի տաքութեան եւ սնունդի սով
 աղ հող եւ կենդանութիւն
 վերեղծանել մեր հին լեզուն
 ուր շուք չկայ ուր շուք չկայ
 անշարժ ու խիստ պաղութիւններ կապմած նեղանցք
 թարթիչներ տաք՝ շոյանքի պէս կը թրթան

Երկար սրունքներով թոչուն
 որուն թեւերը սանտրերու պէս փակած են վիպին
 եւ պարանոցին վրայ ցու մը կը ցատկուտէ
 կարճ ողնայարով ձուկեր
 որոնք բացառաբար պնակներու մէջ չկմախացան
 փիղի մթապատում սիրտ փոթ-փոթ մորթով փիղեր
 ճերմակ ընձուղտներ սեւ կէտադրութեամբ
 կարմրաձակատ առաստաղ
 վայրի մեղուններու քարայր
 խայթուած պատեր
 սարդի ոստայններ ուր մեղուններ յարձակած են
 ինչպէ՞ս թէ առանց նպատակի
 եղնիկ մը գլխահակ կանաչ ջուր կը խմէ
 այստեղ արեւ չկայ կը կարծուի
 եղնիկներ առանց դէմքի
 կարծես պարնուելու համար են
 կինը արդէն դարձած է գիծ
 անդիմագիծ ցցուն կուրծքով եւ պիստերով
 եւ հրէշ մը որուն չորսդին
 տասնեակներով փրթած ձեռքեր մեղուններու պէս
 կ'երկարին

ճնգեղջիւրներ երկու խումբով իրարու դէմ
 եւ որսորդներ երկու խումբով իրարու դէմ
 վայրի եգներ երկու խումբով իրարու դէմ
 կոնակին վրայ ինկած ցուլը
 որուն ճիչը կ'արհեսի դեռ
 եւ շուք չկայ եւ շուք չկայ

Առեղծանել ինչպէ՛ս քակել
 այս մէկտեղումը որ արարողութիւն է
 այս մուտոցը որ արարողութիւն է
 այս ցաւը որ արարողութիւն է
 առանց միջնարարի
 ծիսակատարում որ այլակերպում չունի

ուր նեխող եւ հականեխող տարրեր չկան
եւ յստակ է ու հուս
ինչպէս ամբողջութիւնը առեղծուածի

Յաւը յառնող
եղջիւրի պէս բազմատպուած ու բազմամատ
եւ դիւրալոյծ այս էութեամբ
նայուածքս թող թող պատահի
մութի հովի նեղանցքի մէջ
արարչութեան կորիպին իսկ
տեղ-տեղ յանկարծ կեդրոնացած
այս բազմատիպ ու հաշմամատ նկարումին
այս հաշմածեռն
եւ ծայրատուած մատներուն իսկ
Ու ծէսերու հաստատումի դողերուն քով
սա մասնահատ մատներուն մէջ
եւ սարսափի
կարեկցանքի
եւ յաղթութեան
ու պարտութեան

ծէսերէն ետք
նախատիպեան մեր ձեռքերուն դէմ հաշմամատ
ինչպէ՞ս կրնամ դեռ պատահիլ աչքով երկու
ինչպէ՞ս մնամ եղծանելու
այբուբենը ձեռնահատման

Քայքայումը կը սկսի աչքով
կը շարունակուի ձեռքերով

Քայքայումը կ'աւարտի լոյսին մէջ

Մ Տ Ա Բ Ա Խ Ո Ի Մ

Առ քարանձաւ
զիս պօրաւոր առանձնութեանս մէջ առ
թող մորթոյ խուլ փակուի վրաս
ակնաշարժս անշարժանայ
մտնելու է

Ես յարացոյց դիտակ չեմ որ
ասդին անդին նկարանեմ
իջնելու է

սեւ քարանձաւ
վերամղուէ առանձնութեանս
եւ պատմութիւնդ հեզել սկսէ

Այս գիշեր եթէ նախապատմական
փայտանօթներու ձէթերը մարմնիս վրայ քսեմ
արարման բովանդակ պահերը կ'ունենամ
Աւելին

այս չոր հողին վրայ մորթս կը մակարդուի
եւ քարահանքի խիտ շերտերուն մէջ
քանդակուած պատմութեան կը վերածուիմ
ինք-իր-մէջ սկսող եւ աւարտող
ըլլալու է

Ժամանակը կը բերէ ոտնահետքերս
մատներս բացուած են անթէններու պէս
եւ մերձակայ անբռնելի ձայներ կ'անցնին
աղամաթուպի արտերուն քուտղ արագոտն կուպի նման
կը խոցուի ժամանակը եւ կ'արհնոտի

Առջ երկիւղի

Ցեղս կը յիշէ հնաքարեան բոյրը
Մի նաքարեան բոյրը
Նորաքարեան բոյրը
ցեղս կը յիշէ պրոնլին համը որ տաք-տաք խմեց
ամայութիւն խեղդող կրափուշէ մատները
գաղափարաբերձ կուպերու արտագաղթը
եւ ռոպոթին ուղղաձիգ կապմը
որ պինք հմայեց

Կը յիշէ ռոպոթներու ներգաղթը
իբիկնապահ էր
զգացական արինատուութեամբ ներկուած շուշանները
լեցուած էին բազմաձիւն լուսեամբ
անոնց նայուածքները
կը պարպուէին հողին մէջ
այդ անսերմ շուշաններով է որ ցեղս իր ռոպոթը շինեց
ճարտարարուեստի պառանցանքին մէջ
ամէն անգամ որ արթնցաւ իր երազէն
ցեղս նոր անունը վերստին փոխեց
զգացական արինատուութեամբ ներկուած անունները նետեց
խառնամբոխ ամփիթատրոնի պարապ սնտուկներուն մէջ

Արեւը իր հրային հագուստները տարածեց
բաշեց ամպերու վարագոյրը
ծովասոյզ եղաւ
շուքերը կարճցան երկրագունտին վրայ

Դիւրընթաց ձեռքը լուսնի ձերբակալած է բունս
բունս անշարժ բու դարձած

կանխասացութեան սինին կը թառի
բերանը լեցուն հրածուփ ջուրով

Այս անձայն աչքը դատարկ սրտին վրայ

ձեղքատուած շրթներս ուր արին քսած կը պոռամ
եւ անբերան մետաղէ կապմը կառոյցներս կը քանդէ
այնքան խոշորցած է
ուղեղին մէջ քարիւղի խողովակներ կը հոսին

Ինքնակործանման մեծիան
կերպարը կը հոսի ծովերու վրայ
տարածութիւններու վրայ
կը բուրէ քարիւղ

Մեմֆիս երուսաղէմ Հռոմ Փիւնիկէ ձերմակ աստուածներով
ձերմակ երկնաքեր ռոպոթներ

երկինքի կապոյտ մուգայիքը այնքան շատ էր
երբ սկսեր էինք աստուածներու մատուցուած երգերը թաղել
երկինքը կապտորակ դիակ է հիմա
եւ ծովը՝ տապակ

ուր արեւը միլիոնաւոր տարիներ է՝ կապոյտ հակիթ
կոտորած էր

պպտիկ տղու մը ձեռքէն բռնած գացի եւ այդ տղան գլուխ չունէր
ան չտեսաւ թէ

որքան շուշաններ ինկան երկարաշար դիակներու կողքին
իսկ արեւը՝ նարնջագոյն հեղուկ լեցուած թմրած ուղեղ
ուր ռմբանիւթ մը կը շարժի

Ասք սարսափի

Ձեռքերս ահա կը դողան պղնձադարի թասին վրայ
ուր նիպակներ փոքրածալ փամփուշտներու վերածուեցան
Սրբավայրերու մէջ պատարագներ կը մատուցուէին
իմ ցեղս հում-հում խմեց

այդ հրանիւթերը

եւ պայքարներու ծրագիծին վրայ

թանձրաբարդակուտակ

մատեաններու հեռաւոր պառանցանքին մէջ

թափառականի երազներու ցուցագիծերը կորսուեցան

Սրտանօթներս բրածոյ դարձան լեռնակողերուս

եւ ովկիաններուս՝ գաղտնակուտ պատկեր

Եթէ օր մը գտնուիմ

երազներս ո՞վ պիտի վերեղծանէ

Մահուան նետը շեղասույր
 քրակողին խրեցաւ
 ծովը ցաւէն թառանչեց
 եւ նետերու եւ լերան
 լռութիւնը խլուեցաւ
 ծառեր դարձան ծաղկաթափ
 շուշանները մահասաց
 մէկը դրաւ բոլորս
 շղթաներու մէջ անսաստ
 դարպասները ցայգալիր
 մէկը կղպեց ու գնաց

Ամրախցուած խաւիաններ են աչքերս
 որոնց մէջէն յանկարծախոյս
 տասնեակներով շարժող կոհեր
 սա պատերու նկարներուն վրայ կ'իջնեն

Ջարիուրելի աչքեր ունիմ
 կայ կախարդանք եւ աղմուկ
 Պլպտիկ տղայ որ գլուխ չունիս նստէ այստեղ
 Բայց համբօրէն եւ սգոյշ
 պիտի ըսեմ մէկիկ-մէկիկ բոլորիդ
 այս մահը որ շուրջս է՝ իմ մահս չէ
 անոր համար կըցայ վայն նկարագրել
 ապահով տեղ մը պահուըտած է հիմա
 սա բուին մէջ տեղ մը նստած է կամապուրկ
 եւ մենք որ լեզուի սենեակներուն մէջ կ'ապրինք
 հիանալի խենթերու համախմբում ենք
 մահուան համաձարակէն եթէ վախնանք
 երգ մը կը շինենք ու կը խցկենք
 մեր լայնաբերան տխրութիւններուն մէջ
 մեր սեղանները լիառատ են պատերազմի եւ պայքարի երգերով
 մեր բերաններուն մէջ տաք-տաք կռիւ հալած է

Անոր համար այս թասը ձեռքերէս ձգե՛մ պիտի
 գետին պիտի ձգեմ մի սարսափիք
 ձայներուս բոլոր ակօսները զզգուած
 աչքիս դարպասները փշալարերով պատուած են արդէն
 ոնգեղջիւրներ կը մօտենան

Տեղ մը պէտք է դեռ հսկայ թուփերը խշշան
 տեղ մը պէտք է թռչունները ընթացակցին իրարու
 տեղ մը պէտք է անձրեւախառն քամին խօսի
 եւ բառերը շնորհաձիր շողերու պէս
 մարմնի՛ս ծո՛ւծիս պէտք է մտնեն



ու մարմինս իր տունէն ներս պէտք է մտնէ
 Այս կրայոյվ մտերմութիւնը մարմնիս եւ հողին միջեւ
 այս վշտակիր շրջագայութիւնը
 իր պահուըտած տեղէն մահը ինքնամուղ կը ծաւալի
 մարմնիս մէջ
 ու կը սկսի հեալ ու կը սկսի ըլլալ

Վերապրումի գուղձերն առած
 անյուսօրէն կը փխրեմ ափերուս մէջ
 կը խժռեմ
 քան մը կը կերպարանափոխուի
 եւ նայուածքս՝ վերագտնուած թռչունին դիմաց
 կը քարակնայ կ'ուժաթափուի
 եւ շուշանի գոյնը կ'առնէ

Այս քանի՞ դար է քաղաքներու
 քաղաքակիրթ պատերը իրենց չտեսած
 արցունքները ուրախութիւն կ'անուանեն
 Այս քանի՞ դար է Փիւնիկէն կը ծծէ
 հին Հռոմի աւերները
 Այս քանի՞ դար է երկաթամուր
 մոխիրներու վրայ կը գեղապարզուի
 Քարացած արցունքս

Դրանս առջեւ ազանի մը կայ որ իր կտուցին խնկաման ունի
 տունս չմտած այդ խնկամանին խունկ մը վառեցէք
 որպէսզի այքերս կարենան վերատեսնել

Քայքայումը կը սկսի այքերով
 քայքայումը կը հալի խունկին հետ

Իսկ շրթներս խայծէն խունկի ալեխոտով կը քակուին

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Մ. Հ Ա Ճ Ե Ա Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն

Առաւօտուն, երբ հանրակառքի կա-
յարանը հասայ, առաջին կառքը նոր մեկ-
նած էր: Միայնակ՝ սկսայ սպասել:

Փորը կատու մը եկաւ տարատիս քրո-
ւի:

Կատուներու հանդէպ մասնաւոր հա-
մակրանք մը կամ սէր մը չեմ ունեցած:
Թողուցի, որ այս մէկը շարունակէ քը-
ւիլ տարատիս եւ կօշիկներուս: Այս հըս-
կայ քաղաքին անծայրածիր փողոցներէն
մէկուն մէջ, միայնակ սպասելէն նա-
խընարելի էր կատուի մը ընկերակցու-
թիւնը:

Դեռ ոչ ոք եկած էր կայարան-ան-
կիւնը:

Ձեմ գիտեր ի՞նչ բռնէ մղուած, որո-
շեցի խօսիլ այս կատուին հետ, առանց
վախնալու, որ զիս մտադարի տեղ կըր-
նային զնեւ անցորդները:

— Ի՞նչ կ'ուզես, սիրելիս: Անօթի՛ ես
արդեօք:

Կատուն կարեւորութիւն չտուաւ խօս-
քերուս:

— Բայց ինչո՞ւ համար կը քուտիս
ոտքերուս: Բա՞ն մը ունիս ըսելիք, հաս-
կըցնելիք:

Մի՛ հաւատաք, բայց եթէ կ'ուզէք՝
զարմացէք:

Կատուն զէմքը բարձրացուց եւ իր
աչքերը յառեց աչքերուս, տարօրինակ
ձայներ մը հաներով:

Ինչպէ՞ս կրնայի երեւակայիլ, որ
այդ տարօրինակ ձայները յստակ իմաս-
տով խօսքեր կրնային ըլլալ, այն ալ՝ իմ
մայրենի լեզուովս արտասանուած:

Կը տեսնեմ, որ չէք հաւատար, բայց
կը շարունակեմ պնդել, որ այս կատուն
արտակարգ կերպով թախծոտ աչքերով
եւ շափազանց յստակ արտասանութեամբ
խօսեցաւ ինծի հետ:

«— Ի՞նչ կը նշանակէ «անօթի» բա-
ռը, որ յաճախ կը լսուի մեր տան մէջ ալ

էւ զեռ չեմ հասկնար, որ ի՞նչ բանի կ'ակ-
նարկուի?»:

— Բայց զուն անխելք կատու մը չես
անշուշտ: Ձե՞ս գիտեր, որ ցեղակիցնե-
րուդ մեծ մասը անօթի է միշտ եւ ամէն
բան կը փորձէ՝ ուտելիք մը ճարելու հա-
մար:

«— Կը հասկնամ վերջապէս: Ուտելիք
փնտռելու վիճակին համար կ'ըսէք — ա-
նօթի է»:

— Ես ալ կը տեսնեմ, որ ուտելիք
փնտռելու պահանջը չես ունեցած տակա-
ւին: Երանի՛ քեզի: Կ'երեւի, թէ հարուստ
են տէրերդ:

«— Ես տէր չունիմ: Ինչո՞ւ համար
կը կարծէք, որ անհրաժեշտ է տէր ունե-
նալ»:

— Մի՛ վրդոժուիր, սիրելիս: Առհա-
տարակ՝ փոքր կուշտ կատուները հարուստ
կամ բարի տէրեր կ'ունենան:

«— Նորէն տէր կ'ըսէք: Ես կատարե-
լապէս անկախ կատու մըն եմ: Կ'ուտեմ,
երբ փափաքեմ եւ հաւնիմ ինծի արուա-
ծը: Տան մէջ պզտիկներուն հետ կը խա-
ղամ: Ամէնէն փափուկ տեղերը կը քնա-
նամ: Երբեմն ալ, երբ ուզեմ, թոյլ կու
տամ, որ շոյեն կամ գրկեն զիս»:

— Տունէն դուրս չե՞ս ելլեր երբեմն:

«— Բանի մը անդամ փորձեցի փողոց
ելլել, բայց եթէ ինքնաշարժներու շահն-
դիպիմ, անկիրթ շուներ կ'ելլեն զէժս:
Իսկ գիշերները դուրս ելլելու համար
պատճառ մը չունիմ»:

— Հապա ի՞նչ կ'ընես սեռային կեան-
քըդ կանոնաւորելու համար:

«— Լաւ է, որ կը հարցնէք այս մա-
սին: Ի՞նչ ըսել կ'ուզէք»:

— Որքան որ գիտեմ՝ ամիս մը կայ,
երբ կատուները սիրային բորբոքում մը
կ'ունենան:

«— Բայց չէ՞ք գիտեր, որ գոհակ
կատուներուն յատուկ բան մըն է այդ ձեռ

ըսածը: Ես որոշ բարձրութեան մը հասած դասակարգի մը կը պատկանեմ:

— Արդեօ՞ք...

«— Վերջապէս կը հասկնամ: Այո՛, պարոն: Մանկութեանս շրջանին ինծի ալ ըլլած են այն գործողութիւնը, որ պարձան է՝ իբր քաղաքակիրթ կառու ապրելու համար, առանց խառնուելու տանիքներուն վրայ վայրագօրէն մոռուացող մեր գոհնիկ ցեղակիցներուն:»

— Այո՞րիցն՝ սերնդագործելու պահանջը չունի:

«— Երբեմն ահաւոր էմ ձեր այդ ըստը, Նորկայի տեսարան մը չէ՞: Երանք՝ իրարու վրայ հեծած կամ կատուներ՝ մէկը միւսին վրայ խածած եւ կռակի միջոցով իրար ճակատի մարտի տեսարաններուն մասին, սրանք միշտ ազգայնաբան կռիւններով կը վերջանան:»

— Կը ցաւի՞մ զու հաշուով: Արո՞ւ էս, թէ էդ:

«— Արու էմ:»

— Քանի որ զրկուած ես սերնդագործելու կարողութենէն, գոնէ լծ՞ո խորհած, որ ոչինչ պիտի մտայ զեզմէ, երբ մեռնիս:

«— Լսած եմ այդ յանկերզը: Մեր տան մէջ յաճախ կը խօսին այդ մասին եւ միշտ ալ կը վիճին: Պարտք կ'ուզէ յաջորդներ ունենալ, մա՛նստանդ՝ մանչեր, որոնք պիտի շարունակեն իր մահանունը ապրեցնել, բայց տիկինը պայման դրած է առաջ տարի ետք միայն մեռնարկի այդ դարձին: Դեռ քսաներկու տարու է եւ կը փափաքէ կեանքը վայելել առանց տաղտուկի: Իր խօսքերն են առնել:»

— Ամէն մարդ ազատ է իր ուզածին պէս տնօրինելու իր կեանքը:

«— Լաւ որ խօսեցանք ազատութեան մասին: Գիտէ՞ք արդեօք, թէ ինչու համար արհեստական կատուններուն առիթ չեն տար, որ մուկ որսան, մինչ զոհնիկ կատունները մինչեւ իսկ կոյտղիները կը մտնեն եւ ազատօրէն մուկ կ'որսան:»

— Կը տեսնեմ, որ կը փափաքիս մուկ որսալ: Գոնէ տեսնե՞մ ես մուկ կոչուած արարածը:

«— Կը ցաւի՞մ ըսելու, որ չեմ տեսած, բայց միշտ լսած եմ այդ մասին եւ

յաճախ ալ անօթութենէ շատ աւելի դուրս պահանջը ունեցած եմ՝ մուկ մը տնկելու եւ որսալու: Այդ պահերուն կը խածնեմ, կը բզկտեմ բարձ մը, բազմոց մը կամ որեւէ լաթէ իբր:»

— Իսկ ահա՞՞րդ: Մտայցալ, որ տէր լուծիս: Տանտէրները ըսել ուզեցի: Ձէ՞ք՝ն հասկնար, թէ ի՞նչ կ'ուզէիր:

«— Ո՛չ:»

— Ձէ՞ք՛ր խօսքը անոնց հետ, ինչպէս հիմա հետս կը խօսիս:

«— Ո՛չ: Անոնք չէին հասկնար իմ լեզուս, հակառակ սնոր, որ ես կը հասկընայի իրենց լեզուն:»

— Կը կարծեմ, որ անոնք ալ իմ լեզուս կը խօսին: Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ես կը հասկնամ զու խօսածը եւ անոնք չեն հասկնար:

«— Կը մտնաք, որ մենք անձայն կը խօսինք հիմա իրարու հետ: Այս անձայն լեզուն է, որ անձանօթ է անոնց:»

Այո՛: Իրաւունք ունէր: Մեր խօսակցութիւնը անձայն էր եւ մենք մ'չ անգլեբէն կը խօսէինք, ո՛չ Ֆրանսերէն եւ ոչ ալ սուտերէն: Իրարու աչքերուն մէջ կը կարդայինք խօսքերը: Ան կը խօսէր իր կատուներէն, ես կը խօսէի իմ լեզուս: Ես կը կարդայի իմ լեզուովս, իսկ ան կը կարդար իր լեզուով: Այդեօք այս չէ՞ր այն անկեղծակուն լեզուն, որով կը փորձէին դրել մեծ բանաստեղծները՝ Հոմերոսէն մինչեւ Ռեմպո, բայց միշտ ալ հասցին թէ հետուոր գաղափար մը կրնային առաջ այդ մասին: Իոյտրն ալ կը զրտակցէին, որ ծնած էին այդ տիեզերական, անձայն լեզուով արտայայտուելու կարողութեամբ, բայց ի զուր կը ճզնէին այդ լեզուն թարգմանել մի՛ր, այսինքն՝ ամէն ազգէ ընթերցողներուս, ամէն լեզուներու: Որքան որ մեծ ըլլար անոնց ճիշդ այնքան աւելի սուր կերպով մենք կը զգայինք ու կրնայինք գուշակել անոնց սովորական բռնութեան տակ թաքնուած սո՛ միտ իմաստը, որուն անունը դրած էինք բանաստեղծութիւն:

Մի՛ վրդովուիք սակայն: Նպատակ կամ կարողութիւն չունիմ ապացուցանելու, որ այս կատուին խօսած անձայն

կատուերէնը զուտ բանաստեղծութիւն էր, եւ կամ թերեւս ալ այս կատուին հասկը- ցած իմ անձայն մարդերէնս էր մեր բա- նաստեղծութեան լեզուն: Նախընտրելի է երբեմն ժամանակ շփանել խնդիր մը լու- ծելու պէս անօգուտ բաներու համար: Ա- մէն ինչ խնդիր է կամ կրնայ խնդիրի վե- րածուիլ մեր շուրջ: Փոխանակ կատուի մը եւ իմ միջեւ պատահած հասարակ հան- դիպումէ մը մեկնելով «Նիւզիէն» պա- տերազմի մը պէս աննշան դէպքի մը պատ- ճառը պրպտելու, պիտի սուգեմ, որ պատ- մութեան շարունակութիւնը կարգաք, քանի որ իմ ու ձեր լեզուով կը գրեմ տա- կաւին:

«Յարկելի պարոն. քանի որ այս- քան բարի էք ու կը շարունակէք լսել զիս, չէ՞ք կրնար արդեօք ինծի ցոյց տալ քա- ղաքէն զուրս ելլելու ճամբան»:

— Բայց ինչո՞ւ համար կ'ուզես քա- ղաքէն հետանալ:

«Դաշտերուն մէջ մուկ մը որտա- լու համար: Հոս քաղաքին ամէն ծակու- ծուկը փնտոցի, բայց ո՛չ մէկ մուկի հանդիպեցայ: Կրնայ ըլլալ, որ բոլոր մուկերն ալ կոյուղիներու մէջ պահու- ւած են: Կրնայ ալ ըլլալ, որ ձեր քաղա- քակրթութեան զլխաւոր նպատակներէն մէկն է մուկերը ոչնչացնել. այսինքն՝ մեր բնական էրաւունքներուն ամէնէն շխաւորէն զրկել ձեզ»:

— Ես կը կարծեմ, որ կոյուղիներուն մէջ գեա շատ մուկեր կ'ուպրին: Թերեւս դիտես, որ մուկերը լափազանց արագ եւ սոտտօրէն կ'աճին: Մենք չենք կրնար բոլորովին ոչնչացնել, հակառակ անոր, որ հաղարատը տարիներէ ի վեր կը պայ- քարինք անոնց դէմ անհամար զէնքերով: Անոնք մէկ զէնք ունին միայն եւ ստով ալ միշտ յաղթած են մեզի: Կը բազմա- նան արազութեամբ: Երբ հարիւր մուկ կը սպաննենք, հազարներ կը ծնին:

«Ըսել կ'ուզէք, որ կոյուղիներուն մէջ պէտք է փնտոսեմ մուկերը: Բայց այս փափուկ, մաքուր մուշտակովս ինչպէ՞ս մտնեմ ես այդ դարշահոտ ու աղտոտ տե- ղերը: Կը նախընտրեմ հետանալ քաղա- քին սահմաններէն եւ դաշտերուն մէջ

փնտոել: Վստահ եմ, որ հոն պիտի գըտ- նեմ պարարտ եւ մաքուր մուկեր: Կ'ազա- չեմ, ցոյց տուէք ճամբան: Ո՞ր կողմ վա- ղեմ՝ շուտով զուրս ելլելու համար քա- ղաքէն»:

— Բայց նախ՝ ըսէ ինծի, սիրուն մուշտակաւոր բարեկամ: Ի՞նչ է նպատա- կըդ: Կ'ուզես արդեօք ընդմիշտ հետանալ քաղաքէն, թէ...:

«Այո՛, այո՛: Երկը գուշակեցիք: Համոզուած եմ, որ հոս վախճած աղա- տութիւնս կատարեալ չէ: Ձեր ուսույթ- ները անհամ, ունեւոր բաներ են: Ամէն մարդ ինծի հետ կը վարուի իբրեւ զուր- ճայիք մը: Արժանապատուութեանս կը դպի այս կացութիւնը: Ես կը փոփոցեմ կոուիլ, ճանկել, խաննել, փրցնել, արիւն լակել, արիւն հոտոտել, նոյնիսկ՝ փողոց իջնել եւ կուռիլ կամ վիճարտնիլ կատա- ներու եւ շուներու հետ: Գիտէ՞ք որ բը- նաւ չեմ վախցած մինչեւ իսկ իմ հաս- կիս կրկինը ունեցող ձեր շուներէն, որոնց վիզին փոկ մը անդուցած էք ու ձեր ետե- լէն կը քաշկուտէք: Այդ վատհոգի կենդա- նիներն ալ ձեր ամէնէն հաւատարիմ բա- բկամները կը նկատէք: Ինչո՞ւ համար կը ծածկէք ճշմարտութիւնը: Գրեթէ չեմ տեսնու- լիս ստորին դասակարգի մը վերածած էք շուները: Մեր ամէնէն խեղճ կատուն չէր կրնար հանդուրժել, որ վիզին վրան մը անցընէք ու պարտցնէք, եթէ նոյնիսկ միայն այդ դժով փրկուէր անօթի մե- նելէ: Արժանապատուութիւն ըսուած բան մը կայ, սիրելի պարոն: Կորհեցէ՛ք ան- դամ մը: Եթէ ձեր գործատէրը, աներ- հայրը, զոքանը կամ կիներ ձեր վիզին ըլլալ մը անցընէին եւ փողոց հանէին ձեզ, պիտի հանդուրժէի՞ք ատոր, եթէ նոյնիսկ միայն այդ կերպով կարելի ըլ- լար տիրանալ ամէն բանի, Բայց ժամա- նակը կ'անցնի եւ տակաւին ցոյց չէք աը- ւած ճամբաս: Ուրկէ՞ կրնամ շուտով հե- տանալ վատերու այս քաղաքէն»:

— Օ՛, ո՛չ: Ձեզաւ: Վատերու քաղաք ըսելով դիս ալ վատ կոչած կ'ըլլաք:

«Ներողութի՛ւն: Ձեզի չեմ ակ- նարկեր: Երկար տեսնէ ի վեր կը փընա- ուէի մէկը, որուն հետ կարելի ըլլար խօ- սիլ այսպէս: Ես ձեզ շատ տարբեր կը նը-

կատեմ մեր տանտէրնեքէն եւ դրացիներէն, որոնք համոզուած են, որ անպէտք, աննշան դարդ մըն եմ միայնս:

— Ինչո՞վ կը տարբերիմ ես մեր այդ մարդոցմէն: Հազիւ քանի մը վայրկեան է, որ կը խօսինք:

«— Բայց այդ քանի մը վայրկեանները բաւական եղան՝ մէջն աքթնցնելու համար տարբեր հետաքրքրութիւն մը: Քիչ առաջ սեռային կեանքին մասին կը հարցնէիք: Գրականութեան մէջ, որոշ քան մը չեմ գիտեր այդ մասին: Տանտէրներս իբրեւ թէ փրկած են դիւ սեռային տաղտուկներէն, ինչպէս յաճախ ըսած են, բայց հիմա կը սկսիմ կասկածիլ, որ տարբեր նպատակի մը համար դիւ ենթարկած են այդ գործողութեան: Ըսէք ինչդրեմ, իրաւունք ունի՞մ արդեօք կասկածելու անոնց պարկեղտութեան վրայ»:

— Այո՞, սիրելիս: Ինչ այդ գործողութեան ենթարկելով միայն ուղած են, որ յաւիտեան մնաս խաղալիքի մը գիրքին մէջ եւ զրկուիս իսկական բնազդներուդ գոհացում առլու: անդերազանցելի հաճոյքէն: Որքան ատեն որ այդ հաճոյքը չես ճանչցած եւ պիտի չճանչնաս երբեք, աւելորդ է խօսիլ այդ մասին, որովհետեւ կոյրի մը գոյնեբու մասին խօսելու կը նմանի: Մեր արտայայտութեան միջոց լեզուները ի վիճակի չեն զազափար մը առլու նման հաճոյքներու մասին, որոնց կը դիտակցինք բնազդական եւ օրգանական մղումներով: Քեզ ամբողջելով՝ ի սպաս արդիւնք են քեզ այդ զգացումները ճանչնալէ: Ես գարմացայ, որ գուեհիկ կատուններուն յատուկ բաներ կը նկատէիք տանիքներու վրայ աղճկայարոյց հանդիպումները:

«— Եթէ դուք իմ տեղս ըլլայիք եւ ձեզի միշտ կրկնած ըլլային, որ այդպէս է, նոյնը չէի՞ք խորհեր»:

— Թերեւս իբրաւունք ունիս: «— Հիմա պիտի ուզէ՞ք օգնել ինծի: Խնդրեմ, ցոյց տուէ՛ք քաղաքէն դուրս ելլելու ամէնէն կարն ճամբան»:

— Արագ քայլելով, Թերեւս ժամէ մը կը հասնիս նպատակիդ, եթէ սո ուղղութեամբ երթաս: Անշուշտ գիտես, որ ամէն փողոցի անկիւն կանաչ եւ կարմիր

լոյսեր կան, եւ անխոհեմութիւն չես դրածեր՝ անաստեղով օրէնքները:

«— Գիտեմ, գիտեմ: Մի՛ մտահոգուիք այդ մասին: Ենթահակալ եմ»:

— Ինչ չեմ կրնար հասկնալ, որ մուկ բռնելու փափաքդ որքա՞ն զօրաւոր է, որ կը թողուս Հանդիսող եւ արհամարհորութեան կ'ելլես:

«— Ճիշդ ա՛յդ է ուզածս: Արկածախնդրութիւն: Մնած օրէս ի վեր կը բնակ այս բառը, բայց առիթ չեմ ունեցած փորձելու: Պէտք է շատ կարեւոր եւ շահեկան բան մը ըլլայ արկածախնդրութիւն կոչւածը»:

— Թերեւս իբրաւունք ունիս: Կ'ընդունիմ, որ միօրինակ ու ճանճրայի է կեանքը, բայց ոչ քաղոց եւ գիրկէ գիրկ:

«— Հազիւ թէ հեռաւոր գաղափար մը ունիմ անօթութիւն, ծարաւ, սէր, ատելութիւն, բարկութիւն եւ նման անուններով կոչուած շատ մը բաներու մասին: Եուրջս միշտ կը խօսին այդ բոլորին մասին, բայց առիթ չեն տար, որ ես ալ ճանչնամ այդ բաները»:

— Կը կարծե՞ս, որ մուկերուն մօտ պիտի գտնես ատունք:

«— Մուկերու հարցը տարբեր է: Մի՛շտ, ամէն կողմ մուկ մը փնտռած եմ եւ չեմ յարգած»:

— Գոնէ տեսած ես մուկ կոչուած կենդանին:

«— Գրեթէ ոչ, Բայց վստահ եմ, որ տեսնելու պէս պիտի ճանչնամ»:

— Ենթադրե՛ք, որ որսացիր մուկ մը, Ի՞նչ պիտի ընես: Պիտի ուտե՞ս, թէ պիտի գոհանաս սպաննելով:

«— Օ՛, ա՛յ: Ես ձեզի պէս մարդ չեմ: Միայն մարդիկն են, որ զիրար կը սպաննեն, սպաննելու հաճոյքին համար միայն եւ անոնց ուտելու: Ես պիտի ուտեմ որսացած մուկս, եթէ նոյնիսկ լեզի կամ անհաճոյ ըլլայ միտը»:

— Լեզի կամ անհաճոյ չի կրնար ըլլալ, բայց ամէն տեսակ տաղտոտութիւն կրնայ հաւաքած ըլլալ իր մարմնին վրայ»:

«— Մինչեւ որ չտեսնեմ, չեմ կրնար որոշել, թէ ի՞նչ պիտի ընեմ»:

— Աղտոտութեան ակնարկեցի, որովհետեւ կ'ըսուի, թէ կատունները կարագ-

ներուն պէս շատ մաքրակեր կ'ըլլան :

«— Այդպէս է : Ուրեմն, կրկին շնորհակալութիւն եւ մնա՛ք բարով :

— Յաջողութիւն կը մտայնեմ : Երթալէ առաջ շե՛ք օւզեր անունդ յայտնել ինծի :

«— Կատու, պարզապէս : Տանտէրնեբըս տիմար անունով մը կը կոչեն զիս : Այնքա՛ն նուստացուցիչ է, որ նախընտրելի է չկրկնել :»

— Կը հասկնամ : Փոնփին, Չինչին կամ նման անուն մը ըլլալու է :

«— Աւելի ախմար : Մնա՛ք բարով :»

Կատուն արագ քայլերով յառաջացաւ դէպի «Կեանք», ու ես անդրադարձայ, որ երէք հանրակառքեր եկեր-անցեր էին, մինչ կը խօսէի անոր հետ :

Այդ օրը ոչ հասայ դործիս :

Յաջորդ առաւօտ, ժամանակէն քիչ մը առաջ հասայ հանրակառքի կայանը, համոզուած ըլլալով, որ կատուն դարձեալ հոն պիտի ըլլար :

Հոն չէր :

Յանկարծ, երբ հաստատեցի, որ հոն չէր, հետաքրքրութեան շատ բուն ալիք 'ը փոթորկեց էութիւնս :

Այդ կատուն պատասխանատուութեան զգացում մը արթնացած էր մէջս : Ինծի այնպէս թուեցաւ, որ իմ պատասխաններուս պատճառով նետուած էր արկածախնդրութեան մը մէջ, որուն չէր պատրաստուած :

Միայն չէի անշուշտ :

Պէտք է համոզէի զինք, որ տունը վերադառնար, ուր ամէն բարիք կը վայելէր : Ի՛նչ որ ալ ըլլար կացութիւնը, իր դիրքը չէր կրնար փոխել : Պիտի ապրէր՝ ստունց դիմնալու, թէ ի՛նչ է սեռային զգացումը եւ ինչո՞ւ համար տանիքներու վրայ արիւնտ կտիւներով կիրարկուած զուգաւորումի արարողութիւնը այդքան կարևոր կը նկատէին միև կատուները : Իսկ մակե՛րը, Կ'ենթազրեմ, որ դիւրաւ պիտի մոռնար :

Ահա՛, ուրեմն, նոր հարց մը :

Հին տանն ներքինինք եւ Գաւթրա-Թիներ կային :

Արդեօք դիտնական մը ռուսմասի-

րա՞ծ էր ներքիններու կեանքը : Թերեւս՝ այս, Ինչո՞ւ համար չհանդիպիլ քաղաքապետական զբաղարանը եւ փնտռել, Բայց երբ նման ռուսմասիքութեան մը մասին կը հարցնէք զբաղարանի պաշտօնեային, ապահովարար արդահատանքի արտայայտութեամբ մը պիտի շափէ ձեզ, կարծեւով, որ դուք էք ներքինին եւ կ'ուզէք ձեր բարտակիցները ճանչնալ :

Իսկ եթէ ներքինինքն ալ մեզի շափ երջանիկ կրնան ըլլալ կամ թերեւս ալ աւելի երջանիկ, այն տանն աշխարհի կարգաւարքը պէտք պիտի չըլլա՞ր փոխել :

Ո՞վ ըսած էր արդեօք ձեր կատուին, որ քաղաքէն դուրսի դաշտերուն մէջ մուկերը իրեն կը սպասէին : Ա՛ն ալ արդեօք տեւական օտարերու մէջ ապրած էր միշտ, ինչպէ՞ս՝ մենք : Այս սուտերը միշտ ալ նեղացուցած են զիս : Բայց կ'երեւի, որ քաղաքակրթութիւն կոչուած բանը հիմքուած է սուտի վրայ : Թերեւս ալ բարոյական կոչուած բանն է, որ սուտով շինուած է : Եւ սուտը մասնաւոր կերպով կը թունաւորէ եւ կ'այլափոխէ ձեր սեռային էութիւնը, որ անտարակոյս Ֆրէյտայնի շատ առաջ մեզ կառավարած է ա. դեռ կը կառավարէ : Օր մը, Թերեւս, այս հարցը բոլորովին լուծելու համար մարդոց սեփականութիւնը ամլացուած պիտի ըլլայ, ինչպէս կ'ամլացնեն կատուները, շունիքը եւ խոզերը : Այն տանն քաղաքակրթութիւնը շատ աւելի արագ կերպով պիտի յառաջդիմէ, ըստ այն նողկալի դիտուններուն, որոնք կը կարծեն, որ սեռային պահանջներէ հեռացուած մարդիկը աւելի կ'արտադրեն թէ՛ ճարտարականութիւն եւ թէ՛ դիտութեան մէջ : Ես չեմ հաւատար եւ կը հակառակիմ ատոր : Ամլացուած կատուն կամ մարդը այլեւս ո՛չ կատու է եւ ոչ ալ մարդ : Ո՛չ մուկ կը բռնեն եւ ոչ ալ աւելի կ'արտադրեն : Բայց ինչո՞ւ համար մոռցած էի այս համոզում մըս յայտնելու երէկ առաւօտ այս կատուին : Թերեւս յաբողջի ետ կեցնել իր դիտաւորութենէն : Ո՛ւր դաջած էր արդեօք՝ Կրցա՞ծ էր մուկ մը բռնել, թէ՛ զո՞ր դաջած էր արկածի մը : Հիմա ինքզինքիս խոստովանեցայ, որ անոր ծրարիքը այնքան ալ դէ՛լ չէր թուացած ինծի երէկ ա-

առուտոյ, բայց հիմնական սխալ մը կար: Պիտի յաջողէի՞ արդեօք զտնել այդ սը-
խալը: Գիտեմ, որ ամէն օր, ամէն վայր-
կեան սխալ կը գործենք զրեթէ միայն: Մեր ծնունդն իսկ սխալ մըն է սպանովա-
բար, եթէ չեմ չափազանցեմ՝ այս ստղատ-
կազուցիչ խորհրդածութիւններու բն-
թացքին:



Մտաւորապէս շարժի մը ետք, ա-
ռուտուն, նոյն հանրակարգի կայանին
մէջ տեսայ կատուն, որ կարծես թէ ինծի
կը սպասէր, աւելի առաջ եկած ըլլալով:
Եկաւ-քունեցաւ տարատիւ եւ մշակելով
աչքերը յոտեց իմ աչքերու: Երկարացած
ու աղտոտած էր, բայց տկարութեան նը-
շան ցոյց չէր տար:

— Վերադարձայ, — ըսաւ, — պա-
ղատազին շեշտով մը: Գիշ առաջ հառայ
հաս, բայց առեն զտոնալէ տառ ռազցի
տեսնել ձեզ, թերեւս ալ վերջին անգամ
ըլլալովս:

— Ինչո՞ւ համար վերջին անգամ ըլ-
լայ մեր հանդիպումը: Ես միշտ պատ-
րաստ եմ խօսակցելու հետդ: Իայց նախ
ըսէ՛ ինծի: Ի՞նչ պատահեցաւ: Մուկ բըռ-
նեցի՞ր: Փափաքդ առի՞ր այդ բանէն:

Կատուն զլուխը վար հակեց եւ պահ
մը լուսթիւն տիրեց մեր միջեւ: Ենթա-
դրեցի, որ ամօթաւոր էր իր բրածին հա-
մար եւ մուկ չէր կրցած որոտալ:

« Կ'ազալեմ, որ այդ աղտոտ կեն-
դանիներուն մասին չխօսինք այլեւս: Կը
զարմանամ, որ մեր ցեղակիցները այս-
քան տարիէ ի վեր ատկէ հաճելի զբաղում
մը չեն կրցեր գտնել: »

— Գրած են անշուշտ, բայց զժբար-
տարաբ քեզի համար մատչելի չեն այդ
զբաղումները:

« — Կը հասկնամ: Գարձեալ այդ սե-
ռային գործին կ'ակնարկէք: Տուն դառ-
նալէ առաջ արդէն կ'ուզէի ձեզի խօսիլ
այդ մասին: Գանի կը խորհիմ, այնքան
կը լեցուիմ բարկութեամբ: Տանտէրներս
իրաւունք ունէի՞ն այս ոճրապարս գոր-
ծողութեան ենթակելու զիս: Ըստ մեր
օրէնքներուն, յանցանք չի՞ նկատուի

այս բանը: Եւ ես, իրաւունք չունի՞մ
արդեօք պատիժ կամ հատուցում պահան-
ջելու: »

— Ո՛չ, ո՛չ: Հիմնական սխալ մը կայ
խորհակերպիդ մէջ: Պէտք է դիտնաս,
որ մարդ կոչուած արարածը, ըստ իր օ-
րէնքներուն եւ ըստ իր սովորութեանց՝
միւս բոլոր արարածներուն վրայ ամէն
իշխանութիւն ունի: Կրնայ անպատիժ
կերպով գերեզմարել, շարշարել կամ բռ-
պաննել կենդանիները: Ու երբ այդ կեն-
դանիները իրմէ աւելի զօրաւոր ըլլան,
հերոսութիւն կ'ըլլայ անոնց սպանութեա-
նը: Գիտե՞ս որ որսորդութիւնը ազնուա-
կան հաճոյք մըն է մեզի համար, իսկ
ցլամարտի պէս բաներն ալ ուղղակի հե-
րոսութիւն կը նկատուին:

Պահ մը լուս իրարու նայեցանք:
— Ես կեանքիս մէջ ո՛չ կատու սպաննած
եմ եւ ոչ ալ որեւէ կենդանի ներքինիա-
ցուցած եմ: Ատոր համար ալ յանկարծ
ամօթի զբացումով մը եւ յանցապարտի
պէս նայեցայ կատուին: Հասկցաւ, որ
միւսներէն քիչ մը տարբեր էի եւ ջանաց
զիս սրտապնդել:

« — Միխիթրական է հաստատել, որ
բոլոր մարդիկն ալ այդպէս չեն: Կը տես-
նեմ, որ գոնէ զուք... »

— Ո՛չ, սիրելիս: Պէտք է դիտնաս,
որ կենդանիներու միայն կ'ուտեմ, թէեւ
ես չեմ սպաններ: Իայց երբ ստիպուիմ,
կ'ենթադրեմ, որ պիտի սպաննեմ, անա-
թի չմտալու համար:

« — Ես ալ մտակեր եմ: Ձեզ կրնար
ծեղ մեղադրել ատոր համար: Բնութեան
օրէնքն է, որ մտակեր արարածները ըս-
պաննեն իրենցմէ աւելի տկարները եւ ու-
տեն: Ինչ որ ցաւալի է, միայն հաճոյքի
համար շարշարել եւ սպաննելն է կենդա-
նիները: »

— Իսկ եթէ դիտնաս, որ մարդոց մե-
ծամասնութիւնը միշտ ալ շարշարած ու
սպաննած է նաեւ իր նմանները... »

« — Իսկապէ՞ս... »

— Այո՛, սիրելիս: Պէտք է այլեւս
համոզուիմք, որ այդ ալ բնութեան օ-
րէնքներէն մէկն է:

Լուսթիւն պահեցինք պահ մը:

Ես, որ միւր զրեթէ հում, արիւնտ-

Թաթախ վիճակի մէջ ուտել կը նախընտրեմ, յանկարծ խորհեցայ, որ ի՞նչ կըրնար ըլլալ աշխարհի վիճակը, եթէ մարդիկ բուսական դասնային մէկ օրէն միտքը: Խաղաղութի՛ւն արդեօք: Անշուշտ ոչ: Ամէն կենդանիի բնական յատկութիւններէն մէկն է կոխը, որուն հետեւանքն է նաև սպանութիւնը: Թերեւս ալ եթէ բոյսերու վերածութիւնը... Բայց ինչո՞ւ համար բնութիւնը սրբազրկու մտնի խորհիլ: Եթէ կը շարժարհնք եւ կը սպաննենք մեր նմաններն ու կենդանիները, պատճառը այն է, որ այդպէս պէտք է ընենք: Այս որսամարտութիւնը կրնո՞ւնք հասկննել զո՞րի մը:

— Լաւ է, որ տուն դառնաս, — ըսի մեզմ շնչառով:

«— Ուրեմն պէտք է համակերպիմ խաղալիքի մը կեանքին եւ մոռնամ անհատականութիւնս եւ ներքին պահանջներս»:

— Այդ պահանջներէն մէկը զո՞հացընելու համար չէ՞ր, որ քաղաքէն հեռացար շարաթ մը:

«— Այո՛, անշուշտ, բայց հիմնական սխալի մը գուճ դարձայ»:

— Բայց չըսիր, որ ի՛նչ ըրիր մուկերուն հետ:

«— Ես միշտ կը կարծէի, որ մուկը թշնամի մըն էր, որուն դէմ կռուելը որոշ զոհացում մը պէտք է բերէր կատուի մը արժանապատուութեան, բայց սխալեր եմ: Այո՛, այս հարցին մէջ ալ սխալեր եմ պարզապէս: Արդէն, ո՞ր հարցին մէջ չեմ սխալեր»:

— Պատմէ՛, ի՞նչ պատահեցաւ:

«— Պատահեցաւ այն, որ մուկ կողման արարածն ալ մեր քաղաքակրթութեան շնորհիւ վերածուեր է աղտոտ, ըստորին ու վատագի արարածի մը, որ փոխանակ կռուելու՝ կը փախչի կատուէ մը ու կը զոհանայ մեր կողմանքներով՝ իրեն սնունդ: Ի՛նչ բանի վերածած էք այս աշխարհը...»

— Ուրեմն, չհրցա՞ր մուկ որսալ:

«— Ինչո՞ւ որսայի այդքան ստորին աստիճանի մը ի՛նչ կենդանի մը: Պար-

զապէս՝ ուրիշ զոհ մը քաղաքակրթութեան»:

— Բայց պատմէ, ինչպէ՞ս ճանչցար մուկը, քանի որ դեռ չէիր տեսած հոս: Եւ յետոյ, որքան որ կը յիշեմ մեր մանկութեան պիտքերէն, դաշտի մուկերը չեն նմանիր քաղաքի մուկերուն:

«— Կը մոռնաք, որ բնազդ կուռուած բան մը կայ, ինչպէս որ ուտելիքը կ'ընտրենք...»

— Կամ միւս սեռէն արարածը կը ճանչնանք:

«— Նորէն այդ տխուր յիշատակութեան հասաք: Քանի կը խորհիմ, այնքան կը բարկանամ մեր տնեցիներուն: Լա՛ւ, երթամ տեսնեմ ինչպէ՞ս պիտի գիտաւորեն զիս: Մնա՞ք բարով»:

— Կը ցաւիմ անշուշտ: Մնա՞ս բարով:

Հոս վերջացաւ մեր յարաբերութիւնը: Մնացեալը թերեւս ալ երեւակայեցի, թերեւս ալ իրականութիւն է: Եւ սակայն, դուք վարժուած էք ամէն տեսակ պատմութիւն կարդալու: Եթէ կ'ուզէք, կարգացէ՛ք շարունակութիւնը իրրեւ իրական դէպք մը: Այս կերպով՝ զոնէ նուազ խտտութեամբ կը քննադատէք զիս:

Կատուն երբ տուն դարձաւ, որոշած էր վրէժ լուծել տնեցիներէն՝ իր ներքինիացման համար:

Քանի մը օր լաւ սնունդ եւ փայտայանք վայելիչ էաք, երբ յորժար դատեց, որ ժամը հնչած էր, յանուն իր այն բուրբ ցեղակիցներուն, որոնք մարդոց ձեռքով զրկուած էին սերնդագործելու բնական կարողութենէն, սկսաւ կատաղօրէն խածնել ու ճանկել, նախ՝ մանուկները, եւ ապա ալ՝ մեծերը, որոնք, ի զո՞ւր պատճառ մը փնտռելէ ետք, յանկարծ որոշեցին, որ կատուած էր իրենց կատուն: Անասնաբոյժ մը հասաւ իր օգնակառնով ու առաւ-տարաւ կատուն, մինչ անցիները կատաղաբուժարան մը զրկուեցան:

Մնացեալը հաճեցէք երեւակայել, եւ զիս թողուցէ՛ք մուշտակաւոր բարեկամ մը կորսնցուցած ըլլալու ցաւիս հետ:

Ա Ր Մ Ա Ն Տ

ԳՈՅՆԵՐ, Օ՛, ԳՈՅՆԵՐ

Թերևս կայի՛ք արևից առաջ,
 Դու՛ք՝ ուրիշ հոբանքանգ,
 Գոյնե՛ր, օ՛, գոյնե՛ր:
 Ամեն մի ձայնի միջում ու խաղում,
 Մրտից ու հագուց
 Պարկացուք բառում,
 Խօսում ու սաղում,
 Դու՛ք կա՛ք, կը լինե՛ք՝
 Որպէս երկնառա՛ք
 Հեւք ու ջերմութիւն:
 Առանց ձեզ բնաւ չէր բացուի լոյսը,
 Ու արշալոյսը չէր շառագունի՝
 Ինչպէս որ կոյսը.
 Տասրակը չէր մնչայ շուրջն իր էգի,
 Ու չէր սարսույց ցօղը վազորդեան
 Վարդեմու թերթի՛ն,
 Եւ բնզմտօնոշին դիւր չէր գայ մեղուին,
 Մազիկից-ձազիկ թէթեալ չէր թռչի,
 Ու չէի սիրի ես էլ ուրիշի
 Կրանից բացի.
 Կը խաւարէին երկինք ու գետին
 Ու մանւ, մանւ՝ իմ կարմիր հագին՝
 Առանց այրուելու,
 Առանց սիրելու, —
 Դու՛ք՝ ուրիշ հոբանքանգ՝
 Գոյնե՛ր, օ՛, գոյնե՛ր:

«ԱՄԸ ԿԵԱՆՔԻ»

Ես չունի բնաւ ժամ ու ժամանակ —
 Գալիս է ամառն՝
 Ես գողի մտան:
 Բնական է նա եւ անբնական.
 Բանակահետքի՛ւն,
 Ես չունի երբեք, —
 Մէկ շուն է գալիս
 Ու մէկ՝ ուշանում,
 Շնան՝ւ՛մ ամբամ...
 Գալիս է յանկարծ՝
 Ես անակնկալ մի ցաւի մտան,
 Ու տանում իր հետ
 Մէր, մանուկ ու կի՛ն,
 Ու մերթ՝
 Զծնուած դեռ երկուորեակին...
 Ես չունի բնաւ ժամ ու ժամանակ —
 Առնում, տանում է տեղի-անտեղի,
 Խառնում է յոնոյին
 Ես արցունք լեզի,
 Լսփում է անվերջ ու չի կշտանում.
 Կի՛նց է արգեօ՛ք նա,
 Թէ՛ լոկ արթնացում,
 Վե՛րջ է, քէ սկիզբ նա մի նոր կեանքի,—
 — Օ՛, մահ լինելով,
 Ես հաւն է կեանքի:

ՉԵՌՔԵՐԻՍ ՀԵՏ

Եւ դուք բոցեցիք ձեռքն անկարի,
 Բայց, ափսո՛ս, ափսո՛ս, երբեմն միայն:
 Բալասան դրիք դուք խոր վերքերին,
 Բայց, աւա՛ղ, աւա՛ղ, երբեմն միայն:
 Շոյեցիք զլուխը որբացած մանկան,
 Բայց, ափսո՛ս, ափսո՛ս, երբեմն միայն:
 Թեքեացքերիք ծանր բեռը մարդկանց,
 Բայց, աւա՛ղ, աւա՛ղ, երբեմն միայն:
 Սեղմեցիք յանախ դուք ձեռքեր փափուկ,
 Ձեռքեր կռշտ կապած — երբեմն միայն:
 Դուք գետնից վերցրիք փշուրը հացի,
 Բայց, ափսո՛ս, ափսո՛ս, երբեմն միայն:
 Եւ զարկառուեցիք դուք զողողազգի՜ն՝
 Մեզ հեռուից կանչող որբացած կերան,
 Բայց, աւա՛ղ, աւա՛ղ, չհասաք նրան,
 չհասաք նրան...

ՓԱԿՈՒՄ ԵՄ ԱՉՔԵՐՍ

Փակում եմ աչքերս
 Ու իմ մտքի մէջ
 Մերկացնում եմ ճեղ՝
 Իմ հոգու նման.

ՎԷՐՔՆ ԱՅՆ ԽՈՐՈՒՆԿ

Լեզուով քո փափուկ,
 Աչքերով ամենի,
 Վերքն այն խորունկ,
 Որ դու բացեցիր
 Իմ սրտի վրայ,
 Կա՛յ ու կը մնա՛յ...

Ու հրճուանում խոր
 Վերծանում եմ ես
 Քո կար ու կյոք
 Գծերը մարմնի...

Քանի՛ ամիս ու
 Տարի եմ անցնել,
 Քերտում է այն դեռ
 Այնքա՛ն ճաղքերով...
 Ետում է յանախ
 Ու դեռ նորանում...

Փակում եմ աչքերս
 Ու փորձում եմ ես
 Մերկացնել հոգիդ,
 Եւ կորսում եմ
 Մտուերմեքում խիտ...

— Աչք ա՛վ է սաել՝
 Որ ժամանակը
 Վերքեր է բուծում...

Ո՛ր էր, քէ մի օր
 Մերկամա՛ր հոգիդ՝
 Քո մարմնի նման
 Ու մերձեմա՛ք ինձ,

Նայնամա՛ր ի՞նչ հետ...

ՄԻ ՄԱԴՈՆՆԱՅԻ

Ս Է Ր

Դու քնած ես անուշ՝
 Անձնդ մանկան խաղաղութեամբ.
 Մինչ ես՝ անճամուրթեան մոլիս՝
 Կանգնած սնարիդ,
 Լուսնի ցօղաբուրմ գլուխն ուսիս՝
 Դողում եմ քա վրայ:

Քուրը յանախ անհաշտ եզու ինձ հետ.
 Կոպերս դեռ թեթև եմ շատ.—
 Ասես, երբեք չպիտի քնանամ:

Դու քնած ես խաղաղ՝
 Անհաղորդ հոգուս փոթորկիմ.
 Մի ժպիտ փքքում է շուրթերիդ.
 «Հրեշտակների հետ է խօսում»,
 Ասում էր մայրս սեզիմ,
 Երբ մի մանուկ քնի մէջ ժպտում էր
 այդպէս:

Նու դու ժպտում ես մանկամ պէս,
 Մինչ ես՝ կանգնած սնարիդ՝
 Գեղ կորցնելու վախից
 Դողում եմ քա վրայ:—

Յիշում ես դու, յիշում ես,
 Կաթնայանց այն առաւօտ,
 Ինչպէս կապոյտ մտնուփար՝
 Արեւից շուտ արթնացար:
 Քաղերիդ մէջ երկնամած
 Եռաց կաթը մերկութեանդ:
 Շուշանները ամօթիած,
 Բարի խանդից տենդահար,
 Մուշկ ու կնդրուկ բուրեցիմ՝
 Դողողալով բնդերկար,
 Ծրր քայլերդ եղնիկի
 Երանց թմբին մտնեցան:
 Հովը կրծքիդ կածանում
 Մանկան մտնեք քա՛ կացար
 Ու նետուց դուրս ես յանկարծ,
 Թաւալունելով սրաբթած՝
 Լանջիդ վրայ ազուակամ...
 — Յիշում ես դու, յիշում ես,
 Տատրակները մրնչալով,
 Իրենց էգերը ձգեցիմ,
 Մօտիկ քաշից իջամ վար
 Ու քանեցիմ ուսերիդ:
 Խործները քա սրսփուն՝
 Տա՛ գուաթը ամբերիս
 Հագի՛ւ, հագի՛ւ լցրեցիմ՝
 Գոլ կտրի պէս փրփրում...
 Ու այդ պահիմ, հիպնոսում՝
 Սիրէր յանկարծ առաւ կամգ
 Ու մի պահ շուէր պահեց.
 Երկաթերի շրթիմ թաց՝
 Կախ մնաց ցօղը վաղորդեան,
 Ասես սիրուց քարացած...
 ԱՐՄԱՆՏ

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

— Ռւբ կ'երթան :

— Կ'երթան կայարան :

Չհարցուց ով ըլլալը անոնց :

Աստղերը կը թուէին շարժումի ելլել, այնքան անկատար բան մը կամարին կտաւը կ'ընէր խռովուած : Հով : Իմա՞ստը սա վերին ու վարին, որոնց լուս ճնշումին տակ գրուած է փտի՛լը մեր մարմինին, մա՛նաւանդ անոր հազար-հազար ըղձանքներուն : Անպատշտը տրտում է, մահուան նման, ու ամէն ումայութիւն զուգորդ է մեր մէջ մահուան պատկերին : Ամէն անգամ երբ կը շեղէր հոն, Պարզեւեանին հետ, կը զգար, թէ կը տանէր իր զով դատապարտուած ծեղրութիւն մը : Վրիպած գրադէտը ի՞նչ պատանջ կը կրէր իր մէջ, երբ Մոնան կեցուցած, աւազներուն վրայ իր զաւազանը խաղաղելով ու կոպիճներ թոցնելով, անոր կը խօսէր կեանքին ազբիւրէն, ո՛չ անկէ, որ բաշխուած էր իր գծրախա ճակտին, այլ ա՛յն միւսէն, որ հազար անգամ աւելի գեղեցիկ է մեզի տրուածէն եւ զոր շնք հասկընար, ճանշար իր ատենին : Ու կը բռնէր անոր թեւը, խոր, սո՞մուր, ինքզինքը ազատելու համար այդ երազին կակիժէն ու խուսափումին, անհետ կորուստին սարսափէն : Կորսուած այդ կեանքը :

— Անը՛ւշտ, աշխարհ մը տրուի, «որտա», վանդակին մէջը պտտիկ Մոնային, որ կը կրէր այդ պուտ մը բա՛նը, բայց կ'անդիտէր աւաւտը անոր մեծութիւնը, անհասանելի անոր յիմարութիւնը, փրփրած, յորդելու վրայ, բայց պատեանի՛ն մէջ ջօանամեայ աղլիկներուն : Կը քալէր այդ կաթիլը, քալեր էր, անսկիզբն ժամանակներէ ի վեր, հազար-հազար ձեւի տակ : Ու անոնց աչքին տակ աւազները փշուրներն էին սիրտերու, որոնք օր մը եղան իրենց պէս : Փռչի՛ն, լոյսէ ու մութէ, որ վերն էր, անբաւութիւնը լեցնող ու կաթիլով մը բարախման ելած խորը անոնց կուրծքերուն Մա՛հը : Անդարձ հանգի՛ստը, աղէն ու ջերմութենէն վեր լիութիւնը : Անշուշտ : Բայց եղկելի էր ծերացած գրազէտը, երբ կը ժօանցնէր ինքզինքը, իր մսկոտ ծերութիւնը Մոնային մատաղութեանը, կեանք մուրացողի անհուն պապակով : Հողին ներքե՛ւ : Մահուան պապակը տարափոխիկ է կ'ըսեն : Մօտիկ անց-

եային այս խուժումը, անապատի մուտքին, զայն բրաւ վախկոտ :
Հողին ներքե՛ւ :

Բայց

հողին վրայ,

այն միւտ հանդիսը, որ փայլալի թեւերով, հզօր հանդիսը, գիրկ գիրկի ընկղմումը, որուն մէջ կեանքն ու մահը իրար կը ձեւեն ու կը բզկտեն : Հզօրագոյն ծարաւը, երազը ամէն պարժանի միտին : Անդիժադրելի ի՛նչ կարօտով, անոր մարմինին անդունդներէն բարձրացաւ աղին պապակը, գալարքը, որոնք անոր ջիւղերը կը կճէին Պարգեւեանին հետ, բայց կը սուղուէին չըտուելիք մասնումներուն ճախճախուտին մէջ : Հիմա՛ :

Ու, նման յուսահատ քամահարներն, զոր մահապաքաղ կը ճարէ շուանին դիմաց, անոր մէջէն ասարազի ելաւ ինչ որ արբունջէն աստղ իսկ իրք անձեւ գոյանիւթ քնակեր էր բուրդներուն մէջը անոր միտներուն ու մօրը փախուստէն յետոյ գրաւեր-կեցեր էր անոր ուղղը սեւ ամպին նման, կայծակով յղի, բայց չպատուած :

— Քայլենք :

Ըսողը՝ աղան :

Չհարցուց ճուրջը : Ճարտամօրէն կը հաւատար այլ ճամբուն «ելջիւն», ըսես սպասէր այլ ձայնին, տարիներէ ի վեր : Ըսես դիտնար բարբառը, որ այլ անձանօթը հասկնալի ընէր, մութէն ալ անդին : Հրեց կամացուկ մը զայն դէպի ցած : Երկու սաքով վար էր այլ հողը ճամբէն : Անիկա փորձուեցաւ սեղմել աղուն ափը, ինչպէս կ'ընէր ատիկա անոր հօրը, երբ իջնէին այլ փոսիկը : Բան մը արդիւնց : Աւազները, կուզի՞ն նման, կը դժուարացնէին անոնց քալուածքը :

— Ինչո՞ւ կը կազաւ, — երիտասարդն էր, որ անվարժ աւազին, չէր կրնար սրունքները կռաւարել ու իր տասանումը փոխանցեր էր Սոնային :

— Չեմ կազար :

Չըսաւ աւելին, վասնզի մտեր էր կէս այն դինովութեան մէջ, որով կը պարուրուէին իր կարգ մը զգայարանները, երբ Պարգեւեանի թեւէն իջնէր այլ կիսախրամ տարածութեան մէջ : Անոր կրունկները եղան անկայուն՝ հողին պակասէն : Հովը կը խոնարհէր անոր քայլառակը մինչեւ, զրուելով աւազը՝ ներքաններէն եւ սրունքները ընելով ճօճուն, դէպի աղան՝ լքուող բանի պէս գոնդող : Ձիւնալու համար՝ գրեթէ գրկած էր աղուն մէջքը, այսինքն՝ իրարու առած իրենց թեւերը իրարու մէջքէն : Ու հազիւ կ'անդրադառնար, որ դիժաւ ան դիժ կը կրկնէր այն զգուշաւորութիւնները, որոնց վարժուած էր անոր ձախ բազուկը, երբ այս մութերէն կ'առաջնորդէր՝ ասարաբխտ իրենց զոյգը, ներքին աւելին հիւստապառ ու հեռու մարմինը Պարգեւեանին, դէպի «հանգիստի» քարը, հարիւր քալլ ներսով :

Առանց ինչալու, գրեթէ հիւտուած, աննք ելան ստորտը այլ ապառաժին :

Քարահանք մը չէր ատիկա, ինչպէս հանդիպելի է այնքան յաճախ Պահլիբէի բացերը, օր մը շահադործուած ու լքուած դարերով, այլ՝ տեսակ մը յատակ, զոր կ'նշխրէր ժայռերու ուրիշ գիծ մը, սապատուն ու կրկար, ճիշդ կրնակի մը նման : Բնական նոտարաններու սպաւօրութիւնը կ'անուէր անոնց մէջ : Արեւամուտին դարձած, ապա-

ուսման ցերեկունան տապալան անմատչելի, իրիկուններուն բաւական ուշ ատեն կը պահէր իր մէջ զողոր ջերմութիւն մը, որմէ այնքան ախորժ ունին հիւսիսաւորները: Կապոյտ շարի մը յանձնած իրենց կրեանները հիւանդները հոն կը յամենան, արեւէն բաւական ալ վերջը, երբ բարակ ոտքուտը կը պարտի իրենց միտերէն: Մութին՝ կարգը կ'անցնի ուրիշներու, նոր նուաճուած հազէն ու քիչ մը մակոտ:

Մոնան կը սիրէր այդ սխորչը: Մահակ Պարզեւեանը հոն էր, որ կը դառնար խոր ու խոտովիչ, երբ խնայուած, մութէն աղուորցած, որ անկէ կ'ոտնէր դէմքին դաշուկն ու աչքերուն զիշխանած տրամուսութիւնը, կը խօսէր անիկա քաղցր, կամացուկ, ընկողմանած՝ նմանելու համար ծերութիւններուն աստուածներէն ուժ ապաստող, իրենց ոսկերակոյտը շարժման հանելու: Երբեմն որքա՞ն ծանր է լուսութեան, զբողանքին, կարօտին ու անծանօթ պատակին լեռը՝ մեր ուսերուն վրայ: Անոր տղան ունէ՞ր երազած սա գիշերահալա դրուագին ալ, երբ ծօրը ծամակներէն կազապարի էր տարած իմաստը Պալինն ու կը յաւակնէր տարազիլ խորհուրդը կորաքամակ արքային, մաղերէն սառած, փնտռելով այսահար ախորժոյժ, ջերմիկ իզուսթիւնը, որ կրնն է մեր զգայարաններուն եւ զոր մահը չի կրնար տանիլ ու կը լքէ հոս, կիւները լուծելէ յետոյ աւազին ծոցը, բայց կ'արձակէ անոնց բուրուժը, ինչպէս մեռած ծաղիկ մը կ'ընէ իր հոտին համար:

Առանց անպարանքի՝ զէթ այսպէս կ'ուզէին զգալ ու չէին անդրադառնար յարանուն խոտիքին, զոր մութը կ'ընէր հաշտ ու տանելի: Զգացման յորդութիւն մը յոգնեցուցիչ է միշտ: Նստան ու սուղառածէն եղի տաքութիւն մը դպաւ անոնց մարմինին մերկ մատերուն: Միւս կողմէ՞՝ ժայտին երկարածիք, սապատուն զիծը քնական պատուար մըն էր, հոգին կծու յորձքը կարող:

Իրաւ արք ջարին: Պաղելու վրայ: Անոր այցելեց սարսուռը, զոր ունեցեր էր քիչ առաջ, տղուն նայուածքին սակ, ինքնաշարժին լոյսին մէջ:

Նեղուած:

Անիկա դուրս էր վիպական խոտիքէն, որով տաղաւարուած էր տեսարանը երիտասարդին համար: Բնական, ինչպէս եղած էր այնքան անգամներ, անոր հօրը հետ: Միւս կողմէն՝ անիկա մօտեցուց իրեն արագութիւնը, որով քաշեր էր նորասկիզբ իրենց ընտանութիւնը ու վրդուփուն միութեան, ինքիւրեն շինուող, բայց հաշտ՝ երկուքին ալ խորագոյն ցանկութեանց: Անոր այնպէս կու դար, որ այդ առանձնութիւնը, մանրամասնութեանց սա հանդէսով, յարգարուած էր շատ հետուններէն: Ու Պարզեւեանէն թելադրուած ճակատագիրը ըսես հեղինակն էր սա ժամուն: Տաղանդաւոր արձակագիրը իր ամէն մէկ անկումին համար քաւութեան նոխաղ աստուածներ կը ճարէր, ու սորվեցուցած էր այդ գիտութիւնը սա աղջկան, որուն հոգիին անվերջի հեղինակն էր արդէն: Թող Մոնա Գոհարեանը քիչիկ մը նեղէր այդ հոգին, սա պահուն: Ու պիտի գտնէր ուրիշ ալ աստուածութիւններ, աւելի իրաւ բառով մը՝ ժառանգութիւններ, բոլորն ալ ծլած, հասակ առած ժամանակին ծոցին մէջ ու հասունցած ալ, հիմա, իրենց ծոցին մէջ: Ան՝ որ մութին մէջ իր կուրտին կը կենար հանդարտ, ամուր, խոտովիչ ու ան է, արիւնն էր Մահակ Պարզեւեանին: Բացերէն ուրիշներ: Ստուերուն, սուտ, իրաւ, քակուող, բայց չհալուող: Գաղ զիշէ՞րը կ'ուզէր այդ ձեւերը, դուրս իրենց դադաղա-

տիպ մահիճներէն, թէ Պարզեւեանին աստուածութիւնը — ճակատագիր — կը զլէր զանոնք իրերէն անդին, անապատին խորունկ փոսին խորը, վերստեղծման խնթ կիրքի մը մէջ: Անցան, գրեթէ քուեկով անոնց, ուրիշ զոյգեր, արագ, իրարու մտած: Հոտեր, զգեստի փըշ-բանքներ: Ֆիլլասի մը ճերմկուտուն պարեգօտը: Քահանայի մը նման վերէն վար միակտուր սեւութիւններ, մութով աւելի պայծառացած: Ափրիկեան քաղաքներու գիշերները ունին սա պատրանքները: Նոյն-իսկ արեւի լոյսով մարդ չի դարձանար, այդ քաղաքներուն մէջ գըտ-նելով արեւմտեան կենցաղին բուր նշխարները: Փարիզի մէջ տարագի ալլացում մը ուժգնապէս կը տպաւորէ: Վայրենին ու ծիւնէն Եր-նած շուէտուհին քով քովի կը պտըտին, առանց գիրար, մանաւանդ գիրենք գիտողները նեղելու, Արեւելքի պողոտաներուն:

Յօսքի բեկորներ հասան անոնց: Յնորակուն վայրանկարը կը պատուաւէր, այդ հեծքերուն անհամաչափ նուազովը: Իրենց պէս, պատկերներով: Հո՛վը ի՞նչ էր իր թափէն, ըլլալու համար բարի, մը-տերիմ ու, մանաւանդ՝ ամօքիչ: Կ'ուզէր նստիլ, բայց կը վարանէր այդ փափաքը յայտնելու: Երիտասարդ էր ու կը կարծէր տունները բաւական մօտ, ամայութիւնը՝ ոչ ամբողջ, հեջիաթը՝ դեռ վերաւոր: Իր պատանուիքեան մեծ երազներէն մէկն էր սա գիշերը, բուրո՞վին անծանօթ ու վճռապէս անկէ կատարի մը վրայ ցամաքի մը, քայլի ան-դարձ: Հետը՝ մէկը անշուշտ, իր սարքին մօտ, զինքը կրկնող: Իր արեան մէջ սա պատկերները անիկա աւելի վերջէն պիտի ջանար հաս-կընալ Արեւելքին խուլ մտաներովը հիւստած, երբ հասուն պատանի, մօրը բառերով կազմեր էր իր հայրը, մէ՛կը այդ կախարչ Արեւելքի կոշտներէն...

Քիչ մը աւելի մօտ ձայներ: Տղան — ձայնը կը շինէր զայն — ջանալով համոզել աղջիկը — լուսութիւնը կը շինէր զայն — բարձրա-նայու ժայռի սապատին, ցերեկուան ուղար յիշեցնող: Յայտնի էր, որ զբօսաշրջիկներ էին, բուրգերուն մօտ ըրած հանելի խնթութիւն-նը երկուքով ուղտի մը կռնակը նստած օրօրուելու... Բացի ճերմակ ըլլալ ուղող, բայց շիրցող ձեւերու ստանի մը, ոչինչ որ ըլլար ան-սանելի այդ ճւրջստուն աղմուկին աղբւրէն: Յետոյ աւելի յստակ՝ աղջիկը, որուն հնչել, բայց փափուկ ծիծաղը թափանցելի էր եր-կուքին համար ալ: Լարեցին իրենց ականջները: Հովի բացարձակ դադար: Ու միջոցին մէջ ճամբորդ հծծիւններ, իրարու ճմլուած մի-սերու, եղի ու խորհրդաւոր: Սոնային կուրծքը արագ: Տղան՝ անոր կուշտին աւելի մօտ:

- Ո՞վ են:
- Անծանօթներ: Որքան շատ են գիշերուան մէջ սա յաճա-խորդները:
- Ո՞ւշ ատեն:
- Երբեմն մինչեւ լոյս:
- Ուրի՞նչ գիտէք:
- Ամէն տուն, անապատին մէջ, հանդիսավայր մըն է սա ամսուն...

- Մեզի պէս:
- Թերեւս:
- Ի՞նչ կ'ընեն:

— Կը պարտին, կը սիրեն, կ'ապրին:

Հետուէն լոյսի խաղեր: Բուժարանին պատուանները բացուեցան ու քոցուեցան, ժամը Հնչեց, Լոռութիւն: Մէկը կը մեռնէր: Աղջըկան սա փորձառութիւնները, Հակոյ Հիւանդանոցին վրայ իր երկար առաւանձներուն Հետեւանք, մութերուն մէջ:

— Օտարութեան մէջ ու մահուան առջեւ կեանքը թեթեւ է:

Պիտի թաղուի առանձին ու մայր մը կամ սիրող մը պիտի չառաւպին աւելորդ առաւապանքը:

— Ի՞նչ վտասութեամբ կը խօսիք:

— Քանի տարի է... մարդիկ կ'անապարեն օգտուել զիշերէն:

— Այսքան արա՞գ է ժամանակը:

— Նայելով ճամբուն, ուրկէ կ'անցնի:

— Միրամ'բը:

— Զամբօրդնե՞րը, թէ Հասածները:

— Ժամանակը նիւթին միայն ճամբան է: Մերտերը երբ նիւթ չեն, չունին ճամբայ: Խորհա՞ծ էք արագութեան սովին, որմէ կը տառապինք ըլլորս, առանց զիտնալու, որուն զարհուրանքին մէջ պալար-պալար կու դայ ձեր օրերուն Հեղինակը, Մահակ Պարզեւեան: Ի՞նչեց խօսողին ձեռքը, արագ, տաք, պահանջկոտ: Հանդարտ՝ աղլիկը աւելցուց, իբր բաց պատասխան, զոց այդ պահանջին.

— Խորհա՞ծ էք մանաւանդ մահուան:

— Իմաստունի մը պէտ, զրոզի մը պէտ, բանաստեղծի մը պէտ կը խօսիք, Օրիս'դը:

— Ի՞նչ կայ Հող զարմանալի: Մարդեր չե՞ն անոնք:

— Ո՞վ պիտի կասկածէր այդ մասին: Բայց ներքեցէք, որ Հարցընեմ. սիրա՞ծ էք:

— Ի՞նչը:

— Բայց սէրը:

— Ի՞նչ կայ իմաստութեան ու այդ սիրոյ մէջ:

— Օ՛ր: Տարօրինակ էք: Մահուան վրայ խօսելու Համար զիտուն չըթուաններ պէտք են...

— Թաւիչ չըթուանե՞ր, տղա՛ս, Թաւի՛չ չըթուաններ, ես չեմ ըսողը, ձեր Հայրն է Հեղինակը այս պատկերներուն:

Ու եղաւ լուսութիւն, ինչպէս պիտի ըսէր ՎՄնդոց» զերբէ մը նորատիպ Հեղինակ մը:

Անիկա սեղմեց աղջկան ափը: Ինչն ալ չէր գիտեր, թէ ինչ էր ճմլուող միտի կտորը, իր մատներուն մէջ: Անոր աչքերը կը թուէին տեսնել Արեւմուտքը, անդրանիկ երիտասարդութեան յուզումները, աղջիկները, որոնք կ'անցնէին հիմա իր Հողիին զաշտերէն: Իրեն այնպէս եկաւ, որ Արեւելքի արքայի մը ախորժակներն էին, որ կը բացէին, սա վճիտ, զաղջ զիշերին, Հնքիսթին թեւերով, պարտէզներու մէջ, որոնց ամէն մէկ ծառին կրկնուէր առաւելը զիտութեան ծառին...: Այդ պատկերները անոր մատները կ'ընէին խուլ ու իմաստաւից թըրթուում, գե՛տ, որոնք միտերուն վրայ պիտի ըսեն ինչ որ մետաղը, անկէ առաջ՝ փետուրը ըսեր է մազադաթին վրայ: Ու տղուն ափը նման էր բերանի մը, որ խօսէր:

Մածուցիկ, զերմ, զիշիկ մըն ալ զկծեցուցիչ, այդ բառերը՝ Սոնա Գոհարեանին Համար, որուն պարման միտերը առաջին անգամ,

տաղանապալից գողի մը հետ, կը զգային ժիւս, էրացուած, բայց չհաստատուած խոտիջը, բանաստեղծէն այնքան փառաբանուած: Անոր այտերուն վրայ շատ էին գիրեր, չրթունքներով մեհնազրուած, բայց աւրուած հովին թելովը, առանց անդրադարձի: Չհարցուց, թէ ինչ՞ու կը ճմլէր սա օտարականը իր մասնէրուն սա թարմութեամբը, իր միտերը:

... Ատկէ անգին, սա զարկածը, գիրքերը կ'ըսեն՝ սա սիրարկածը զնաց իր ճամբան անդնդային արագութեամբ մը: Չայն պատմիչ առաջ, անգամ մըն ալ ձեզ կը հրաւիրեմ կանխող հինգ հարիւրէ աւելի էջերուն շրտած իմաստութեան: Ու կու տամ անընական ալ վիզայութիւն մը: Կար ժամանակ մը, ուր այս սողերը գրողը ճերմակ մազերու տեղ, ունէր երկասարդ գլուխ մը, մաշակարտ սակայն, թուրքերուն ամենահաս իմաստութեամբը վճռուած: Պոլիս, 1915: Տպարան մը ապաստանած, ծպտուած աւ բանուոր: Վտանգէ մը իսկապէս չհասար, զիս պատարարող տղան ինձի առն մը պիտի տալինորդէր: Միամիտ այդ երկտասարդը զացեր էր առաջ, յիմարութեանը մէջ, օրէնքէն անգին, ներկայացնելով իր բերնիքը՝ բացատրել մէկը: Պոլսոյ մէջ ոչ ոք, անձանթ՝ հայ երկտասարդին ճակատագրին, երբ զայն կը փնտէին թուրքերը: Ու այդ երկտասարդը չէր տեսած, որ կ'ինքերը, մէկը զանամենի աղջիկ, կու լայինս ... Ինչ հարկ երկարարունելու: Տունէն ներս չմտած՝ վստահ էի ինձի սպասող աղջտին: Բայց իրականութիւնը միշտ յաղթական է երկտասարդութեան վրայ: Գիշերով մտայ ներս սենեակէ մը: Տեքոր, պարմաներ, արզուապարդ կը պատկանէին Լեւոնի Բնանաթիքի մը ճաշակներուն, կարելիութեանդ: Տարբերութիւնը յուսանկարներուն տակ յունարէն գիրերն էին: Յոյն վարձակալի մը հիւրանոցը, հայ առնի մը մէջ: Յոգնած, զողաճար ցորտ սենեակէն, որքան զաղացին վերայ կախ մզմուսանջէն, պիտի անուարէի երկնալ բազմոցին, երբ մտան ներս: Կին մըն էր, զոտասունէն վեր: Տրտում: Նորբ: Իզմիլցի: Հիլլէնակարտակ: Կը խօսէր որոշ շափով թուրքերէն: Հետն էր զանամենի իր աղջիկը: Կը կրկնէր ժօրը նրբութիւնը, իզմիլեան կաղապարը հերքելու աստիճան: Կը խօսէր թուրքերէն, աւելի յետակ: Չհարցուցին ո՛չ անունս, ոչ ալ հանգամանքներս: Գիտէի՞ն, զիս տանողին երջանիկ յիմարութեանը գիտի: Արեւելքի արջայ մըն էի, առնուազն իշխան մը, սա մասաղ աղջկան երեւակայութեանը մէջ: Խօսեցան ինձի իրենց ընտանիքին ողբերգութիւնը: Հայրը մեռած էր Պոլսուս, ջերմուկները: Լոցցին պատճառը: Ունէր մանչ մըն ալ, որ գիշերը կէսէն առաջ շէր գար պառկելու: Նեղն էին: Իրենց հեղինակարտակութիւնը — վաւերական — կը պաշտպանէր զիս, իրենց հաւաստեքովը, ոտտիկանական խուզարկութեան վտանգէ...: Ժամէն աւելի երկարող այս վիպտմէն վերջ, մայրը գնաց պատկեւ շուս: Աղջիկը, Տեսիլեան (գիտէի, թէ օրերը կը նշանակէ բառը) մնաց իմ մօտ: Ժամը չերկրորդուած՝ ան ինկեր էր բազուկներուն մէջ Արեւելքի իշխանին: Հովուերգութեան տարի մը չէր սակայն 1915ը: Երկու օր վերջը, ես պարտաւորուեցայ փախուտ առաջ այդ թաղակներէն, անուշտ իշխանազն չըլլալուս: Խաղցող անոր եղբայրը ոսկի ներքէն, անուշտ պատրիարքարանը անկարող էր հացազին իսկ ճակնզէր ու հայոց պատրիարքարանը անկարող էր հացազին իսկ ճակնզէր հայ հայրական գրադէտին: Կարճ այս պատմութեան իմաստը: Կը տեսնէ՞ք զի վերջը:

Սոնա Գոհարեանին ժամանակ չտրուեցաւ ինքզինքը գլու-
նելու: Լոյսին պակասը, որով անոր հոգեկան անձուկը կ'ըլ-
լար անիմանալի ու, հետեւաբար, աւելորդ, թերեւս պատճառ,
որ դէպքերը, աւելի հիշք՝ դէպքը շատնէր իր շարաշուք ուղղութիւ-
նը: Աղջկան խնայուած սա վախի զգայութիւնները ծածկեցին միւս
կողմէն թուլացման, ընկրկումի, ինքնաժողովման, ձեռքապատման
ծիփոնուս խաղերը: — Բոլորն ալ սեռային արեւելումը հսկող, հա-
կազող, արագող կամ կործանող: ...Սուր հիշ մը, անապատին սիր-
տէն ըսես: Քարերուն ուղղութեամբ ձեւերը իրարու ետեւէն, արագ,
վարագ: Ուրու եւ մարդեր: Անապատային գիւղերնորուն ընտանի աղ-
ջրկան Համար այդ հիշերը շունչին գաղտնիք: Զպատասխանեց տը-
ղուն, որ ուզեր էր հասկնալ: Աղջկայ ամօթիամօթիւն, թէ ուրիշ
հետաւոր վախ...

Պաղը շէր խորացած անշուշտ: Բայց կը զգային զայն քել մը
աւելի ամուր: Ատոր համար էր, որ աննոց մարմինները անգիտակ-
ցարար կը ջանային օգտագործել հովին պղտիկ զարկերը, տղուն փող-
կապին, որ կը քսուէր «թաւիշ շրթունքի» նման աղջկան վիզերուն:
Թերեւս նորէն այդ զարկերն էին, որ բերին տղուն ետեւէն քանի մը
կակուղ գիծ, զգուանքի մանրուք սարսուռներ, մազերու լարերէն:
Ոչ պիտի: Ոչ բռնուած: Ոչ թոյլ: Լոյսը այս պայմանները կարող էր
արժեւորել: Մութը բարիք մը: Բայց կար շտապը: Արագութիւնը
այնքան զգալի, շարժելու անկարող իրենց մարմիններուն խորը լար-
ւած, հանգերձուած: Յետոյ տեսան: Իրարու Համար լուսաւոր, բաց
էին աննոց հոգիները: Ո՞վ պատրաստեր էր սա մտերմութիւնը, ի-
րարու հետ հաղիւ քանի մը ժամերու վրայ երկարող տեւողութեան
կտաւի մը:

Նստան: Քարէ հարթ յատակ մըն էր: Սոնա Գոհարեանին հա-
մար այդ պատպարուած խորլը, սրբազան, արտուած, նոյնիսկ ցա-
ւադին խոտիքներու տեսակ մը խորան: Տան սենեակին չափ ու ա-
ւելի, քանի որ ժամեր կը մնային հոն Սահակ Պարզեւեանին հետ,
իրենց առանձնութեան հանոյճն ու ցաւը «մարտելով», ինչպէս կ'ըլ-
սէր մեծ արուեստագէտը, նկարել ջանալով աննկարելի տազնապը
սա ըզձաւորութեանց, վախնալով իր մէջ ուրուացող լնդուներէն,
սանձելու զանոնք, ներքին արցունքով ու զատնալով մարդկեղէնին...
Իր «հօրը» սա ներկայութիւնը, հիմա, իր կուշտին, ուրիշ պատկե-
րի մը մարմինով, իրեն եղաւ օգտակար, որքան կորստաբեր: Պահ մը
անցեալը, յանկարծաւս կոծուածով մը ողորդեց զինքը: Գոմն էր Սա-
հակ Պարզեւեանը: Ու ինք կը հետեւէր անզոյ ու դոյ (կը զգար եր-
կու իրողութիւններն ալ մէկ ամանակով) այդ մարմինին ալ մտե-
րիմ, որքան կասկածելի մայներուն, զրագէտին թոնիր, եղի զոտ-
նակիւն, զոր զրական գիւտ մը իրրեւ գործածած էր՝ որակելու հա-
մար իր հօրը թաքնուած հօր, անսպառ ճնուարները» (միշտ իր մար-
մինէն իրրեւ սրբազան հանգոյց մը), հիմքերուն՝ ամէն մէկին մէջ
ակաւոր իմաստներ թիւադրող, լեղուններուն, շրթունքներուն՝ հա-
րիւրով, հազարով, որոնք կը բունչէին, կը սպէին, կը լղէին իրաւ
շրթներու ամբողջ արտում ու փափուկ զաղլութեամբը: Վախցաւ,
ինչպէս վախցեր էր այնքան անգամներ, իրմէն աւելի Պարզեւեանին
հաշուոյն, հիմա, իր կարգին, անոր տղուն ալ հաշուոյն: Այնքան մու-
թով պատանուած այդ բանը՝ իր կուշտին, յատակ էր իր ներսի հա-

ժար: Յետոյ ըրաւ թափանցումը ուրիշ ալ բաներու: Սա զգայութիւնները, մ'չ նոր, ոչ ալ տարօրինակ, ահոր այնպէս եկաւ, որ կը կազմէին, կազմէր էին լման կտաւը անոր հոգիին, դեռ անդրանիկ պատանութեան դուռներէն, Պարզեւեանին հետ բոլոր իր առանձնութեանց վրայ պարտադիր ու իրաւ: Ի՞նչ բաղձատեսակ՝ արձագանքները, իր ժարմինէն, այդ պայծառ բխումներուն: Անիկա զոց դիտէր զգայութիւններու հանդէսը, իրմէն ներս, ծանաւանդ իրմէն դուրս: Գրազէտին եղկ ափը ի՞նչ անորակելի բարախում էր իր միտերուն վերայ, թեւ, վիզ, երես: Յետոյ անոր թեթեւ գալարումները, նստելու հարկադրուիլը կամ ոտքի նետուելու ու նայուածքը վախցնելու տեղ՝ ժարմինը վախցնելու շուարումները...: Բայց ահա տւելին: Սա բուզէին, մուքէն խօսող սա ժարմինը երիտասարդ արուեստագէտին պարզ, շատ յստակ, թափանցիկ ու ահաւոր կերպով մը հասկնալի ձայն մըն էր, միակուր ժայթք մը, առանց սխալ շեշտի, ինք ճշդեց մտովի՝ fausse noteի: Այդ ձայնին հայրը երբեք չհզար սա մերկ, արու, մանաւանդ նուաճող զարկը: Հօրմէն տղո՛ւն: Անշուշտ: Բայց չկրցաւ մտածել, որ ջատարղ զարբ խոշոր շերտ մըն էր ժամանակ բուսած չափէն: Ինչ որ կեցուցեր էր անոր հայրը, իր ժարմինին մօտ, սա յստակ բարբառէն, թերեւս շրջանին իսկ նկարագիրը կը կազմէր: Պատեբազէն առաջ, Սահակ Պարզեւեանին համար կիները ժում էին: Պատեբազէն հաջ, անոր տղուն համար, կիները՝ սփար: Մոնա Գուհարեան, իրենց տուէին, ապականութենէն դուստ էր միակ բարեք, առիկա՝ զիքմ ըլլալ կարծելը սեռային ուժանթիղմէն: Գրական իր սարազէն երբ վերածուի սա վտառահարմար իրական իր իմաստին, կը նշանակէ կէս մը ազատութիւն, արիւնքաբերութիւն, արու մէջ արուութիւն: Իր candeurէն փըշուած աղբիկը ներսմ էր զայն փըշողին: Հարցուցեր է ջոնի՛՛ անդամ, ինքը իրեն ու միւս փոխեր մտածումները, պատասխանէն վախնալուն: Ու ահա, իր վտառահարմար, հպարտութիւնը, սեռային ուժանթիղմը, իրարու հետեւ, ուրուացող ու խուսող: Աւելի՛ն. այդ ցրուածութիւնը կ'ըլլար տկարութիւն, սա բուզէին: Ինք կը հասկնար ժարդու լիզուն, հակառակ իր իմաստութեան ետին ապահոված բոլոր հպարտ ազգակներուն բարբէին: Խելամտումը միտակ բառարանի բնակիչ մը չէ, այլ՝ օր մը մէջ վրայ խուժող բեկում մը, բիւրեղացում մը, առնուազն՝ որոշում: Թէեւ ցանցառ, բայց իրական են մեր կեանքին մէջ սա բուզէները, որոնց ընթացքին զգարագոյրը կ'իյնայ մեր աչքերէն, ինչպէս կը պատկերացնէ ժողովուրդը: Տարիներով մեր աչքին պարզ, բնական ձեւ մը մէկէն կը վերածուի իր ներքին իրականութեան, իմաստին: Հարցուցէ կիներուն բուզէն, ուր հոգեղէն նախատէն անոնք դասն առանձին ճեղքը, վերբէն՝ որ զարկաւ իր առաջին մուրճը, ամուր զանգակին վրայ իրենց նկատումներուն: Վէպն ալ ունի իր պահանջները: Անկեղծները գժուարութիւն պիտի չզգան իրենց պատկերը, այնպէս վիրաւոր, շարաւտա, իրենցը յայտարարելէ:

Ուզեց ձայնով լսյա ճարեւ, սա ներքին պզտորումէն յայտնապէս անհանդիսա: Ու զգաց, որ տւելի մութ, նուազ բաներ կը ստանալէին ընդմէջ մտածումին ու կոկորդին: Երթներու ըմբոստութիւնը զրական տարագ մը չէ միշտ: Լուսց, Հան, հաշտ, նոյնիսկ թրթուազին: Աւելի՛ն. պիտի սիրէր, որ մութը հաստանար, զըջալիւն ի թուել, սա հոգեպատկերին վրայ: Բացատրութիւնը զարձակ կու

զար Սահակ Պարզեւեանէն: Անոր ետեւէն, անդիմադրելի, որքան ողբակոծ, գրադէ'ալ, որուն ափերը (տարիներով) պսակեր էին իր բերանին, զինքը ձայնէ, ձայներէ արդիւող, մղելու համար զինք մը-տիկ բնելու ուրիշ բաներ, հեռու, ազօա, սողոսկուն ու գէջ, իր պար-ման աղջկան մարմնեղէն անդունդներէն, քամեր՝ որոնց մասին իր խրատուն, անհանգիստ զգայնութիւնները, ժամանակին հետ, դարձեր էին բնական ըսուելու չափ «յարգարուն» հոգեբանութիւն: Ինքնիրմէ քակուելու ու նոյն ակնթարթին մէջ վերակազմուելու սա ապաւա-րութիւնները, ինչպէս այն ատեն, հօրը հետ, հիմա ալ, աղուն կուշ-տին՝ անիկա կապուած դիտէր զէպի անդունդ հեղուսի մը, հոսուսի մը լառ յստակ նախազացման մը: Այն ատեններուն, ինչպէս հիմա, դազրոծ էին արտաքին աշխարհը, իրը նկատում, թելադրութիւն, տգեղութիւն կամ շնորհ: Մտնուանդ անով պայմանաւոր հազարու-մէկ շուարումներ: Այն ատեն ալ, ինչպէս հիմա, անիկա մինակ էր զստիթափի շրթունքին, որ զինքը կ'ուզէր: Գիտէր իր սրունքները մասով արդէն քալուած զէպի պարուզը, դիրքերը կ'ըսեն՝ անդուն-դը, որ միւս հովին մէջ պիտի շփոթէ ինքզինքը, այլեւ երբեմն մեր հոգիներուն ներքը: Ենչակեզմ ըլլալու մօտ պրկուած, ինքզինքը ա-զատելու համար սա մտայլ հեղումէն, Սոնա Գուհարեան ըրաւ քանի մը շարժումներ, անդիտակից, բնազգական, հինքզինք հաւաքելու, վարէն վերջ ու անկումէն առաջ: Դողա՞ց անիկա, որպէսզի տղան խօսէր.

— Կը ժօխո:

Զպատասխանեց սակայն: Կան տաք սարսուռներ: Զէր մտեր: Ու դիտէր իր դողը, որ արտաքին աշխարհին հետ շունչեր ոչ մէկ ա-զերս: Նեղուեցաւ սակայն: Թափանցիկ էր աւելի, որքան պիտի չու-զէր: Մտքին ներկայացաւ ջանքը ինքզինքը պաշտպանելու, զպար-տրկելու, ինչպէս կ'ըսեն: Անզայտ ու անյարիբ, անոր մէջ աղջիկը իր առանգութիւնը թուլցուցած հանգոյց մըն էր:

Իրարու յեցած էին անոնց մարմինները:

Անոնց ափին քրտինք: Կուրծքին՝ ջերմ, խոնաւ ձայներ: Իրա-րու ճամբորդող սարսուռներ: Արման Պարզեւեանին համար, սա պա-հը, չըսելու համար՝ սա աղջիկը, ունէր բանաստեղծական, գէջ բա-տով մը՝ զեղարուեստական տեսարանի մը խոսիքը, մեր քաղաքնե-րու խառնակ աշխարհէն զերծ պարզութեամբ մը հովանաւոր: Անոր մատները կը ծնծէին, մեղմ, յստակի քարերը, երկարած սրունքնե-րը, որպէս թէ ըլլար նուազահանդէսի մը, արուեստական մթութեան մը ծոցը, կանչուած՝ արտայայտելու լուռ նուազարաններու վրայ ինչ որ կազմեց զերազանց նուազը տարիքին, էյնալու վրայ սիրտե-րուն անպարագիծ տաղնապանքը:

Ատոնքը աւելի քան իրաւ, իրենց սէրերու, երազանքին ու թերեւս բնկուածներուն: Թողախաւարներու քաղաքիկը, իր բաց-խբիկ լոյսերով, շէր յաջողեր իր իրականութիւնը պարտադրել անոնց զերազրդուած զգայարաններուն, պրկուած՝ կոծկոծուն, հետզհե-տէ աճող, որպէս թէ ցաւէ մը դառնային այդ մկանները: Ուրուայ-նացած քաղաքիկին փոխարէն, անպատը կը ստանար կարկառ, թանձրութիւն: Զայները, հովը, մշտագիծ պզտորութիւնները հեռա-ցող, մօտեցող ձեւերուն անոր մեծ մարմինը կ'ալիկոծէին: Գիշերը «չիւթահանդէս» մըն էր, այս անգամ իրաւ:

Վարժ. խաղարկութեամբ մը երիտասարդը կը շահագործէր սա պաշտպանութիւնը մութին: Անիկա կտակած շունէր իր ձեռքերուն մէջ դողացող մանրիկ մատներուն ստառապանքէն, որքան փափաքնե-
րէն: Աւ ընտանի վտառնութեամբ մըն էր, որ երկարքի թեւերը ա-
նոր մէջքին, դան իրողով աղեղող: Աւելորդ՝ ստակաւն պատկերը
զհիւստուան մարմիններուն:

Հիմա, շունիկ մը մէջ պղտոր զոյգէն, իրենցմէ զիւ բացօք,
կը շինուէր երգ մը, օտար, շորութեան հակառակ՝ խոնար: Զայնե-
բու մաղխատրու երիտասարդը իսկոյն ճշդնց մայինն նկարագրէր,
կովորդներուն ցեղը: Հիւստային, աւելի նիշդը՝ ծովային — չըսու-
բողբազան — երկիրներու ցուրտ, արաւով արիւն մըն էր այդ ճի-
ւը, անապատին շոր շողին հետ զօրաւոր հակապատկերով:

— Անդիտայի են:

— Գորշ ու ցուրտ մարդերը, որոնց արամութիւնն ալ ներկը-
ւած է՝ մայինն են:

Երգը, միշտ բացէն, թուշային փափկութեամբ, Արեւելը յի-
ւեցնող ալ շերմութիւն կը թուէր փոխադրել: Մտիկ ըրտա ուշադիր,
ինքզինքը հակառութեան մէջ զգացող մէկու մը նման: Աղջիկը հա-
սաւ անոր օգնութեան, վարանմը փարատելով:

— Տանիմարքայի վարժուհին է:

— Արեւելը ըրտ՝:

— Հիւանդ է ու արգելուած էր հայրենիքէն:

— Քովի՛նը:

— Անդիտայի:

— Երիտասարդ:

— Այդ ժողովուրդը ծեր շունի:

— Երգին մէջ, կ'ուզէք ըսել:

Կ'ահնարկէր, ստանց զիստայուն, անհուն այն ազդութեանց,
որոնք այնքան ծանր, աստապազին զդայութիւններ կ'որթնցնեն Ա-
րեւելի կարգ մը խառնածին ձեւերուն մէջ, ընդհանրապէս աղջիկ:
Սուրբան, Պաղեստինը, Եգիպտոսը զեօթններ են սա մշակութիւնուն
(ժարդիտային միւն ալ կը մշակուի): Երկու կամ երեք սերունդի վը-
բայ սեւեռուած հրաշքներ են այդ աղջիկները, սլաւ ցեղերու մաք-
րութեամբ մը՝ մորթէ, լիք ու թուշազեղ, բայց որոնց միտերուն կը-
ծիկները անապատին շարժուն արեան մէջ ըլլան հանգուցուած:
Այդ աղջիկները Պուշոյ մէջ կ'որակուէին զփաշաներու շտաբիդ:
Եգիպտոս անոնք կը խենթեցնէին Արեւելի արքաները: Սոնա Գահար-
եան, ստանց պատկանելու այդ հրաշքներուն, իւրացուցած էր խուլ
զարշաք մը ընդդէմ ցանոս ամերիկուէններուն, երկարապատում,
անկիւնաւոր մարմիններուն: Աւելի՛ն. Արեւմուտքի ամէնէն փարթամ
քաղաքակրթութեանց փորձանքները, ով զիտէ ի՛նչ կրակներ մար-
շաւում, կու սան փախուտ իրենց սուսաններէն, երբ կ'ողողին
Փահիրէն, պանդոններու, զրօսովայրերու մէջ, անկանդնիլ յիմ-
բութեամբ մը պտըտցնելով իրենց անհանդուրժելի ծերութիւնները
— ամէնէն երիտասարդն իսկ այդ միտերուն վաւերական պատասի մը
— հարին կը կրէ — իրենց ահաւոր քոտաքներուն անխուսափելի սպառ-
նալիքներովը, Քանի՛-քանի՛ անդամներ, կիներուն միտին մեծ
օքրելը, Սահակ Պարզեւեան, Սոնայի Թեւին, Թքեր էր զեօթին, մե-
ծաշնիւզ, գայթակղութեան զնով, երբ կ'անցնէր անոնց դօրծիքնե-

բուն հասողութեան դաշտէն, անտարբեր ու լիբր, արժանանալու համար
զանոնք դրդուելու վայելելին...

— Ամէնէն վաղանցուկ թագաւորութիւնը ծայնին է մեր մէջ,
Օրիորդ Գունարեան:

Զգտաստեղանեց: Բեռը անոր մարմինին, տաք, թրթուռ, ի-
բաւ, պատի մը պէս: Մէջքին՝ քաղուկը, ամուր, ապահով: Առաջին
անգամ էր, որ արուն միայն խոտիք, ցաւ ու սրամտութիւն չէր իր
քով, հետ: Անոր իրանը լքած էր ինքզինքը այդ քաղուկին:

— Որքան պիտի ուզէի Արեւելքէն եղանակ մը, մելտաթ մը ը-
նել մտիկ, սա բոպէին, սա անքորով:

— Որպէսզի...

— Ի՞նչ դիմանամ:

Պարզեւեանին ինչ զիտնամը, նոյնքան վեհափառ, անգութ ու
այլուբային, աղուն բերնէն: Սոնան սարսուց:

— Ինչո՞ւ զողացիք:

— Այդպէս: Կ'երեւի անսպասող սկսած է պաշխի:

Երբը հեռացաւ, մարելու վրայ:

— Հողիթո մէջ տեղեր կը զգամ նոր երգեր ընդունելու: Մի-
նակ հողերը չեն, որ կը սպասեն սերմի:

Ինական էր, սա երիտասարդի բերնին սա պատկերը, նոյնիսկ
աղիկ մը զրկելու վրայ:

— Արեւելքը պէտք է սպրիլ:

Ամբողջ սեղմում մըն էր նախադասութեան հետեւող շարժու-
մը:

— Գիբերը ատոր շուքն իսկ չեն տուած, չեն տար:

Մտեցած էին անոր շրթները, զգալու շափ խոնաւ ջերմութիւ-
նը աղիկան բերնին:

— Ինչ կ'ուզէք Արեւելքէն, որուն գաւազն էք սակայն:

— Ի՞նչ դիմանամ:

Երկրորդ անգամ սա բացազանութիւնը դող նետեց աղիկան
բուր մարմինին: Արագ, շրջելու համար՝ յանկարծական, անիկա
տեսաւ օրերը, անոր հօրը, մտիկը իր մարմինին: Ու իրեն այնպէս
եկաւ, որ անստրտ հեքիաթը — իր օրն'ը՝ զբաղէտին խուլ երա-
զանքին ու ըզմաւորութեանց կոհակներուն բախման տակ — կ'առ-
նէր իր վճռական իմաստը: Հեռացուց սակայն մտտութիւնը անոր
շրթներուն, վարժ, մեղմ, զգուսպին նոյնիսկ:

— Միք մէկ բանաստեղծը կ'ըսէր, որ ծերերը կ'ազօթեն...

Ուրիշ՝ կու դար այդ նախադասութիւնը Սոնայի շրթներուն:
Հարցնելէ առաջ, դտեր էր սակայն ծեր չաւնեցող ժողովուրդը, երբ
մտածում ու պատկեր, դէպին մէջէն զգայութիւններուն, որոնք խիտ
պահերու յատուկ հոծութեամբ մը կ'ողողէին անոր բոպէնները: Բա-
ցասութիւն չէ ժամանակի սա զանցումը: Մեզ յաճախ խօսքի կը մղէ
բոպէն: Բայց երբեմն ալ անկէ աւելի կ'ըստոր, այսինքն՝ մեզ տրտ-
բող տապնապը: Սոնա Գունարեան նոր չէր, որ կ'անդրադառնար ծե-
բացած Մահակ Պարզեւեանին, ու ատոր ահաւոր իրականութեան:

— Երիտասարդնե՞րը:

Բառին հետ սեղմեց անոր ափը, մինչև դաստակը հասնող ցա-
ւի զգայութիւն մը թօթուելով աղիկան դաղը միսերուն մէջ: Այս սեղ-
մումը կը թուէր պատասխան մը, հարցումը զունեւորող: Սոնա Գու-

Հարեան ճանչցաւ, ձեռ յտակութեամբ, այդ ճմուռին մէջ անաւարտ, անխոստովան մասը արձակադիրին թափառումներուն, իր ճմարմինին պարտեղին վրայ: Հօրն ու աղուն մատները կը նմանէին իրարու:

— Կ'երգեն:

Պատասխանած ըլլալու համար: Բայց ձայնն ու մտածումը անհարազտ էին իրարու:

— Այն տակն:

Բարձրացաւ բողբոջական երգը, վճիտ, առանց տաք ըլլալ կարենալու: Կուրծքին խաւարումը կանխող սա վերջալոյսը սա վարձուհիին ձայնէն, ունէր սիրտի դպող գրաւչութիւն՝ որքան թախտ: Եղան Իւսկիւտարի բանաստեղծին տրաման, անոր այգիներուն: Իր տարիքն ունէր, հոգ իջած ատեն: Ու ապրեք էր Արեւելիք ամէնէն խորունկ, հեշտախտիկ ոտայնին մէջ, ինչպէս կը պատկերէին զայն ալուրները, մարմինը, մա'նաւանդ բխումները Սահակ Պարզեւեանին: Վճրոփքը բանաստեղծին, դողդիւլէ տաւջ, դտած էր արձագանգելու համար լանջը մը (իր մէկ թելով դպած էր ձախ ստինքին ու ամչցած):

— Ըսած է ձեր բանաստեղծը, թէ երբ ենք ձեր:

Աւելի ամուր, պահանջատ, աղան սեղմեց, լանջէն դրեթէ հեռացնելով, աղջկան թելը: Ինչո՞ւ չէր սպասեր պատասխանի:

— Սիրոյ երգիչ մը, ձեր այդ բանաստեղծը:

— Սիրոյ եւ ցաւի երգիչ մը:

— Երանելի դարձր:

— Այսինքն:

— Երբ սէրը ցաւ էր:

— Այսօր:

— Ո՞վ է հարցնողը:

Անոր մարմինը բառերուն մէջէն, վրայէն ճնշալիցաւ դժողակար, չքացած, զննուած աղջկան, զոր բարեբախտ միջամտութեամբ մը մտիքը կը պատասխարէր, ինչպիսիով եղկելի պատկերին անդաման կործանումը, երբ աղջիկ մը ընկղմելէ առաջ սեռին յորձանքին վրայ, կ'ապրի իր վախն ու յիմարութիւնը նոյն գիծի: Արման Պարզեւը (չտա չէր սխորժեր եսնէն, որ չարաշուք բան մը կը լծեցնէր իրեն, մա'նաւանդ արրունքին ատեն: Արեւելիք արքայացուցեանը հեղեթիս զաւակները ըլլալու էին եւ ոչ թէ սա ու ան երկրին յուշարարը) կը ճանչնար աղջիկները հօրը չափով ու թերեւ աւելի կատարելութեամբ: Այս դարուն առաջին քառորդին քանամենի աղկատարելութեամբ: Այս դարուն առաջին տարի տաղուան իմաստը — կորչիկները — բառին տալով հարիւր տարի տաղուան իմաստը — կորչիկները: Ամէնքն ալ, այս տարիքին մէջ, նոյնիսկ անկէ բաւական առաջ, գիտէին տյնքան, որքան պիտի սորվէր իր թշուառ մայրը, Քարիզէն փախուտսին, զինքը որրի մը պէս ինամեկէն ու կեանքը անխճելու իսկ սիրա յուենալէն վերջը: Ինչո՞ւ չէր ձեռած իր մայրը...

— Ու մահուն երգիչ մը:

— Անշուշտ:

— Մեռած ալ, երիտասարդ, չէ՞:

— Ուրկէ՞ գիտէք:

— Ինչ Հարկ Հարցնելու այդքան պարզ բաներու պատճառը, Սեղմեց ու համբուրեց, իրաւ, սուտ, բնական ու հեշտաթի մէջ, այնքան սա անցումները, զգայութիւնէ զգայութիւն կ'ըլլային արագ, անդիմադրելի:

— Ձեր մա'յրը պատմած է ձեզի:

— Մահը կ'ապրին, չեն պատմեր: Անով է, որ անիկա հոմանիշ է սիրոյ:

— Ի՞նչ արտում էք դուք:


— Ոչ ձեզի չափ: Արեւելքը սուգ է ամբողջ, ահա քանի դար կայ:

Անոր անզգած շեշտը, հանդարտ, լայն, պահանջկոտ շրթները, մա'նուանդ փորձ, վարժ բազուկները կը հաստատէին այդ Արեւմուտքը, որ ազլիկները, կիները, ասոնց խորհրդանշած իրողութիւնը այնքան պարզած, փակած, ազատազրած է իր հմայքէն: Երկար էր անոր համբոյրը, յամառ ազլիկան բերնին վրայ, հարցական ու յանդուզն: Անիկա բռնած էր իր բաց ափին մէջ անոր երկու ափերը, արի, տիրական ու անդիմադրելի:

Միջամտե՞ց ձայնը. կործանող ասուլ մը, բոժոժներու լացը: Տակաւի՞ն: Անպատը ունե՞ր իր ժամը: Անիկո զրանց բոպէն, ահաւոր արագութեամբ, շուր կը հասունանան ազլիկներն: Մոնան ժոռ էր նուազման:

ՅԱՆՈՐ ՕՇԱԿԱՆ

(Շար. 21)



Ս. Պ. ՏԱՏՈՅԵԱՆ

ԾԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԷՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՇՏԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(Հատուած)

Չնդագիտութեան տմբող պատմութեան ընթացքին, կ'ըսէ Պերպլեր-
եան, արուեստի էութեան սահմանումին հիմնական դժուարութիւնը կայա-
ցած է երկու իմացքներու ստեղծած շփոթին մէջ. ասոնք ընկանորէն գե-
ղեցիկին եւ արուեստագիտականորէն գեղեցիկին հարցերն են:

Պարզելու համար շփոթը, կ'առաջարկէ «նախ դասել բոլորովին եր-
կու իմացքները ու ջանալ սահմանել զանոնք իբրոմէ անջատարար»(1), այ-
սինքն՝ փորձել բացատրել, թէ ի՞նչ է արուեստագիտականը եւ ի՞նչ է գե-
ղեցիկը: Կը պատասխանէ՝ արուեստագիտականը այն է, որուն մէջ գեղեց-
կութեան խնդիր չկայ բնու, «իսկ գեղեցիկը այն է՝ ուր այս անգամ ար-
ւեստի հարց չկայ բնա...»(2):

Արուեստագիտական արժէքը կը վերաբերի մարդաստեղծ երեսփի մը.
ուրիշ խօսքով՝ ան կ'անդրանցնի բոլոր նիւթական ստորագրութիւնները (տեղի,
ժամանակի, տեմի, եւայլն), նա'եւ՝ արուեստներու յատուկ սեռերը եւ դրո-
րոցները: «Իրաւ արուեստը», աւելի ճիշդը՝ արուեստագիտական արժէքը ըստ
Պերպլերեանի «բացարձակ» է, ուրեմն՝ «անգրանցական» (transcendental) եւ,
մա'նականդ՝ յաներժական:

Քանի որ արուեստի գործը ամէն բանէ առաջ «մեզ մըն է որոյ կեր-

պերով իրականութեան կապուած, Պէրպլէրեան կը ձեռնարկէ այդ յարաբե-
րութեան եղանակներուն բացայայտումին. կը սահմանէ գիշնատպատկան կա-
յացումը, «վերականգնումը» եւ «զուտ կայացումը»(3) :

— «Գիշնատպատկան կայացումով» իրականութեան կապուած իր մը կամ
իրողութիւն մը գեղարուեստական արժէք կը ներկայացնէ, երբ կ'ըլլայ միու-
թիւնը գործնական նպատակի մը եւ ձեւական ինքնութեան մը: Արժէքը, այս
պարագային, կը կայանայ պաշտօնին, խորքին եւ զգալի տարրերուն բացար-
ձակ միութեան մէջ: Այս իմաստով՝ արարողութիւն մը, ճառ մը, խանութ
մը, բաժակ մը կը ստանան արժէք՝ իրրեւ արուեստի գործեր:

— «Վերականգնումի» պարագային՝ արուեստի գործը, իրրեւ իրակա-
նութեան վերարտադրութիւն մը, պէտք է որ ժօռ ըլլայ իրերու էութեան:
Արուեստագէտը հոս «արուեստագիտական խաբկանք» մըն է, որ կը ստեղծէ,
իրականութեան նո'ր պատկերացում մը՝ «զգալի նոր տարրերու միջոցաւ»
(4): Վերականգնական պրոցեսը կը սկսի տպաւորութեամբ մը (իրրեւ մեկ-
նակէտ), որ արուեստագէտին մէջ կ'արթնցնէ «ստեղծագործ յուզումը»: այս
տպաւորութիւնը արուեստագէտին մէջ «ներգործ անձնականութեամբ թրծը-
ւած կը միաւորուի», կ'ըլլայ համադրոյթ մը: Ուրեմն, արուեստագէտին
գործը ուրիշ նպատակ չունի եթէ ոչ «այդ տպաւորութիւնը արայայտել իր
միութեանը մէջ»(5): Այսպէս, արուեստի գործը կ'ըլլայ տեսակ մը վերա-
կայացումը իր տպաւորութեան, «միութիւնը անոր եւ իր անհատականու-
թեան», եւ այս պարագան է, որ կ'արգիլէ արուեստի գործը իրականութեան
ընդօրինակութիւն մը ըլլալէ: Որով պարզ նմանեցումը իրականութեան տար-
րերուն գումարումն է, իսկ վերականգնումը՝ «այդ գործածուած տարե-
րուն (...) մէջ մտնուած՝ ստեղծագործ յուզմամբ թրծուն ու նոր միութիւն»
մը, եւ այս է, որ կը կազմէ անոր արուեստագիտական արժէքը:

— «Ջուտ կայացման» պարագային՝ արուեստը ինքնանպատակ է, տե-
սակ մը՝ «բազ», որ ունի ներքին օրէնքներն ու նպատակները: Արուեստի
գործին խորքը ստեղծագործական յուզումն է, եւ անոր տարրերուն ներքին
միութիւնն է, որ կը կազմէ արուեստագիտական արժէքը(6) :

Բոլոր պարագաներուն մէջ, արուեստի բոլոր սեռերուն եւ կատարման
եղանակներուն՝ «չարայար գործողութիւն մըն է որ կը շարունակուի, միե-
շեւ կատարում, այն է՝ իրականութեան — խորքի մը գաղափարական միա-
ւորման նիւթեղէն-Ձգալիի մը մէջ արտայայտումը»(7) :

Արուեստի գործը Ձեւի եւ Ոգիի ուժական եւ տիպիկէթիք միութիւն
մըն է, եւ այդ միութեամբ է, որ կը լափուի իր «արուեստագիտական ար-
ժէքը»: Կը սահմանէ արուեստը իրրեւ «Գործ» որով կը գոյաւորուի Ձգալի
Ձեւ մը, ուր Ոգի մը կը շնչէ, կամ Ոգի մը, որ Ձգալի Ձեւի մը մէջ իրագոր-
ծուած է»(8) :

Պէրպլէրեան չի բացատրեր իրորքը կամ Ոգին, որ, ըստ երեւոյթին,
արուեստի գոյաւորողն է: Բոլոր միութիւն փորձառութիւններուն նման՝ Ոգիին
ըմբռնումը արուեստագէտին կողմէ, կարծէք թէ կ'իրագործուի յայտնատե-
սութեամբ (intuition): Հետեւաբար, արուեստն ալ կը մօտենայ միութիւն-կրօ-
նական մակարդակին:

Բնականօրէն գեղեցիկը գուգահեռ իմացք մըն է արուեստագիտականօ-
րէն գեղեցիկին, երկուքին միաձուլումով է, որ Պէրպլէրեան կը յուսայ ար-
ուեստի էութեան բացայայտումին հասնել:

Գեղեցիկը կը սահմանէ միութեան եւ ներդաշնակութեան տուեալներուն հիման վրայ(9) :

Իր գեղեցիկի իմացը կը հետեւի դասական իմաստասիրական դպրոցներուն . սոկրատեսական ժնարքով մը՝ նախ կը ձգտի սահմանել էութիւնները, ապա ինքն ինքն՝ պատասխանել զի՞նչ է ներուն, ապա կ'որոտագծէ յաւերժական էութեան բաղկացուցիչ տարրերը . ասոնք զուտ զիտէաններն են, որոնցմէ մէկն է Գեղեցկութիւնը՝ իրրեւ ամբողջականութիւն մը : Դասական չափանիշը ի մտի, արիստոտէլիան գեղագիտութեան հետեւելով՝ կը տարբադազէ Գեղեցկութեան իմացքը իր նիւթական եւ աննիւթական կողմերուն, զգոյսացուցիչ ազդակներուն լոյսին տակ :

«Ըստ ինքեան» գեղեցիկին մէջ ներդաշնակութիւնը, կ'ըսէ, կը պարտաբէ տարբերու ալլազանութիւն մը, որուն մէջ է, որ պիտի յառաջանայ տարբերու ներքին հաւասարակշռութիւն մը, կըռոյթ մը : Այսպէս, բնութեան՝ բուսական-կենդանական ալլաբարհին մէջ զանազան տարրեր կամ կազմութիւններ գեղեցիկ կ'երեւին իրենց զանազաններուն եւ գոյներուն ներդաշնակութեան պատճառով : Միեւնոյնն է պարագան արուեստի դարձերուն, ուր ներդաշնակութիւնը եւ կըռոյթը կը կազմեն գեղեցկութեան զոյսացուցիչ պատճառները : Ուրեմն, կը շարունակէ Պէրպէրեան, ճշմարտութիւնը կը գտնենք Արիստոտէլի բանաձեւած տարազին մէջ : «Գեղեցիկը բազումին միութիւնն է, — այսինքն՝ արուած պարագայի մը՝ կարելի ամենամեծ ալլազանութեան մէջ մեծագոյն միութիւնը» (10) :

Հետեւաբար, եթէ ալլազանութիւնը նախապայման է միութեան եւ ներդաշնակութեան, գեղեցկութիւնը չի կրնար դոյութիւն ունենալ միօրինակութեան մէջ : Միւս կողմէ՝ հասկնալի է, որ քոսոսային ալլազանութիւնը ներդաշնակութեան չի կրնար առաջնորդել :

Գեղեցկութիւնը տուեալ տարիային կամ նիւթին զգալի կարգին մէջն է, որ ուրիշ բան չէ եթէ ոչ անոր Ձեւը . հետեւաբար՝ «Գեղեցկութիւնը զգալիին իբր զգալի Ձեւն է»(11) : Ամէն իր կամ գոյ, «Ձեւ» մըն է ամէն բանէ առաջ, ըլլա՛յ բնական կամ մարդաստեղծ, այսինքն՝ լինուած բան մը : Էականը իրեն համար, «Ձեւին» բնազանցական բացառայտուէն անցնել է միւս տարրին՝ «Ուրիշ» :

Պէրպէրեան չ'անդրադառնար Գեղեցիկին առարկայական գոյութեան հարցին, կամ մարդուն անոր դիտակցութենէն անկախ գոյութեան : Եթէ գեղեցիկը, քանիքեան գեղագիտութեան հետեւողութեամբ մարդուն կողմէ կատարուած գատողութիւն մըն է, եւ եթէ առանց մարդկային գատողութեան տիեզերքը ինքնին՝ ո՛չ գեղեցիկ է, ո՛չ ազեղ, ո՛չ պտղ, ո՛չ տաք, անհամ է, անհոտ, պարզապէս՝ անտարբեր, ուրեմն՝ Պէրպէրեանի ամբողջ գեղագիտութիւնը Հիմնուած է իտէական, յաւերժական գոյութեան հաւատքին վրայ : Ասիկա, ըստ իրեն, ոգեկան մակարդակ մըն է, որմէ կը սերի մեր հոգին եւ իրրեւ անկէ մասնիկ մը . հոգին ըլլալով այդպիսի իրողութիւն մը՝ կը յաջողի ըմբռնել զոյս մակարդակները (նիւթականը եւ աննիւթականը), ապրելով զոյս ժամանակներուն՝ արտաքինին եւ, ժամանաւորաբար՝ ներքինին մէջ :

Իրրեւ տիեզերքին հիմնը որդ տարածքը, հոգին կարողութիւնը ունի ըմբռնելու գեղեցիկը իրրեւ միութիւնը թէ՛ բնականօրէն եւ թէ՛ արուեստագիտականօրէն գեղեցիկին :

Գեղեցիկը, իրրեւ համադրումը արուեստագիտականին եւ բնականօրէն գեղեցիկին՝ կը բացատրէ Պէրպէրեանի ըմբռնումը արուեստի էութեան : Ան բացարձակ եւ անհրաժեշտ յարաբերութիւն մը կը դնէ երկու իմացքներուն

միջուկ, ինչ որ մէկն է, անպայմանօրէն նաեւ միւսն ալ է, եւ այս տեսակէտը կը ներկայացնէ շորս թէղհրու միջոցաւ.—

- ա.— Ի՞նչ ու Արուեստագիտական է՝ աստ՛վ իսկ Գեղեցիկ է :
- բ.— Ի՞նչ որ Գեղեցիկ է՝ Արուեստագիտական ալ է :
- դ.— Ի՞նչ որ Արուեստագիտական չէ՝ Գեղեցիկ ալ չէ :
- դ.— Ի՞նչ որ Գեղեցիկ չէ՝ Արուեստագիտական ալ չէ(12) :

Եթէ Արուեստագիտականին պարագային՝ Ձեւի եւ Ուշի միութիւնը նախապայման է, Գեղեցիկին պարագային անհկա սյուզան տարբերուն ներդաշնակումն է, զանո՛վ որ զործ մը կը հասնի Արուեստագիտական Արժէքին՝ անհրաժեշտաբար ալ կը դառնայ Գեղեցիկ(13) :

Հիմնաւորելու համար երկուքը թեզը՝ թէ «ինչ որ Գեղեցիկ է՝ Արուեստագիտական ալ է», Պէրպլերեան կ'օգտագործէ արուեստի դործը ընկալելու գործողութիւնը, ճիշտ այնպէս՝ ինչպէս արուեստի դործ մը Պորթի եւ Ձեւի մեութեան մը արտաւարութիւնը կը ձգէ մեր վրայ, նոյնը կ'ընէ նաեւ գեղեցիկ տարիւն մը, որ «Լէկ քանի» շուրջ միակ զգացում մը կը ստեղծէ մեր մէջ, ուրիշ խօսքով՝ ներդաշնակութեան զգացում մը, գիտակցութիւն մը :

Այս թեզերուն հակաթեզեր անհրաժեշտօրէն կը հետեւին իրենց, ասելի եւս ամբասնդելով իրենց ստորոգեցուցիչ (categorical) յատկութիւնը, այսինքն՝ նախադասութեան մէկ տարրին բացակայութիւնը մեքենակա՛ծօրէն կը զեղչէ միւսը :

Պէրպլերեան կ'նկարակացնէ, թէ «Գեղեցիկութեան եւ Արուեստագիտական արժէքները խորակն կը միանան իրարու՝ մինչեւ Միակ Արժէք մը կազմելը՝ Գեղագիտական կամ Գեղ-Արուեստական արժէքը կամ իսկութիւնը»(14) :

Գեղագիտական «իսկութիւնը» կը գտնուի Ձեւի՝ իմացքին մէջ(15) . Ձեւ ու Պորթ նոյնաօրո՛ժ, Լեցուն Ձեւ . ահա ուրեմն նաեւ ու ի վերջոյ բուն ստուգանիչը Գեղագիտական Արժէքին . ինչ որ կը նշանակէ դարձեալ թէ՛ մէկ յատկութիւն ոչէաք է փնտռել զատելու համար անոր ներկայութեամբը՝ Արուեստի դործին Արժէքը՝ մէկ յատկութիւն՝ Գեղեցիկութիւնը(16) :

Գեղեցիկը Արժէք մըն է, եւ իբրեւ այդպիսին գրականօրէն ստրկուած միւս արժէքներուն, այսինքն՝ բարոյական, ճշմարտական եւ կրօնական արժէքներուն :

— Գեղեցիկը եւ ձշմարտութիւնը . «ձշմարտութիւնը, իմաստասիրական սահմանով՝ համապատասխանութեան կամ պատշաճութեան յարաբերութիւն մըն է ընդմէջ Միտքի մը իմացական ակտին եւ իրականութեան»(17) : Ուրեմն, ըստ Պէրպլերեանի, ճշմարտութիւնը կը կայանայ զլխաւորաբար համապատասխանութեան մէջ, հետեւաբար՝ կայ Լրկու տեսակ ճշմարտութիւն —

— Տրամաբանականը՝ երբ «Միտքի ակտ է որ պատշաճ կ'ըլլայ իրականութեան» :

— Իսրատնականը՝ երբ «իրականութիւնն է որ պատշաճ կ'ըլլայ Միտքին» :

Երկու պարագային ալ, արուեստի դործին եւ իրականութեան յարաբերութիւնը (կենսապատկան կայացումով, վերակայացումով կամ զուտ կայացումով) դործին կը հայթայթէ ճշմարտական արժէք մը, եւ Պէրպլերեան հակադրութիւն մը չի տեսներ արուեստի դործին պարունակած ճշմարտութեան եւ զիտական կամ բնագանչական ճշմարտութեանց միջեւ :

Արխտոտէլէն մէջբերելով՝ կ'ըսէ, թէ «գիտութիւնը ընդհանուրին կը

վերաբերի, իսկ Արուեստը՝ մասնաւորին»։ ուրեմն, մարդկերու տարբերութիւնը որովհանձնեալ տարբերութիւն մը չ'ենթադրենք եւ երկուքն ալ կը հասնին ճշմարտութեան, իւրաքանչիւրը՝ ի'ր մեկնակէտէն: Արուեստի գործը, կը շարունակէ, ըլլա՛յ վերակայացում մը կամ կայացում մը, միշտ կու տայ մեղի իրականութիւններ, աւելի ճիշդը՝ կ'ընէ ճիշտացի մը յայտնութիւնը», իր կարգին զատնալով ճիշտացի բան մը»(18):

Արուեստը կ'ըլլայ բնականցութեան իրադրո՞ւմ (...) մասնաւոր իրերու մէջ, ինչպէս [ուր] բնականցութեան ճիշտ է իւրագործելու բովանդակին վրայ արուեստագիտականին նման հայեցողութիւն մը»(19): Մարմնացած Ձղալիին մէջ՝ «արուեստը իմանալութիւն մը կը փոխանցէ մարդուն»: «Եւ որովհետեւ (...) զգալին իբրեւ զգալի իսկ Գեղեցկութեան մէջ կատարելագործել՝ իրեն յատուկ շքեղանքը ունի յաւէտ (...) պիտի կրնանք հասկնալ՝ թէ որքան իրուացի է սղատնական նշանաւոր բանաձեւը՝ Գեղեցկութիւնը ճշմարտութեան շքեղանքն է»(20):

Ճ.մարտական արժէքը բնականաբար կ'ենթադրէ առարկայականութիւն. եթէ արուեստագիտական արժէքը համարադասարանութիւն մը կը պարունակէ, ուրեմն, Պէրպլէրեան պարտաւորում է պատասխանելու զեղեցկութեան էքստրանական հարցին, ա՛յն՝ թէ «Գեղեցկութիւնը կա՞յ ըստ ինքեան», առարկայորէն՝ թէ կայ միայն մարդուն գիտակցութեան մէջ, ենթակայորէն, այնինքն՝ Եսին հայեցողութեան մէջ ու անով կարելի դատաստանի մը շնորհիւ»(21):

Ըստ իրեն, կացութիւնը հետեւեալն է, — մէկ կողմէ կայ պղատնակին իտէպալաչութիւնը, որ կ'ընդունի, թէ գեղեցիկը ըստ ինքեան գոյութիւն ունի ճիշտացի աշխարհին մէջ, միւս կողմէ՝ կայ քանթեան գեղադիտութեան ենթակայական ուսմանումը գեղեցիկին՝ իբրեւ ենթակային յատուկ գատողութիւն մը(22): Փորձելով ելք մը գտնել, Պէրպլէրեան կ'առաջարկէ, թէ Գեղեցիկը կա՞յ ըստ ինքեան եւ «առարկայորէն», բայց՝ «ի կարողութեան». գեղեցիկը կ'ըլլազործուի «այն ատեն միայն՝ երբ Միտքի մը միւսընկալ ահտին առարկայ կը դառնայ» (23): Արիստոտէլեան լուծում մըն է այդ, որ նոյնիսկ ի'ր հեղինակին ձեռքով ալ չէ յաջողած համոզել իմաստասիրութեան պատմաբանը:

Իրեն համար արուեստի եւ իրականութեան իմացաբանական յարաբերութիւնը կը պալ գանայ իրականութեան բնոյթին ի'ր ըմբռումին մէջէն: Պէրպլէրեանի համար իրականութիւնը ո՛չ անպայմանօրէն առարկայական է, ոչ ալ ենթակայական. այլ՝ «հանդիպման մակարդակն է (...) առարկայական տուեալին եւ գիտակցութեան» միջեւ. ուրեմն, պատճառ չի մնար «Գեղեցիկը չ'ընդունելու իրականութեան իսկ մակարդակին վրայ. չ'ընդունելու առարկայ իրական գոյութիւնը»(24): Պէրպլէրեան ուրիշներու նման այնքան առաջ չ'երթար ըսելու, թէ իրականութիւնը կը պատկանի մտքին, թէ՛ անիկա «մտքի»ն» է: Իրականութիւնը իմացական զործունէութիւն մըն է, աւելի ճիշդը՝ հոգեկան յարաբերութիւն մը միջավայրի մը հետ, եւ իրմէ դուրս փաստերու պէտք չ'ունի:

— Գեղեցիկը եւ Բարին. Արուեստի եւ Բարոյականի որակական նոյնութիւնը հիմնաւորելու համար, Պէրպլէրեան մանրամասնօրէն կը վերցնէ այն հարցը, թէ «կա՞յ անբարոյ արուեստ». կը պատասխանէ, թէ այդպիսի բան չի կրնար գոյութիւն ունենալ, որովհետեւ լարիքը նախ կրուարականութեան մը հետեւանք է, իսկ արուեստը, ընդհակառակն, ազատում մըն է կրթութեան մը հետեւանքէ, իսկ արուեստը, ընդհակառակն, ազատում մըն է կրթութեան մը հետեւանքէ: Իրականութիւնը իմացական զործունէութիւն մէջ, որ անորակաւ

ւած է Ողեղէն Ձեռնն» : Կիրքէն ձերբազատու՛մք, կամ բուժու՛մք՝ Արիստուէլ
բարձրաբար կը կուէ՛ն արուեստին ներգործութեամբ՝ այս վիճակը ազատու՛մ
մըն է կիրքին եղբրականութենէն :

Իրու արուեստը ո՛չ միայն անբարոյ չի կրնար ըլլալ, այլ, ընդհակա-
ռակն, բարոյապէս զրական է իր ներգործութեամբը : Պէրպէրեան կ'ըսէ, թէ
արուեստը անբարոյ չի կրնար ըլլալ, որովհետեւ «Չարիքը հասկէս եսակամ
է (...) իսկ արուեստի գործը արդիւնք է արուեստագէտին մէջ Համայնա-
կան Ուրիին յայտնատեսութեան եւ ներգործութեան, որ կիրքին ու ամէն կար-
գի տպաւորութիւններուն տուած նիւթը՝ Ձեռի կը փոխակերպէ»(25) :

Արուեստը անբարոյ չի կրնար ըլլալ նա՛եւ՝ որովհետեւ նոյնիսկ երբ
տեսակ մը Հրճուանք կը պատճառէ, այդ սղագցումը զուտ ոգեկան է եւ անշա-
հախնդիր, անշփոթելի մեղքին հետ, որ զգայական է, Ֆիզիքական»(26) :

«Բարիքին նման՝ արուեստը մասնակցում մըն է միակ իսկութեան մը
մէջ, եւ անոր յայտակերպումը, «Այդ իսկութիւնը, — կ'ըսէ, — Ողեղանն
է իր Ընդհանրական Միութեանը մէջ»(27) : Արուեստը ձեւական այստեսագ-
ղացութեան» (perception) առարկայ կը դարձնէ իրականութիւնը, իսկ բա-
րոյականը զնոյն այդ Ընդհանրական Ողեղանութիւնը զործնական կամեցո-
ղութիւն» կը դարձնէ : Հետեւաբար, Գեղեցկութեան եւ Բարիի արժէքները
հաղորդակից կ'ըլլան, իբրեւ Համայնական ոգեկանութեան յայտնաբերում-
ները : Արուեստի դործը, մասնակցելով Ողեղանութեան մէջ, միութիւն մը
կը կազմէ անոր տիեզերականութեան հետ, ազատ նիւթին մասնաւորութե-
նէն : Ճշմարտը, Գեղեցիկը, Արուեստագիտականը եւ Բարին իբրաւ դրա-
կանորէն կապուած արժէքներ կ'ըլլան, բոլորն ալ Ողեղան մակարդակին յար-
տակերպումները եւ, իբրեւ այդպիսի երեւոյթներ՝ բաղձալի մարդուն հա-
մար :

— Արուեստ եւ կրօնք : Պէրպէրեանի զեղապիտութեան անկիւնաքարե-
րէն մէկն է Արուեստի խոր յարաբերութիւնը Գեղեցկոյնին հետ : «Արուեստը
ծագում առած է կրօնքին մէջ ու կրօնքին համար»(28), կ'ըսէ :

Կրօնքը իր մասնոցութեան մէջ կը նշէ շատ ընդարձակ իմացք մը. Յա-
ւերժը, կամ Համայնը, կամ Ողին, կամ Աստուած՝ Տիեզերքին զազաթնային
եւ բարձր մակարդակն է, որուն ուղղուած մարդուն ձգտումը կը վե-
րածուի իտեակնոցապի մը. արդիւնքը կ'ըլլայ արտայայտութիւնը հո-
գիին պայքարին՝ հասնելու այդ մակարդակին, միանալով անոր, յա-
ւերժանալու անոր մէջ : Նարեկեան միութիւնիցէն իր ծագումը առած այս
աշխարհահայեացքը իր տրամաբանական-իմաստասիրական եզրակացութիւն-
ներուն հասած է Համայնապաշտներուն միջոցաւ : Պէրպէրեանի դիրքը հա-
րազատօրէն կ'արտայայտուի Միքէլ Անճելոյի հետեւեալ խօսքին մէջ. «Ձկայ
բան մը հողիին մէջ անբա՛ն բարեպաշտ ու այնքա՛ն մաքուր, որքա՛ն ճիշդ
կատարեալ գործ մը ստեղծելու համար»(29) : Ուրեմն, կ'ըզրակացնէ Պէր-
պէրեան, «կատարելութեան նշանին տակ՝ Արուեստը իմքնին մարդոց հաղոր-
դակցութիւն մը կը դառնայ Տիեզերական ու Զուտ Ողիին մէջ, ուրեմն, իմքն
իսկ կրօն (...) է, տեսակ մը պաշտամունք»(30) :

Աստուծոյ եւ աշխարհին կամ հոգեկանին եւ զգալիին յարաբերութիւնը
արուեստի ճամբով, կը մնայ անլոյծ իմաստասիրականօրէն : Առհասարակ,
Պէրպէրեանի ամբողջ զեղապիտութիւնը կը հիմնուի « a priori ճշմարտութիւն-
ներու վրայ՝ յաճախ սղատօրէն եւ առատօրէն օգտագործուած : Նոյնն է պա-
րական բոլոր Համայնապաշտներուն :

Համայնապաշտութիւնը, իբրեւ իմաստասիրական զպրոց՝ կը կործն-

ցընէ իրաւունքը. առկայ տեսակէտները չամբողջ մը չեն կազմեր, ստանձնապէս եւ հաւաքաբար: Եթէ փորձենք Պէրպլէրեանի գիտնականը վերլուծել զուտ իմաստասիրական արժեքափերով՝ շատ բան կը կորուզի անոր արուեստագիտական աւժականութենէն. լաւագոյնն է դայն նկատել զգեղազիտական բնագոյնութիւնը մը: Ո՛ր միայն Պէրպլէրեանին, այլեւ իրմէ առաջ Տէմիրճիպաշեանին եւ Արաքեանին ալ իմաստասիրական գործունէութիւնը փոխած է իր հունը եւ վերածուած հոգեկենցաղի մը, ԸԱԽի մը, ուր արուեստը, կրօնը, միտքը, բարոյականը, նաեւ զրապալտական կեցուածքներ համադրուած են. տարդիւնքը եղած է արտասովոր կառոյց մը, որուն մասերուն շաղախը եղած է ճիշդ այդ միսթիք հոգեկենցաղին ընդունումը: Համայնապաշարը իրողութեան մէջ փոստերու պէտք չունի՝ իր դիրքը հիմնաւորելու համար, թէեւ կը փորձէ: Սպանացի գեղապէտ ձորճ Սանթայանս (1863-1932) կրօնքը նկատելով զերազանցապէս երեւակայական գործունէութիւն մը՝ դայն կը նոյնացընէ արուեստագիտականին հետ: Բարին, ձյմարիտը եւ Գեղեցիկը նպատակներն ու յատկանիշներն են բանաւոր կեանքին. հետեւաբար՝ Աստուծոյ եւ բարոյականի հարցերուն համար իմաստասիրական կամ գիտական փաստերու որոնումը անկարելի եւ անշահեկան աշխատանք կ'ըլլայ մարդուն համար: Կրօնքը, որ միտածամանակ արուեստագիտական փորձառութիւն մըն է եւ փիլիսոփայութեան տարրերութիւնը, կ'ընէ Սանթայանս, կը կայանայ այն իրողութեան մէջ, թէ կրօնքը Աստուած կը փնտռէ տիեզերքի զապաթին, իսկ փիլիսոփայութիւնը՝ անոր յոտակին: Այս պատճառով, կը շարունակէ, փիլիսոփայութիւնը յարատեւօրէն կը բախի դժուարութեանց, մինչդեռ կրօնքը երբեք չի կորսնցնէր իր իտէալը:

Այս իտէալին հետամուտը համայնապաշարին համար կը վերածուի կողմնորոշիչ ազդակի. Իտէալը կամ Աստուած, կամ Ոչին, բնազանցական սկզբունք մը ըլլալով մէկտեղ, կը պայմանաւորէ արուեստը, բարոյականը եւ իրականութեան ամբողջ մարզը:

Իմաստասէրին եւ արուեստագէտին տենչապստ կամ աղբած «հոգեկենցաղը» անշուշտ ունի իր ներքին տրամաբանութիւնը, սակայն տեսական գիտնի վրայ ստեղծուած երկուութիւնը՝ կեանքի բոլոր մակարդակները երկփեղկող ազդակ կ'ըլլայ: Մէկ կողմէ ներքին-հոգեկան, եւ անկէ՝ համայնական կեանքին, միւս կողմէ՝ արտաքին-նիւթական կեանքին միջեւ բաժնուած մարզը կը զատապարտուի անվերջանալի տուայտանքներու: Բնութենապաշարութիւնը կրնայ նկատուիլ նեղ կամուրջ մը կեանքի երկու մարզերը իրարու կապող, բայց գործնականապէս, համայնապաշարին համար բնութիւնն ալ զվերացնողը՝ զեր կը խաղայ՝ մարդը նիւթական մակարդակէն հոգեկանին տանող: Առհասարակ կեանքի բոլոր զրական երեւոյթները կը նոյնանան հոգեկաններուն հետ, իսկ նիւթական կեանքին տարրերը՝ եթէ ոչ ժխտական, բայց վտանաբար շէջոք կ'ըլլան, ու-աղբու բաներ հոգեկան կեանքին տընջուած:

Արեւմտաւայ արդի մշակութիւն մէջ համայնապաշարական ԸԱԽը եղած է իմաստասիրական միակ աւանդութիւնը, զրեթէ նիւթադիտակցաբար որդեգրուած Պէրպլէրեանին միսթիք, սեմպոլիստական, հոգեպաշարական հակումները իրենց զրոյշմը ձգած են. անուշտ իր անհատականութեան հմայքը մեծապէս զիւրացուցած է այս հաղորդակցութիւնը, մասնաւորաբար իր սանձարուն պարագային: Իր զաղափարները շատ աւելի արմատական ազդեցութիւն պիտի ունենային մտաւորականներու կազմաւորումին վրայ, եթէ Պէրպլէրեան զաստիճառ եւ զաստիարակ ըլլալէ աւելի՝ նուիրուէր զրականութեան: Իր զբժկամութիւնը կամ անփութութիւնը գրելու՝ կը մասնանշէ իր աշխարհահայր

հասցին աշխարհահան բնոյթը: Ինչպէս Պրաքեան պիտի ըսէր՝ Պէրպէրեան
 քահանայն փիլիսոփան է, որ կ'ապրի՝ իր փիլիսոփայութիւնը. որովհետեւ ըստ
 Պրաքեանի՝ իմաստասիրութիւնը չկը մեանայ խորին Ծագնոյ իրրեւ. անոր
 ատեսակ ժը բանածեւութըն եւ զարդարացումը: ուրիժն, Կփիլիսոփային ու-
 րիչ բան չի մնար ընել բայց (...) ապրիլ զախն համարձակ(ՅՆ):

ՍԵՆՏԻՄ ԳԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- | | |
|--|--------------------|
| (1) Մ. Ռ. Պէրպէրեան, <i>Կրօնագիտութիւն եւ պնդութեանց</i> (Խաւսեց եւ խմբագրեց
Ա. Տէր Խաչատուրեան. Պէյրութ, Յգ. Կ. Տօնկեան եւ որդիք, 1975, 414 էջ), էջ 122: | |
| (2) Նոյն, էջ 124: | (10) Նոյն, էջ 170: |
| (3) Նոյն, էջ 125: | (17) Նոյն, էջ 172: |
| (4) Նոյն, էջ 127: | (18) Նոյն, էջ 180: |
| (5) Նոյն, ամպ: | (19) Նոյն, էջ 181: |
| (6) Նոյն, էջ 126: | (20) Նոյն, ամպ: |
| (7) Նոյն, էջ 129: | (21) Նոյն, ամպ: |
| (8) Նոյն, էջ 131: | (22) Նոյն, էջ 182: |
| (9) Նոյն, էջ 150: | (23) Նոյն, էջ 183: |
| (10) Նոյն, էջ 182: | (24) Նոյն, էջ 184: |
| (11) Նոյն, էջ 183: | (25) Նոյն, էջ 190: |
| (12) Նոյն, էջ 185-186: | (26) Նոյն, ամպ: |
| (13) Նոյն, էջ 186: | (27) Նոյն, էջ 191: |
| (14) Նոյն, էջ 189: | (28) Նոյն, էջ 194: |
| (15) Նոյն, ամպ: | (29) Նոյն, էջ 200: |
| (31) Տ. Ջրախան — Իճարա, <i>ճեղքաշխարհ», Ընտիր Երկեր, ճեղքալեզր Խրատ.</i>
(Պէյրութ, 1974, 319 էջ), էջ 55: | (30) Նոյն, ամպ: |

Փ Ի Թ Վ Ը Բ

Պ Ա Լ Ա Գ Ե Ա Ն



Փիթերը Պալապեան մէկն է այն երիտասարդ գրողներէն, որոնք Հասակ առին Միացեալ Նահանգներու մէջ, ամերիկեան շրջապատի եւ գրական ականդներու մթնոլորտին մէջ եւ անկերէնով կ'արտայայտուին:

Ինչպէս «Տխար օրեր լռսի» անուն Հատորի էջերէն երեւան կու գայ, Պալապեան բնութանը, ջարդերէն անմիջապէս հոգ՝ Թրանսայի ճամբով անցած է Միացեալ Նահանգներ: Ըստ բանաստեղծին մէկ նոթին, մեծ Հայրը՝ Տիգրան Պալապեան, սերտ կապեր ունեցած է Միամանթոյի Հեռ եւ այս վերջինին «կարմիր լուրեր»

բարեկամէս» Հատորը հիմ ունեցած է այս կրկուքին նամակագրութիւնը...

Պալապեանի մեծ մայրը՝ Նաֆինա Արուսեան (մահացած Նիւ Ճըրզի, 1964ին), կարեւոր ազդեցութիւն պէտք է ունեցած ըլլայ Փիթրը Պալապեանի վրայ, որովհետեւ, իբրեւ շնարական կամ բանաստեղծական անհատականութիւն, տիրական ներկայութիւն է «Տխար օրեր լռսի» Հատորի էջերուն:

Հատորը, իր երեք բաժիններուն մէջ, ջարդի եւ մերսայրածներու ցաւին յաճախանքի մթնոլորտը կը բերէ, որ կ'երկարի երեք սերունդներու վրայ եւ, ինչպէս Քարլոսուան կտորներուն մէջ կը տեսնենք, կը յատկանշուի լռելի եւ մտտեցումի թարմութեամբ մը, որ զայն կը զատորոշէ Հայկական ցեղասպանութիւնը իբրեւ թեմա բնորոշ բազմաթիւ այլ բանաստեղծութիւններու Հատորներէն:

Կենսագրական քանի մը մանրամասնութիւններ տալու Համար՝ բռնեք, որ Փիթրը Պալապեան ծնած է Նիւ Ճըրզի, 1951ին: Պակասոր արուեստի վկայականը ստացած է Պաքնէլ Համալսարանէն, իսկ տղթորան՝ Պրաունէն: Կը զատասանուէ Քոլիկէթ Համալսարանի անդլերէն լեզուի եւ գրականութեան բաժանմունքին մէջ: 1976էն ի վեր, Պրաուն Միթթի Հետ կը խորագրէ գրական Հանդէս մը՝ Չիրակամ հասոց Ռիվուան: Իր առաջին Հատորը՝ «Տխար օրեր լռսի» տեսած է 1979ին:

Բնականաբար, Փիթերը Պալապեանի քերթողութիւնը ամերիկեան գրականութեան կը պատկանի, եւ ձան կրեմիֆին, «Թայմ» գրական յանդիւանքին մէջ՝ իբրեւ այլպիսին կը ներկայացնէ զայն: Եսկայն Պալապեանի բանաստեղծութիւններու ոգին ու մթնոլորտը կը բերեն վկայութիւն մը Պալապեան մարդուն մասին, որ իր ժողովուրդին ապրած դժոխքը կը պատկերացնէ իբրեւ մարդկային խոր ոգութեանութիւն, կ'ընդզդի, կը տառապի եւ միաժամանակ կը զրոհուրէ ապրուած Հաստարմութիւն մը իր արմատներուն նկատմամբ:

Ե. Գ.

A.R.A.R.@

digitised by

ԲԱՆԱՍՏԵՂ ԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՋՂԱՅԻՆ ՏԱԳՆԱԳԸ
ՆԻՒԱՐՔ, 1941

Փողոցին մէջ կը քալէիր, ըսաւ ան,
լուացֆատունը անցար
մրթմրթալով շապիկներում
հետ, որոնք
կախուած էին ցուցափեղկի՞մ՝
անզույժ

Եւ երբ մերս մտար
վանառատունէն՝
գարկիր պարապ տաքամներում
Եւ անոնց համար
սոսք պահանջեցիր:

Մտավանառի
խանութին առջեւ՝
անոնք կովու աչքեր էին,
անոնց գէր, սեւ
գնդիկները լուսնակլոր
հաւաքեցիր կարծիք մէջ,
կարծես առանց

ոչ մէկ բառի
բսկու, թէ
անոնք ոչք են
: պէտք ունին խնամքի:
: Քարմ, կարմիր
ողամբներ վար կախուած,
սկզբները փայլում, հերմակ՝
Յման գործող գերանդիի —
ըսաւ՝ գարկիր հղէգով,
միմչեւ անոնք պողոցացիմ:

Փոխադրակառէն
դուրս գալով ապա,
հոն ձգելով լուծկներն ու տամները,
անհետացար ամբողջին մէջ,
Եւ քալեցիր
կողքին վերջին անձամբին,
կամարքին մօտ գտնուող
յարկարածին մը հետու
Եւ ճատեցար, ջուրներում մօտ
նայելով վար...

հաւատարմութիւն՝
աղջնակիդ
աւելի կարճ քայլերուն —
Հծծող օդը
Օրիթէ մարած
հագուստներէդ
Ոերս կը լեցուէր:

ՀԱՄԷՊԻ ՀԱՄԲԱՆ, 1915

Սրբունքն այրած տերեւի մեան
նոց մը պէտք է
եզած ըլլար՝
Կետապնդող քայլերը ձեր —
յոյս մը օգիտակ,
Շոյնիսկ լեռնէն աւելի բարձր,
դր հոն կ'երգէր
Քու մէկ աչքիդ ծայրամասին,
երբ կը դառնայիր՝
գտնելու համար
ազազակող ծառերն հալած
դաշտերուն մէջ:

ՄԵՆ ՄՕՐՍ ՀԱՄԱՐ,
ՈՐ ԿԸ ՎԵՐԱԳԱՌՆԱՅ

Կարգեցողներուն համար փոշտ,
կապոյտ ներկի արմատներուն,
եւ ոչխարներու
բաց կարմրագոյն ստամոքսներուն՝
կը վերադառնաս:

Նայնիսկ արեւը,
երբ մար կը մտնէր,
չերմուքիւն մը
ուտենքդ կը խոզտացնէր՝
իմչպէս դաշտ մը ասեղներու:
Եւ լոյսին մէջ,
մեռնող հովին հետ,
բլուրէն անդին
ոչխարներ իմչպէս
կոկորդիլները բզբազող տղոց
ունկերուդ մէջ
կը հնչէին տակաւին:

Եւ բարձրորոյրէ շերտփին համար,
կրակի բոցով ըմբոթիքներու
ծակոտկէն սեւ ամմին համար՝
ամառնդ կու տամ
իմչպէս թռչուն մը պիտի կամչէի:

Միրանագոյն պտուղին,
կարած մատներու մեան
ստեպղիմներուն համար,
գետաշատակիմ՝
որ խնձաւ է մարմններէն,
կը վերադառնաս:

Լոուքիւնը հողէն բխող
կը լեցնէր
երկինքը բարձր ու պարապ
եւ շունչդ Քու
հորիզանին պէս
կը համզէր մութին.
կը դառնազէր անէն մզոնի

Թաց ու մոխրագոյն

դաշտին համար այծեամներու,
կնկակներում եւ սրածալք ոսկարներում,
որոնք կը ծփան մտաբերին մէջ,
ես կը շարժեմ
հովով լեցում իմ քեւերս:

կարմիր պզպեզի
վար թաւալող տակառին,
ազգած ջորեմի լեռներում համար,
կոտրած վիզին՝
հունտերով լի մալուած ճարպի՝
կոխարդս բաց կը պահեմ:

Փոքրիկներու խածուած շրթներում
համար,

թուխ կոշտերու աչքերում,
որոնք կը մայեմ բլուրին վրայ,
եւ կիսազգեստին համար ազջնակիդ,
որ լնային կը սարսառայ,
եւ ապա՝ անոր
մանածամանն թեւերում համար,
որոնք կ'իյնան կրակին:

Հում շացուածքէն
բոսորագոյն ահռային միջեւ
ծակուած գառնակին,
գառնակին համար,

որ արեգակին մասն կը դառնայ
շամփտրին վրայ,
անոր աչքերում՝
որոնք կ'իյնան կրակին.
ի եւ կակուզ լեզուին համար,
թռներում համար՝
որոնք կ'այրին
տերեւի պէս դամդադորէն,
եւ ծծակներում՝
որոնք կը ծարին
դեղին կաթ ինչպէս,
դեռ ստամոքսին՝
որ կը բարձրացնէ
բռունցքը իր՝ օրերով լի,
կարմիր բարի պէս՝
որ կը հոսի
առուակին մէջ.

ես կը շարժեմ բազուկներս,
որոնք լի են թռչումներով,
պոռթկումներով չոր,
զգեստներով հրդեհուած

եւ դուն կու գաս,
դուն կու գաս:

ՓԻՔԸՐ ՊԱՆԱԳԵԱՆ

Թարգմ. Յ. ԳԷՐԳԵՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՒԷ

ՓԻՔԸՐ ՊԱՍԿԵԱՆ. «Տխուր օրեր լոյսի»,
80 էջ, Նիւ Եորք, «Հիւի Մետո»
հրատարակչատուն, 1983:

«Տխուր օրեր լոյսի» հատորը ամերիկեան բանաստեղծութիւն է, սակայն, նոյն աստիճանով, «հայեցիկն է հարարեւելեան դիտակցութեան, որ Փիքըր Պալազեանի ժառանգութիւնը կը կազմէ: Հակառակ անոր, որ բանաստեղծութիւնները կը ցուայնեն ամերիկեան աւանդական արժեքայինը՝ արդարութեան եւ անարգարու թիւան կապակցութեամբ, անոնք միտաւորաբար յատկորէն կը փոխանցեն այժմու հայկական անձկութիւնը: Եւր մեծ մայրիկ մը յաջորդաբար կը յայտնուի տարբեր բանաստեղծութիւններու մէջ: Մեծ մայր մը, որ երկար պատմութիւններ կը պատմէ փոքրիկներուն եւ, նոյն աստիճանով, կը յատկանշուի բարոյական ուժով մը, որ կը շրջանցէ իր սկստ մարմինը, երբ էր հայաստանիկացի ժառանգորդներուն մէջ զայրոյթ կ'առաջացնէ աւելի վաղ ժամանակներու օտմանեան սարսափներուն դէմ, եւ թուրքերու ցտայտութեամբ շարունակուող արհամարհանքին՝ այսօր: Հեռուէնէ այս բաները կը փոխանցեն քայքայումի եւ յուսահատութեան այլարանութիւն մը, որ ծնունդ կ'առնէ դարակիրքին հայրերու ապրած անկարողութեան ամօթէն, հայրերու՝ որունք չէին կրնար իրենց զաւակներուն կենսքը փրկել: Ամենապարզ մակարդակի մը վրայ, այս բոլորը կը նշանակեն, թէ մեզմէ ոեւէ մէկը հարկ եղածին պէս չի կրնար ապրել ուրիշներու հետ: Սակայն այստեղ՝ մրցակցող հպարտութիւն եւ յոյս կայ նոյն աստիճանով — հպարտութիւն՝ որ հայերը կրցան դոյառուել դարերու ընթացքին, հակառակ քիչ հաւանականութիւններուն, եւ յոյս՝ որ կրնան

վիճադարձալ իրենց հողերուն: Այս տարբեր տարրերը առանձին-առանձին կուզան Փիքըր Պալազեանի բանաստեղծութիւններուն մէջ, եւ կը շարունակեն իրարու մօտենալ՝ հատորի էջերուն: Թուրքերը ամէն տեղ են:

Գիտէիմք որ կու գայիմ:
Գիշերն ամբողջ կը լսէիմք
սայրը անոնց թուրքում:
Թուրքերն իմ գիտիմքն ազատ ձգեցիմ:
Գիշերն ամբողջ խմեցիմ
եւ առատուան ձիւնն ծնծեցիմ:

(«Ինչ կ'ըսէր ւեծ մայրս,
երբ կ'անձրեւէր»)

Թուրքերը կը գնահատեն կենսքը պարզ ելեւտական շահերով: — «Արեւմտ գիւղը մարդու/հրահանգուած էր՝ 360 քրքակամ/հրամանագրով Սուլթանիմ, որուն զգաց Փիքըր Պալազեան կը հակադրէ փոխարկարար. «Երբ կը լսեմ ցայլաշունը շունչիս սէջ» («Պահանջագիրք»): Սակայն գաղթը կը շարունակուի. մարդիկ կը փախչին ձգելով՝

Կանփի թելեր եւ գլխարկներ,
քերոց, բրինձ՝ կորուած...
Թասիկաֆար, գարդասեղներ՝
քաղաւած հաղիմ Հայաստամի:

Եւ հակառակ անոր, որ մեծ մայրը ապահով Ամերիկա կը հասնի, այլեւս անոր ամբողջութիւնը գոյութիւն չունի անկէ որոշ բաժին մը մնացած է Անատո-

լուի մէջ, եւ ան՝ երկու աշխարհները կը սկսի տեսնել միասամանակ («Առաջին զդային տագնապը, Նիւարթ, 1941»):

Եւ երբ ներս մտար/վաճառատուճն՝/ գարկիր պարսպ տարատներում/եւ ամոնց համար/ոտք պահանջեցիր:/Մտավաճառի խամուքին առջեւ՝/ամոնք կա՛վաւ աչքեր էին./ամոնց գեր, սեւ/գնդիկները յուսնակլար/հաստեցիր կուրծքիդ մէջ./կարծես առանց/աչ մէկ թառի/ըսելու, թէ/ամոնք որդ եմ/եւ պէտք ունիմ խնամքի:/ Եւ թարմ, կարմիր/կողամիսեր վար կախւած./սպորները՝ փայլուն, ներմակ/երման գործող գերանդիի —/Ըսաւ՝ գարկիր եղէգով./մինչեւ անոնք պաշտացին:/

Փիթըր Պալազեան շատ լուրջ է: Ինչ որ կը նկարագրէ ա՛յն է, որ այլապէս չի կրնար հակակշռել: Կ՛ուզէ Հայաստանը վերադարձնել իր մեծ մօր, աւազանի տնունով Նաֆինա Արուսեանին, ծնեալ Տիգրանակերտ, Հայաստան, եւ մեծ Հօր՝ Թոքատի չրջանէն եկած Տիրան Պալազեանին, զոր երբեք չէ տեսած: Պալազեան

կը խօսի ընտանիքի նախկին բարեկամ-ինքրուն՝ բանաստեղծ Սիամանթոյի (որուն գործերու բնագրերներուն ծանօթ պէտք է եղած ըլլայ, որովհետեւ թարգմանութիւններ գրեթէ գոյութիւն չունին) եւ Արշիլ Կորջի նկարչիչին մասին, Սակայն այս ակնարկութիւնները յաճախ անորոշ են եւ քանի որ բանաստեղծութեան ընթերցողը յարգանք ունի բանասիրութեան նկատմամբ, աւելի օգտակար պիտի ըլլար յաւելեալ տեղեկութիւններ ունենալ հատորի վերլուարութեան գետեղումն նոթերուն մէջ: Սակայն մենք երախտապարտ ենք մեզի տրուածին համար ալ, այսինքն՝ Մայ Լայի, Պալազեանի, Կուերնիքայի, Սոմժի եւ, անոնցմէ առաջ, Տիգրանակերտի ու Թրքահայաստանի վերապրողներու մտածումներուն:

ՃԱՆ ԿՐԵՓՓԻՆ

(«Թայմ գրական յանդիւնած», Դեկտ. 16, 1983)

**ՍԱՄԻՐ
ԷԼ - ՍԱՅԵՂ
ԿԸ ԳԵՂԷ
(ՏԱՌԵՐՈՒ ՈԳԻՆ)**



Արարելն աստեղալ զրչարուեսաղ, աւելի ճիշդ՝ գրային զարգարուեսաղ, որ ճնանդն է իւրամական զարգարուեսաղ, ապրեցաւ իր ուրոյն Նալբաթը եւ պայմաններու թերութեամբ զարմաւ իւրամական իտաղը աւարտող կերպարուեսալ (ժողովներ, որ իւրամ կրօնը իտալի արարելն եւ ցարզ կ'արդիւն Յարգարելն՝ Սոււամաճախ եւ անոր յաւերգիներուն զիմանկարուեսն ու այլ նկարներուն զիտեղութեամբ ճգիլիթներուն մէջ), վերջին տարիներուն, սկսաւ ապրիւ նոր պարթեւնի մը, երբ զասական աւանդները շարունակող վարպետ արդիներու զուգահե՛ս՝ հրապարակ իլան այլ զարուար հարտուսիտան նոր թովանդակութիւն եւ նոր տարապ կազմեցաւ միկնակեանն ճամբայ եւան արուեստագէտներ:

Սուլա, Ծարիսի, Տիւտանի, Ռուք'ա, Քուֆի, Ռիւանի եւ այլ տեսակի զասական զրչարուեսան վարպետները (հիներէն՝ Պաճէլ Սեյիմ Պապա, Պաստուփ Տըպրանի, Սեյիմ էլ-Հանաֆի, Ռուսան Ալի, նոր սերունդին՝ Պուրհան Փապպարա, Ատիկ Նաչապա, Պուսաւ Ըսթֆան, Մուսթաֆա Պապա...) մինչ էր փորձելն կենդանի պահել զարուար այս ժողովներու ժամանակակից կանգնուեսան փոխանցելով զարուար ճաշակը եւ ճնանդն յուղղ զիտառեալ իտաղը, անդին՝ իտաղ մը կերպարուեստագէտներ կը ձգակն աւելի փառասանել ուրոսներու՝ այս արուեստին տարողական արդիականացման:

Ձիւնական եւ արեւելեան այլ զիրերու զնչարուարական արուարտարականութիւնն զգուտան աւրեւեստագէտ կարգ մը արուեստագէտներու յաւերգութիւնները (Փուլ Քիւն, Մաթիէս եւ ուրիշներ) ի-


րենց զրական տնդարգարները ունեցան նաեւ աւարտ երիտասարդ զիտանկարիչներու վրայ, որոնք զիմեցին արարական գրային զարգարուեստին՝ աւանոր փլատիլի յատկութիւնն զգուտելու եւ զայն վերացական ճակարակներու զարմարակելու աւանդարտագէտն ճգուտան:

Անա թէ ինչու արդէ պատաստին մէջ արարելն տաղը իրրիւ ազգային երանդ եւ կ'ուրթ ներդրելու, զպատաստը այլ չամալակութիւններով կատարելու փորձերը վերածուեսան իր զիմազիծը ունեցող նորարար շարժումի մը, որուն զիտար զիմեցիլը նշան Սուլա Ա. Ազըլ եւ Ռուսիկ Նուրիէ (Լիբանան), Նաճա Մուհրապի (Քուստուր), Համէա Ապուսալա (Նիդիլուս), Պաճալ Պուլաթա (Պաղեստին), Շիրին (Սուսան), էլ-Մալիկի (Մարտը) եւ ուրիշներ:



Լիբանանցի երիտասարդ թանտեսագիւ եւ արուեստարան Սամիր էլ-Մալիկ, որ վերջին տարիներուն արարական զարգարուեստին շուրջ տեսական թաղմաթիւ ուսումնասիրութիւններ եւ յալաւաւարբեր ստորագրելն, իր տեսական զրգուտաններուն զուգահե՛ս՝ այլ տեսակները ներթափանց զործնական փորձարկումի:

Վերոյիշեալ ճիւղն ներս կատարան իր փորձերը (ան մերթեց զործանել պատասա կամ զնչարական յուղղները) Սամիր էլ-Մալիկ յուղղարգէ ճիւղարտ յուղարտակն մէջ, շինարարութի՝ Յ Մալիկն մինչեւ 12 Մալիա: Թիւրք աւելի զան վաթսուան փորձարտաւար եւ միլակ ճաւախ այս զըր-



լազրուճները (իրագործում՝ պողպատածայր եւ կտրվող գրչով) լայն հետազոտութիւն ստեղծեցին կերպարուեստի եւ մամուլի շրջանակներում մտա, որովհետեւ իր նախորդներուն պէս բնորդ մարդու հասկացողութիւնը մերժելով՝ հանդերձ, այս երբտուարը զրշազիրը նաեւ կը մերժէր տառերուն դրսեւորած խոսքերը՝ վերացապաշտ անտիկներու արդիւնք այդ զրշախաղերով վորձելով բացայայտել մարդուն հո.թիան ներքին անթարգմանելի ալեկոծումները:


Ճնշ որ չէր դուրսի եւ չ'ըսուէրք ընդհանուր անուան առի ներկայացած այս զրշախաղերը — ինչ պետի գործածէր՝ զդրքին վերացումները — հանդիսատեսին կը ներկայանային ծանօթ մակարդակներէն քաշ մը անդին անցնող իրենց յանգրդնութեամբ, ասուելը իր անկախ միտադրեր (ոչ քաղցու խոսքեր) եւ իրեն զեղանկարչական ինչ-նորոյն լեզու մը որդեգրելու բացայայտ փառասիրութեամբ: Կարծես թէ Մամիք էլ-Մայեղի ճեղքը կը հետապնդէր ո՛չ միայն ընթերցուող զրշարուեստին, այլեւ՝ արուեստագէտ ծագիտոյն շնորհով: Այս ապաւորութիւնը ասելի կը հիմնաւորուէր եւ կը դառնար պարզ հշարտութիւն, երբ ակնդիր արուեստասէրը կը նկատէր, որ այս զրշազոտոյն գործերը եւս անստորագիր են՝ յար եւ նման Արեւելիցէ չ'ին վարպետներու զանազան անուակի իրագործումներուն (խաչարհեր, զորդեր, մանրանկարներ, վիճափորաչորութիւններ, փայտի վրայ կատարուած աշխատանքներ, անագնազործութիւններ...):

Այսպէս, ճեղքարը ցուցաբերակն պատերուն եւ սեղաններուն վրայ տեղադրուած ասելի քան

վաթուռ զրշախաղերուն ի տես՝ արուեստասէր աւելը կը մտնուէր ինչպէս չ'զտի մը՝ կարծես ճշդիւ համար այդ գործերուն զեղարուեստական զիմացիները: — արարական-խաղածական մանրագանդակներ, պարսկական զարդանաշխեր, վերացական ճեղքանկարներ, Ֆրեսկոստեղի, շեղհատանի եւ Ատրիեստանի արեւելեան բազալիթութեան ահուճքներէն թիտոս անհասանելի զի.թազրներ...:

Այս բոլորը եւ անոնցմէ արբերք բան մը: Որովհետեւ Մամիք էլ-Մայեղի ծագիտոյր բաւազէ ըմբռնած էր Սուպէ էլ-Աւլայի կատարած արհեստաստուճը, թէ՛ ճփիլը նման է կազիլի՝ ճորդիլի մարմնի մէջ, եւ երբ մտարը ըլլալ ճեղքանկի առ բարի խոսքեամբ՝ ունիլ ստանկի կը դառնայ աչքերու մէջ եւ աստուի հայակալ՝ հոգիներու մէջ: Հետեւաբար, ան փորձած էր թափանցել պիրին ազինն, հնչեցնել թուրքեան կրօնքը թուրքիւնը, սողմնային ճիւղութեամբ յատկանշուող կոծածել, ուղղաճիգ եւ կորցրածական զրշաչորագրութեանով ճեւաւորուող արեւելեան այն միտաի մթնոլորտն ու նշանակները, որոնց մարմնը հեղուկ թանաքն է, իսկ անոնց խոզի՝ այդ զերբերով վերացող վարպետին ներաշխարհի թրթիւնները:

Կարծես թէ ան կը հետեւէր շինացի վարպետին այն կտակին, որ արուեստի գործ մը ծաղկելու համար իր աշակերտներէն կը պատանէր մերապատուիլ աշխարհի խոզիցին եւ մասստան-Նութիւններէն, մտնուլ գիտնուլ, կանոնաւորել իրենց շնչատութիւնը, հանգստացնել մարմինը, ասպա սպասել զարուստին ա՛յն կարողութեան, որ




ժխտի ինչ եւ տարերս յեզուով կրնայ զրահու-
րել առնեցնոց աչ զպարսմենքը, ալ խորով՝
վերացնող ա՛յն խորհուրդները, զորս ամպերը,
քամիները, անձրեւներն ու ծաղկիկները կը բոցա-
յայտեն՝ իրենց նոյնանման թուացող բայց ժխտ
նոր ձէսերով, ինչպէս վերստին անկիկա-
ներով, անսպաս թելադրութիւններու հոգեզմայլ
եզրանկներով:

Եւ այս արդիւնքին հասնելու համար, բունա-
ւեզն ծաղկողը իբրեւ մկնակէտ ընտրած էր գա-
րերու հոյզովթով թիւրիզացած զրշազրուժի ա-
ւանդներն ու մեծերը: Տանձման, արցունքա-
կերպ, կանթիզանման եւ արեւատեղ տանդնե-
րը իր փորձերուն իբրեւ չմեր ընտրելով, ան
փորձած էր նոր բովանդակութիւն եւ վերացա-
դաշտ նկարագիր առ իր զրշափաղցրած եւ յա-
նդած՝ առնուարակի Օրինակ, արեւածեւ զրշա-
զրութիւնն ան առած էր իրենց արտաքին շարժ
պար եկող պիտերու աւանդը, կանձեւ. աստազրու-
մէն՝ ամբողջ միօրիփոխը եւ կամբընձի ու բա-
ժանման շերտկանութեամբ աւելցնող տեսողական
երաժշտութիւնը, որ առաւել կը զգտնակէ խո-
քին շարժպար եւ յափշտակուած աչքին կը փ-
խանցէ մեղմպիներու գարը: Այն արդիւնքութեամբ
սովակն, որ նոյնարեւոյթ զատուած գործի մը մէջ
եթէ խօսքը զողարկուած իմաստութիւն է, սկըն-
դիբ արուեստասերին իր անպայցներն ու զազա-
նիքները կարենայ զակնու. ճաշակն ու զիտու-
թիւնը պահանջող սակեղում, հաս՝ նոյնինքն զերն
է խօսքը, որ իր մարմինն եւ հոգին զատ ուրեւ
ո՛չ մէկ խօսք կ'ընդունի:

Արդէն հոս կը կայանայ այս երկուստարը ար-
ւեստագէտին յանդիմութեան իմաստը, որպէս
փաստարկութիւնը: Իր նախորդներուն վրայ այս
իմաստով յաւելում մը բերող եւ նոր փորձաու-
թեամբ մը իրենց պոյութեան երաւուրը հաստա-
-

տող անոց զրշափաղցրը, արգարօրին, կը հա-
ղիսանան զարդ լմտածուած տեսութեան մը գործ-
նակունացման առաջին պտուղները, որ արարա-
կան տարերուն հեղանկուն մարմինները վար կը
կոխունին սանձերու նման, թուղթին հասակն է
վեր կը զջուրին՝ նազելանձմ զարուհիներու ըստ-
ւերնները յուշելով, կը համարողին թուղթազատ-
տառնն արարածութիւնն զուրս՝ զայն հարկուն-
կանորին գրաւած նաւահերպ զրշափաղցրուն ա-
լիքներով եւ կամ կը բարձրանան անհունն է վեր՝
անհունը պիղկու հոյտուած աստաշարերն զպպա-
նակուած ուղղամիջ Ալիքներու, թուաբու եւ
Նուսերու մէջ թաքնուած հոգիին երաժշտութիւնը
ինչպէս: Իր այս ցուցանանդետով (ինչ պիտի
գործածէր՝ իտաղվանաւրեանց տարազը), Սա-
միր էլ-Սալիչ կու զայ հաստատելու, որ զրշա-
զրութիւնը իր զեղազիտական սիկախ ասրբերը
ունեցող ինքնուրոյն եւ ամբողջական արուեստ
մըն է, խօսքն ո՛չ մէկ մեւով կոխեալ արա-
յայտական յեղու մը: Հետեւաբար, անհրաժեշտ
է, որ անիկա ճառայեցուի միտք մը կամ զգա-
ցում մը թարգմանելու նպատակին, այլ պէտք է
շրջանցէ այս մակարդակը, հետապիսէ իր ին-
նպատակը, այսինքն՝ նախապատրաստէ իր լե-
զուն, որ կը սկսի՝ երբ իր վերջին աստղ կ'աւար-
տի, որովհետեւ անոր խօսքը միայն իր տարերուն
մէջ լին, այլ հանդիսանան արուեստագէտին ճառ
է, ա՛յն հանդիսանանին, որ այդ յորինութիւնը
կը կարգայ ճիշդ այնպէս՝ ինչպէս ճաղում ալիք-
ները կը վերձանէ, ինչպէս երաժշտութիւն մը
ունկնդրելով զայն կը վերադարձէ իր հոսթեան
մէջ կամ զրշազրութեան ինքնուրոյն, ամբողջա-
կան ու անկեղծական անտիներու զեղազիտու-
թիւնը կը հաստատարէ:

Ս. ՆԻՐԱԿԱՅԵԱՆ



՝ՅԱՅԳԱԹԻԹԵՌ՝

(Հեղինակ՝ ԷՆՕ ՍԱՐԱՃԵԱՆ)

Եթանասուական թուականներուն հրապարակ իրան էր Սարսենան վերջերս ընթերցողներուն ներկայացու ընայաքիբնա՝ անուն իր քրեքոյ իրախայրերով, որ բաւական նուաւ է բացարկ մնունդներու կամ քորմաու զբաղեաններու շարունակ նախանկի արակէն, հախաւէ անոր, որ մինչև ընայաքիբնաք հրապարակու ըջ կրիտաուրդ բանաստեղծուհին սալքան ըլլալու է աւելի քան սասանաւայ սահզագործական կենսափորձ ըջ:

Եւ արդէն, նշխինքն անուր իր անգրանիկ դործին՝ ընայաքիբնաք, լուծույն կը կատարէ զխաւիկն հեղինակի ըջ մեղմանայն խոստովանութիւնը՝ մասնելով նամեսա արդիւններով զուարթ բանաստեղծի ըջ ծուխալ տխորտակներ: Հուանորար, այլ իսկ պասանաով, Սարսենան բաւականացած է անգամ իր սասանաւայ զըրական նախափորձերը — ինչպէս պիտի լուէր ինք — մասամբ կատարին մէջ ամփոփելու աշխատանքով, զանեք որոշ զվերամշակուծի ենթարկելի եւք:

Ուրիսուն էլիւրէ կաղնուած ընայաքիբնաք կը բազմանայ հինգ շաբաթեր:— զնկուսի գիշեր, զկամսի խորհուրդ, զնեքաշխարհ, զէլայ, աննեսայ, զՊասիքազման օրագիրք, միայն երեք քերթուած ամփոփող զՊասիքազման օրագիրքը եթէ քերթուածուար կարելի է նկատել: Զարթնականական պարզութիւն ըջ — բայց ո՛ր զարթնականական զըրջմ ըջ — մասնայ լիտուն քերթուաներ, որոնք զմարական հերոք միշտ նեղիմանն է՝ ստորեային ներշնչուած իր զգացական, աղաչանն եւ մարդկային փոքրիկ ազդումներուն լուրջ հիւստան: Պերթուաներ՝ որոնք սուստորակ կը բաւականանան մակերեսային սարսուծումներով եւ կանայք մեղմ կայնկատումներով,

որոնք ստորեային կու գան, բայց չեն բարձրուար ստորեան յաներմացեղ շիկացման զագաթնակէտին:

Այսպէս են Սարսենանի քերթուածները, նախ իսկ յախազարչ նժայիկը քերթազարչին՝ զՋէրօ պակն, զՅճունկիի կառուտուկն, զՍրիուրիւնաք, զՍրիւտսի ալ, որոնք եթէ իրենց վերժուրթամբ որոշ թրթոսացումներ կ'արթնանն ընթերցողին հոգիին մէջ, այնուամենայնիւ, չեն սարսուր խորացման կամ բարդ հոգեմեծակներ զարգասող ներքին յանկումներէ: Եւ լուրջ այն է, որ այս քանի ըջ քերթուածները, իրենց կառուցային թրթուաններով հանգերմ, մեղմ կը թերն ապուսան ստորեայի ըջ շունչը, բանաստեղծականութիւնն ըջ, թէկուզ նուորք եւ զիւրարեկ մայրաուրերով հիւստան:

Այս իսկ պատճառով, յիշուլ կատարներ լուսաստեղծութիւն ըջ կը ներշնչեն, կը մասնեն նասանացման երկնու երկեր, երբ Սարսենան կը ներկայանայ իր զիմպոմային սասանբարան երանգներով եւ սեփական նշայիներով, որոնք, նուկասակ իրենց խոցելի կողմերուն, նուաւ կը մշահան իր էլիեր Եանբարանուղ արմախանակ մեղանշումներէն:

Որովհետեւ նա՛ն՝ ուր բանաստեղծուհին կը սարսուր մասնուած ըջ, այլ խոսքով՝ զպատգամ ըջ փոխանցելու զասանաւոր փորձութիւնն (զէլայ, աննեսայ), զՊուրք, իմ ընկերք, զՀուր սանցուտ, զՄեծ է Հայաստան...), բառերու կամ Եանթ արմախանգերու մշուլին մէջ կը կորսուի ո՛ր միայն բանաստեղծը, այլեւ ի՛նքը՝ բանաստեղծութիւնը: Եւ կը կարգուէր այնպիսի սողեր, որոնք, սասանայակն պարագային, չզուանի ըջ սասաղմ կրնային զուանալ:

Անուասիկ վերջին բաժինը 28 սողեր հալուող զէլայ, աննեսայ՝ սասանաւոր պատգամին:

Չկա՛յ աշխարհի եւ ո՛չ մէկ երկրի
 Մէջ անլի մեծ համոյժ ու անբասմ
 Փամ այն երբ զիսեւ
 Թէ հա՛յ ես, լո՛ւի հայ:
 «Տարբոս» չես երբեք,
 Սփիւռքահայ չես:
 Երեւոմցի՛ հայ,
 Կիլիկեցի՛ հայ,
 Հայաստանցի հայ,
 Հա՛յ, ահմատ՛յ...
 Հայրենիք մէջ:

Արձապատկերի և գեղարվեստական թերթի առաջին հատվածներն են, վատագույն, որ կը խոչընդոտէր քաղաքացիական պայքարը: Ան պարտի գիտակցել այս կարևորական թեման էր մարտը յղելու, զայն թելադրականութեամբ օտարու, օտար ժխտաութեան:

Կերէ մաքրագանալու եւ զերթուածը ամբողջաբար զարգելու մը հաստատելու աշխատանքին:

Կը սիրենք յուսել, որ ինչ Բարսեւան այսուհետեւ իր ուժերը կը կեդրոնացնէր բանաստեղծական իր ուղին որովհետեւ զժամանակին, բայց անհուսափելի աշխատանքին վրայ, վերջ կու տայ յանգիստութեան իր բնորոշ խորհրդանշան, անկի աշխարհութեամբ կը մտնէր բանաստեղծութեանը բանաստեղծութիւն զարմեղ խորութեան ու թելադրականութեան նախապայմանին եւ, սպասած ինքնաբերու եւ հարույր լռելանմանութեան վերջնականագէտ հրատարակելու «Տարածաշրջան» լիւրջութեամբ կը մերժէր բանաստեղծական իր սեփական զիջողական եւ խեղափոխ ինքնաստեղծ հրատարակելու, բառերը շարժասանուածք...»

Ս. ԿԻՐԱՆՅԱՆ

«ՊԱՅԹՈՒՄ ԼՈՒԱԾ ԹՆԹԱՆՕԹՆԵՐՈՒ»
 (Հեղինակ՝ ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ)

Պոչոս Գուբեյան ցարէ հրատարակած է պատմաւեպներու երեք գործեր, «Ափրիկեան ափերու վրայ» (1967), «Ափրիկեան համալուս» (1973) եւ «Անտար մարտի մէջ» (1978) խորագրերով, որոնք աւելորդ կը վերաբերին ափերիկեան ժխտաբան կենցաղական պայմաններուն եւ կը փոխանցեն սեւաստեղծութեան աշխարհին ճաշակով կարգ մը իրապաշտ պատկերացումներ:

«Պայքում լուս թնտնաբերում» իր վերջին գործով, որ լոյս տեսաւ ինչ Կենտրոնի մէջ (1982), Գուբեյան կը նկարագրէ թէ՛ արեւմտեան սոսաններէ եւ թէ՛ ափրիկեան ենթահողման սոսանած այլապէս զննարկ:

Սոյն գործը կը բաղկանայ տասներկու պատմութեանէրէ, — «Պայքում լուս թնտնաբերում» մտք, «Շուքերու կղզին», «Պանդոկ», «Չորս հարիւր յետոս միլիոն», «Միայն թումբը ու փոսի մը կիւնտէյի մէջ», «Կազու Մերիֆ», «Մանուս ու սիրայ արամբը», — Մանու Ֆեֆե, «Խաղի թիքի», «Մըլլուր», «Փլապակներու հետ», — Չորս շարքայիմ օտարէ՛ք եւ «Չորս ափրիկեան (Անտարա մը Մարկոսի)»:

Իր գիտաբար զիջողական մէջ լիւրջ գործի թեման կ'առաջնորդէ օտար ամուսնութեամբ զոյսցած այն պարագաներուն, որոնք զժամանակեան մէկ կարեւոր բանինը կը վերադարձնէ սեւային անկերգանակ գոյակցութեան:

Արդարեւ, հեղինակի տիպարները զուգահեռ են այն իտալիան, որուն յայտնաբերումը չկարեւորում անմեկ այլ իտալացի մարմնաբան իրենց կողակիցներուն մէջ, կը մտնեն ինչ արտասովորական հիասթափութեան, մինչեւ իսկ զիջողական նապաստակեան կամ վրեժառու արարքներու:

Այս հիմնադրամբ, Գուբեյան կը համարէ ու կը ներկայացնէ ասորի ժխտաբաններէ մեծ թիւուն ընտանեկան որոշ պարագաներ, որոնց տարեկանները ինչ մեկնակէտէ այլ զուգահեռ ըլլան՝ կը յանգնեն ինչ կողակիցներին, կարծելով բարկացուցիչ ասորիներ հասարակ թեմային:

